



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 129 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Փնորգ Բաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

**Աշոփ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Փնորգ Դանիելյան** ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Փառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Դավիթ Մելքոնյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Արթուր Չախոյան** ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 06.06.2022թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 6.75 պլամ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արամ Թամազյան, Մարիամ Բաղդասարյան Խոշտանգումը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ .....	3
Արմեն Ղուկասյան Էքստրեմիզմի հասկացությունը և դրա դեմ պայքարի իրավական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում .....	14

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գայանե Մելիքյան Հանձնման ինստիտուտի պատմական զարգացումը և հիմնական սկզբունքները .....	20
Սերգեյ Բերբերյան Խոստման էստոպել սկզբունքի էությունը և հիմնական բնութագիրը .....	28

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սիմոն Սիմոնյան Անձնական տվյալների մշակման անվտանգության հասկացությունը, նշանակությունը և իրավական հիմնախնդիրները .....	35
--	----

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոռ Հովհաննիսյան Ճանապարհային երթևեկության նշանների իրավական բնույթն ու դրանցից պաշտպանվելու իրավական հնարավորությունները (շարունակություն) .....	45
Զավեն Սմբատյան Վարչական մարմինի կողմից վարչական ակտի կրկնակի ուսումնասիրությունը որպես վարչական բողոքի քննության տարր .....	54

## ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժորա Զհանգիրյան Իրավագիտական գնահատական ՀՀ Սահմանադրական դատարանի մարտի 26-ի N ՍԴՈ - 1586 որոշման սահմանադրականության վերաբերյալ (շարունակություն) .....	59
Աննա Ստեփանյան Օրենքների սահմանադրականության խնդիրը հանրապետության նախագահի պաշտոնի թափուր մնալու դեպքում .....	65
Էլինա Գեղամյան, Արման Հակոբջանյան Հանցագործության համար դատապարտված անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման հիմնախնդիրները .....	70
Էդգար Ավետիսյան Տեղեկատվության ազատության իրավունքը որպես կարծիքի արտահայտման ազատության բաղադրատարր .....	78
Նորիկ Շահնազարյան Ժամանակակից սահմանադրության ձևերը .....	84

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկ Շահբազյան Սուբյեկտիվ իրավունքի ժամանակակից հայեցակարգային մոտեցումները .....	88
---	----

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts .....	94
---	----

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները .....	108
---	-----

ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Արդարադատության պետական խորհրդական,  
ՀՀ վաստակավոր իրավաբան,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՐԻԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի հայցորդ

## ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՅԱՏԿԱՆԻՇ

Խոշտանգման հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տրվել են բազմաթիվ ձևակերպումներ:

«Սպանությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի պլենումի 1993 թվականի դեկտեմբերի 2-ի, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի պլենումի 1992 թվականի դեկտեմբերի 22-ի, 1999 թվականի հունվարի 27-ի որոշումների համաձայն՝ **սպանության դեպքում առանձին դաժանությունը կարող է արտահայտվել հանցավորի կողմից խոշտանգումների, տանջանքների և կտտանքների կիրառմամբ, ծաղրուծանակի, անարգանքի ենթարկելու կամ այնպիսի եղանակով, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է տուժողին հատուկ տանջանքներ պատճառելու հետ:** ՌԴ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը օրենսդրական մակարդակով սահմանել է խոշտանգման հասկացությունը, համաձայն որի՝ խոշտանգումը սիստեմատիկաբար ծեծի կամ այլ բռնի գործողությունների միջոցով **ֆիզիկական կամ հոգեկան տառապանքներ պատճառելն է,** եթե այդ գործողությունները անձի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս չեն պատճառել<sup>1</sup>: Նմանատիպ ձևակերպում էր տրված նաև 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքով, որի 119-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողությունն է, որի միջոցով դիտավորյալ կերպով

անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված (առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը) հետևանքները:

Հայոց լեզվի բացատրական բառարանում որպես խոշտանգում են դիտարկվում կամ որպես խոշտանգման հոմանիշներ են օգտագործվում տանջանքը, չարչարանքը, կտտանքը, հոգեկան տառապանք պատճառելը և այլն: Վերջիններս գրականության մեջ դիտվում են որպես խոշտանգման դրսևորման եղանակներ և ընդգրկվում են խոշտանգման բովանդակության մեջ<sup>2</sup>: Վ.Ի. Դալի բացատրական բառարանում խոշտանգումը նույնպես բնութագրվում է որպես «տանջանք, չարչարանք կամ կտտանք», իսկ «խոշտանգել» բայը բացատրվում է որպես դաժան վերաբերմունքի, դաժանորեն տանջանքի, կտտանքի ենթարկել<sup>3</sup>: Ինչպես նկատել է Տ. Գ. Դաուրովան, «հնարավոր չէ զոհին խոշտանգել առանց նրան տանջելու»<sup>4</sup>: Ըստ Ա.Ի. Օժեգովի՝ խոշտանգել նշանակում է դաժանորեն տանջել, այդ թվում՝ ինչպես ֆիզիկապես, այնպես էլ բարոյապես<sup>5</sup>: Հետևաբար, ինչպես նկատել է Ա. Ի. Կորոբեևը, «անհրաժեշտություն չկա խոշտանգման հետ միասին առանձին քննարկել նաև տանջանքը»<sup>6</sup>:

2015 թվականի հուլիսի 8-ի ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում «խոշտանգում» վերտառությամբ

<sup>1</sup> Տե՛ս Бюллетень Верховного Суда РФ, 2002 N10, Бюллетень Верховного Суда РФ. 2004 N7  
<sup>2</sup> Տե՛ս Աղայան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976, Սուքիասյան Ա. Մ. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան 2009:  
<sup>3</sup> Տե՛ս Даль В.И. Толковый словарь живого великорусского языка. М., Т. 2, 1989.  
<sup>4</sup> Տե՛ս Даурова Т.Г. Уголовная ответственность за легкие телесные повреждения. Саратов. 1980. էջ 43 :  
<sup>5</sup> Տե՛ս Ожегов С.И. Словарь русского языка.М. 1990, էջ 258, Комментарий к уголовному кодексу Российской Федерации в 4 томах, Том 2. Особенная часть, ответственный редактор В.М. Лебедев, М. 2020, ст. 75.  
<sup>6</sup> Տե՛ս Полный курс уголовного права под редакцией А.И. Коробеева. СПб. 2008, Том 2, ст. 341.

119-րդ հոդվածը վերանվանվեց որպես «ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» վերտառությամբ հոդվածի, իսկ խոշտանգում անվանումը վերապահվեց պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ գլխի տակ ընդունված նոր՝ 309.1 հոդվածին: Փոփոխությունը պայմանավորված էր ՄԱԿ-ի՝ «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին հոդվածում ամրագրված «խոշտանգում» հասկացության ազգային օրենսդրության մեջ իմպլեմենտացիայով<sup>7</sup>: Արդյունքում, փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված հանցակազմի և ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները նույնացվեցին, այն է՝ անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, սակայն ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված հանցակազմի, ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածում տրված սահմանումը իր մեջ կրեց ոչ միայն հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները, այլև օբյեկտի, սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի հատկանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը հանցակազմի տակ հասկացվում էր նույն՝ անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են նույն օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի համաձայն՝ **խոշտանգումը՝** պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի **դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ**

**հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝** այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Այսինքն, եթե **ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի դեպքում հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված հանցագործության դեպքում սուբյեկտը՝ հատուկ է այն կարող է լինել պաշտոնատար անձը կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձը:** ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածը տարբերվում է նաև իր կոնկրետ, որոշակի նպատակով (խոստովանություն, տեղեկություններ ստանալը, ահաբեկելը և այլն):

Պայմանավորված միջազգային փաստաթղթերում խոշտանգմանը տրված բնութագրով՝ ՌԴ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի ծանոթագրությունում ամրագրվեց, որ նշված հոդվածում կամ ՌԴ քրեական օրենսգրքի այլ հոդվածներում խոշտանգման տակ հասկացվում է անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանքներ պատճառելը, նրան իր կամքին հակառակ վկայություն տալուն կամ այլ գործողություններ կատարելուն հարկադրելու, ինչպես նաև պատժի և այլ նպատակներով:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքը ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների թվին է դասել ֆիզիկական կամ հոգեկան ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, իսկ հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների թվին է դասել խոշտանգումը: Համաձայն նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի՝ ֆիզիկական ներգործությունը այդ հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելն է,

<sup>7</sup> Տե՛ս ՄԱԿ-ի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի «խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիա:

եթե չեն առաջացրել քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով (առողջությանը թեթև վնաս պատճառելը) նախատեսված հետևանքները: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը այդ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է, եթե դա չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ (առողջությանը ծանր վնաս պատճառելը) կամ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ (խոշտանգումը) հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները: Համաձայն 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի՝ խոշտանգումը այդ պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդամամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ, որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Համադրելով 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված՝ ծեծը, քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված՝ խոշտանգումը հանցագործությունների հիմնական հանցակազմերում տրված հասկացությունները 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանված՝ ֆիզիկական ներգործությունը, նույն օրենսգրքի

196-րդ հոդվածով սահմանված՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպես նաև քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով սահմանված՝ խոշտանգումը հանցագործությունների հիմնական հանցակազմերում տրված հասկացությունները, դժվար չէ նկատել, որ նրանցում էական տարբերություններ չկան: Ինչպես 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի դեպքում, այնպես էլ 2021 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ և 196-րդ հոդվածների դեպքում հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, իսկ 2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված հանցագործության և 2021 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով սահմանված հանցագործության դեպքում հանցագործության սուբյեկտը հատուկ է: Չնայած նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված և համապատասխան մեկնաբանման կարիք ունեցող դրույթի համաձայն՝ խոշտանգում է համարվում նաև նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը, բազմաթիվ հետազոտողներ վկայում են, որ օրենսդիրը քրեական օրենսգրքում նույնությամբ ընդունելով խոշտանգման հասկացության կոնվենցիոն ամրագրումները, դրանով իսկ անհիմն կերպով նեղացրել է խոշտանգում հասկացության բովանդակությունը<sup>8</sup>:

Չնայած «Կոնվենցիայի» 1-ին հոդվածի 2-րդ մասը ուղղակիորեն սահմանում է, որ «սույն հոդվածը չի խոչընդոտում միջազգային որևէ փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել ավելի լայն կիրառման դրույթներ», մեր կարծիքով այստեղ խոսքը վերաբերում է ընդամենը կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի շրջանակների ընդլայնմանը:

**Ընդհանրապես, ինչպես բացատրական բոլոր բառարաններում, այնպես էլ հանրային ընկալման մեջ, խոշտանգումն ընկալվում է շատ ավելի լայն և խորն իմաստով, քան հատուկ սուբյեկտի կողմից այն թույլ տալու կոնվենցիայում և օրենքում ամրագրված սահ-**

<sup>8</sup> St' u Artjushina O. B. Квалификация убийства, совершенного с особой жестокостью. Казань 2003 էջ 29, Понкратов В. Ответственность за пытку в уголовном законодательстве Российской Федерации// Уголовное право 2005 N4, ст. 39.

**մանափակ դեպքերը: Մեր կարծիքով՝ տվյալ հասկացության մեջ առաջնայինը ոչ թե հանցագործության սուբյեկտն է կամ նպատակը այլ՝ արարքը, նրա բուն բնույթը, հանգամանքները, կատարման եղանակը, որը հաճախ հատուկ պատրաստված կամ ընտրված միջոցներով և գործիքներով տուժողին գիտակցաբար անասելի տանջանք, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելն է:**

Պատահական չէ, որ խոշտանգումը փոխաբերական իմաստով օգտագործվել է նաև որպես տանջամահ անել, տանջահար անել, հոգին հանել, կաշին հանել և նմանատիպ այլ համեմատություններով: Դեռևս 1944 թվականին հրատարակած հայերեն բացատրական բառարանում Ստեփան Մալխասյանցը նկատել է, որ «Ֆաշիստները տանջանքի զարհուրելի գործիքներով խոշտանգել են անմեղ մարդկանց: Զոհերն աղաչում էին իրենց սպանել, բայց չխոշտանգել<sup>9</sup>»:

ՄԱԿ-ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի (CAT) սահմանման համաձայն՝ արարքը խոշտանգում ճանաչելու համար օբյեկտիվ կողմից անհրաժեշտ է անձին «սուր ցավ կամ տառապանք» պատճառելը: Ակնհայտ է, որ հնարավոր չէ օբյեկտիվ չափման ենթարկել ցավի կամ տառապանքի ծանրությունը, քանի որ դա ցանկացած դեպքում կախված է նաև տուժողի սուբյեկտիվ զգացողությունից, անձի ֆիզիկական և հոգեկան վիճակից, ցավի նկատմամբ նրա հանդուրժողականության աստիճանից: Այսինքն՝ ֆիզիկական ցավի կամ տառապանքի սահմանում նույնպես տրված չէ:

**Օբյեկտիվ կողմից խոշտանգումը տարբեր առարկաների և գործոնների ներգործությամբ անձին դիտավորությամբ ֆիզիկական ցավ և (կամ) հոգեկան տառապանք պատճառելն է նրան պարբերաբար ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնի գործողությունների կատարմամբ:** Այլ բռնի գործողություններ են համարվում կսմթելը, պոկոտելը, փետրելը, դաղելը, մոմռացնելը, ձաղկելը, խարազանելը,

տուժողի մարմնի վրա կտրվածքներ, այրվածքներ անելը, սուր կամ բույս առարկաներով տուժողին առանձին տանջանք և տառապանք պատճառող բազմաթիվ այդ թվում՝ ոչ մեծ վնասվածքներ պատճառելը և այլն:

Փաստորեն, օբյեկտիվ կողմից խոշտանգումը պայմանավորված է անձին պարբերաբար ծեծի ենթարկելու կամ նրա նկատմամբ այլ բռնի գործողությունների կատարմամբ: Գ.Ն. Բորզենկովի կարծիքով՝ ժամանակի տևական ընդհատումներով նույն տուժողին կրկին անգամ ծեծի ենթարկելը չի դիտարկվում որպես պարբերաբար ծեծի ենթարկելու եղանակով կատարված խոշտանգում<sup>10</sup>: Համաձայն ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանությունների՝ ի տարբերություն տուժողին պարբերաբար ծեծի ենթարկելու եղանակի, որի տակ քրեաիրավական առումով հասկացվում է առնվազն ծեծի ենթարկելու ոչ պակաս երեք դեպք, որոնցից միմյանց հաջորդող ոչ պակաս երեք դրվագով չեն անցել ծեծի ենթարկելու համար քրեական հետապնդում իրականացնելու վաղեմության ժամկետները, խոշտանգման այլ բռնի գործողությունների կատարման եղանակը չի նախատեսում այլ բռնի գործողությունների կատարման պարբերական բնույթ: Նման դեպքում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքների պատճառումը կարող է հասցվել նաև այլ բռնի գործողությունների եզակի կատարման ժամանակ: Սակայն խոշտանգման հանցակազմի առկայության համար այս դեպքում պահանջվում է արարքի մեծ ինտենսիվություն և տևականություն<sup>11</sup>: Մասնավորապես, այդպիսիք են՝ սննդից, ջրից, ջերմությունից տևականորեն զրկելը, առողջության համար վնասակար պայմաններում պահելը, ինչպես նաև բազմաթիվ անգամ կամ երկարատև ցավ պատճառելու հետ կապված այլ գործողությունների կատարումը:

Խոշտանգման հետևանքներն են անձի համեմատաբար տևական, տանջալի, ֆիզիկական կամ հոգեկան ցավը կամ տառապանքը, որի պարզումը դուրս է դատաբժշկական փոր-

<sup>9</sup> Տե՛ս Ստեփան Մալխասյանց Հայերեն բացատրական բառարան, Երևան 1944թ.:

<sup>10</sup> Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации, 12-е издание. Ответственный редактор В.М. Лебедев.М. 2012, ст. 404-406.

<sup>11</sup> Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации в 4 томах, Том 2. Особенная часть, ответственный редактор В.М. Лебедев, М. 2020, ст. 74-75.

ծագետի իրավասության շրջանակից և վերապահված է իրավակիրառ մարմինների իրավասությանը:

Ակնհայտ է նաև, որ ցանկացած խոշտանգում իր մեջ կրում է նաև անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք: Իր հերթին անմարդկային վերաբերմունքը իր մեջ կրում է նաև նվաստացուցիչ բնույթ: Անմարդկային վերաբերմունք հասկացությունը ներառում է առնվազն այն վերաբերմունքը, որը դիտավորյալ պատճառում է ծանր հոգեկան կամ ֆիզիկական տառապանք: Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի տարբերակումը հիմնականում պայմանավորված է պատճառված տառապանքի ծանրության աստիճանից: Հարկ է նկատել, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը և խոշտանգման դեմ պայքարի հանձնաժողովը չեն տարբերակում «դաժան» և «անմարդկային» բառերը իմաստային առումով և նրանք օգտագործվում են որպես հոմանիշներ: Փաստորեն, **խոշտանգումը, ինչպես և տանջանքը, անարգանքը, ծաղրուծանակը, մարդկային արժանապատվության ստորացումը, սադիզմը և նմանատիպ այլ դրսևորումները իրենց մեջ կրում են դաժանության, այդ թվում և առանձին դաժանության հատկանիշներ:**

ՄԻԵԴ-ը որպես այդպիսի անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի օրինակ է արձանագրել Միշա Հարությունյանի գործով՝ ՌՌ աշխատակիցների կողմից գործով անցնող անձանց ռետինե մահակներով հարվածներ հասցնելու, հարթաշուրթերով անձանց եղունգները սեղմելու, հարկադրաբար նրանց կոշիկները հանելու, ծնկած վիճակում պահելու և մահակներով վերջիններիս ոտնթաթերի տակերին հարվածներ հասցնելու փաստերը<sup>12</sup>:

**Այսպիսով՝ խոշտանգումը բռնության տեսակ է,** որն ինչպես սահմանել է մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը **վատ վերաբերմունքի ծայրահեղ դրսևորում է,** իսկ անձին խոշտանգելու կամ նրա նկատմամբ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը բացարձակ է և միջազգային իրավունքի իմպերատիվ նորմ է, որից որևէ շեղում որևէ պարագայում արգելվում է:

Փաստորեն, **ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը կոնկրետ եղանակով և կոնկրետ իրավիճակում օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է խոշտանգման հատկանիշ անկախ հոդվածի վերտառությունից, այն քրեական օրենսգրքի այս կամ այն գլխում կամ հոդվածում ամրագրված լինելուց և կոնկրետ դեպքում իր մեջ կրում է առանձին դաժանության դրսևորում և որի պայմաններում կատարված սպանությունը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:**

Այսինքն՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի տեսանկյունից առանձին դաժանությունը կարող է դրսևորվել խոշտանգման արդյունքում տուժողին կամ նրա մերձավորին առանձնակի ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով: Առանձին դաժանությունը դրսևորվում է նաև այն դեպքերում, երբ խոշտանգման բնույթ կրող գործողությունների արդյունքում տուժողը որոշակի հանգամանքներից ելնելով, այդ թվում անգիտակից վիճակի բերված լինելու հետևանքով, զգալիորեն կամ ամբողջովին կորցրած է լինում ցավային նման զգացողությունը, բայց այդպիսիք ընկալվում և կրում են նրա մերձավորները:

Հետևաբար, **խոշտանգումը, ինչպես և տանջանքը, ծաղրուծանակը, մարդկային արժանապատվության ստորացումը, անարգանքը, սադիզմը և նմանատիպ այլ դրսևորումները իրենց մեջ կրում են դաժանության հատկանիշներ՝ կապված տուժողին տառապանք պատճառելու հետ, որը բովանդակային ճշգրտում է ստանում իրավակիրառի կողմից միայն գործի կոնկրետ փաստական հանգամանքերից ելնելով:** Հետևաբար, սպանության այն դեպքերում, երբ խոշտանգման և մյուս համասեռ գործողությունների արդյունքում տուժողին կամ նրա մերձավորին պատճառվել է ֆիզիկական ուժեղ ցավ և (կամ) հոգեկան ուժեղ տառապանք, հանցավորի արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Փաստորեն, խոշտանգումը ֆիզիկական, հոգեբանական, ինչպես նաև համակարգված

<sup>12</sup> Տե՛ս Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ-ի 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ:

(խառը) բռնության տեսակ է, անմարդկային կամ նվաստացուցիչ վատ վերաբերմունքի ծայրահեղ դրսևորում, որի հետևանքը առանձին դաժանության դրսևորման դեպքում տուժողին ֆիզիկական և (կամ) հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք պատճառելն է:

**Հետևաբար, սպանության դեպքում օբյեկտիվ կողմից առանձին դաժանության դրսևորման հատկանիշ է հանդիսանում անձին կյանքից զրկելուց առաջ կամ սպանության ընթացքում նրան դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը: Այնուհանդերձ, բոլոր դեպքերում, արարքի ճիշտ որակման համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել սպանության դիտավորության ծագման պահը և նրա դրսևորման ձևը, որով էլ պայմանավորված՝ հանցավորի արարքը մի դեպքում կարող է որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն, մեկ այլ դեպքում՝ ոչ:**

Վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել՝

1. Այն դեպքերում, երբ անձին սպանելու դիտավորությունը ծագել է նրան դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուց անմիջապես առաջ, ապա հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

2. Այն դեպքերում, երբ սպանության դիտավորությունը ծագել է անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու ընթացքում՝ հանցավորի արարքը նույնպես ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Տվյալ դեպքում սպանությունը կատարվում է ոչ թե անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուց հետո նոր ծագած դիտավորությամբ, այլ անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու ընթացքում ծագած դիտավորությամբ:

3. Այն դեպքերում, երբ անձին սպանելու դիտավորությունը ծագել է անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու ընթացքում, բայց իրականացվել

է դրանից որոշ ժամանակ անց, հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Տվյալ դեպքում սպանությունը կատարվում է ոչ թե նոր ծագած դիտավորությամբ, այլ այն տուժողին արդեն իսկ երկարատև ուժեղ տառապանքներ պատճառելուն ուղղված գործողությունների արդյունք է:

4. Այն դեպքերում, երբ սպանության կատարման ժամանակ անձի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին տանջանքներ և տառապանքներ պատճառելուն, սակայն հանգամանքների բերումով այդպիսիք վրա են հասել ոչ թե անձի կյանքի նկատմամբ ոտնձգության դրսևորման ընթացքում, այլ դրանից տևական ժամանակ անց, ապա անկախ դրանց առաջացման պահից կամ տևողությունից՝ տուժողի մահվան դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

5. Այն իրավիճակում, երբ տուժողի սպանությանն ուղղված հանցավորի գործողությունները չեն կրել առանձին դաժանություն, սակայն հանցավորի առանձին դաժանությունը դրսևորվել է արդեն դրանից հետո՝ մինչև մահվան վրա հասնելը, ապա հանցավորի արարքը նույնպես ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Օրինակ՝ դանակի հարվածով տուժողին վնասվածք պատճառելուց հետո տուժողին օգնություն ցույց տալուն խոչընդոտելը, որի արդյունքում անձը մահացել է արյան մեծ քանակի կորստի պատճառով, ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

6. Այն դեպքերում, երբ սպանության դիտավորությունը ծագել է անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուց հետո, ապա արարքը ենթակա է որակման սպանության և անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հանցագործությունների համակցությամբ: Այսինքն՝ այն դեպքերում, երբ սպանությանը նախորդող գործողությունները, այդ թվում և խոշտանգումը անմիջականորեն կապված չեն նոր ծագած դիտավորությամբ կատարված սպանության հետ, ապա խոշտանգումը տվյալ դեպքում չի կարող



հանդիսանալ սպանության հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ: Հետևաբար, նման իրավիճակում այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, հանցավորի արարքը ենթակա է որակման՝ որպես անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու և հասարակ սպանության հանցագործությունների համակցությամբ, քանի որ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը ընդգրկված չի ավարտված սպանության հանցակազմի մեջ:

7. Այն դեպքերում, երբ հանցավորը խոշտանգում է տուժողին որևէ տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով, կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, որի արդյունքում չջանկանալով, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահը, ենթակա է որակման՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Տվյալ դեպքում առկա է անուղղակի դիտավորությամբ առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Նման կարծիքի են նաև Ս.Վ. Բորոդինը և այլք<sup>13</sup>: Տ.Վորոբյովան և Ա. Սանտալովը նույնպես գտնում են, որ սպանությունը համարվում է առանձին դաժանությամբ կատարված, եթե մինչև սպանությանը նախորդող պահը կամ սպանության կատարման ընթացքում տուժողը ենթարկվել է տանջանքների կամ խոշտանգումների կամ նրան պատճառվել են առանձնակի տառապանքներ<sup>14</sup>: Ըստ Ա.Ն.Պոպովի՝ խոշտանգումների շարքին դասվող գործողությունների մի մասը կազմում են առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ: Փաստորեն, սպանությունը համարվում է առանձին դաժանությամբ կատարված, երբ խոշտանգումը եղել է սպանության կատարման եղանակ, կամ հետագայում վերաճել է սպանության: Այսինքն՝ խոշտանգումը ոչ միայն սպանության կատարման եղանակ է, այլև հանցագործության կատարման իրավիճակի բնութա-

գիր<sup>15</sup>: Մենք նույնպես այն կարծիքին ենք, որ տանջանքներն ու խոշտանգումը կարող են կիրառվել ոչ միայն տուժողին կյանքից զրկելու ընթացքում, այլև դրանից անմիջապես առաջ: Մահը կարող է վրա հասնել ինչպես խոշտանգման արդյունքում, այնպես էլ տուժողին տանջանքների ենթարկելու ընթացքում՝ եզրափակող մեկ մահացու հարվածով:

Փաստորեն, հանցավորի արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար պետք է որ հանցավորի կողմից առանձին դաժանությունը դրսևորվի սպանությունից անմիջապես առաջ կամ նրա կատարման ընթացքում, իսկ սպանությունից տևական ժամանակ առաջ կամ սպանությունից հետո կատարված և սպանության հետ կապ չունեցող, հանցավորի միասնական դիտավորությամբ չընդգրկված հանցավորի կողմից դրսևորված բռնությունն ու դաժանությունը չեն կարող հանդիսանալ առանձին դաժանությամբ կատարված սպանության հատկանիշ: Այսինքն՝ այն դեպքերում, երբ սպանությունից առաջ կամ սպանության ընթացքում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված չի եղել տուժողին առանձին տանջանքներ կամ տառապանք պատճառելը, հանցավորի արարքը չի կարող որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

Ինչպես նկատել ենք, տանջանքը, անարգանքը, ծաղրուծանակը, սադիզմը նույնպես իրենց մեջ կրում են դաժանության հատկանիշներ, իսկ առանձին դեպքերում՝ այդ թվում և ամբողջության մեջ, ներառում են առանձին դաժանության հատկանիշներ՝ բնութագրելով հանցավորի և հանցավոր արարքի առավել վտանգավոր բնույթն ու ծանրության աստիճանը: Տանջանքի, տառապանքի, ծաղրուծանակի, սադիզմի դրսևորումների հետ կապված անդրադարձ է կատարվել առանձին դաժանության հասկացությունը, առանձին դաժանությունը որպես գնահատողական կատեգորիա, առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հասկա-

<sup>13</sup> Տե՛ս Бородин С.В. Преступления против жизни. М. 1999, ст. 111:  
<sup>14</sup> Տե՛ս Воробьева Т., Санталов А. Квалификация убийства с особой жестокостью/ Советская юстиция. 1986, N11, ст. 12.  
<sup>15</sup> Տե՛ս Попов А.Н. Убийства, совершаемые с особой жестокостью, а также общеопасным способом. СПб. ст. 87, Комментарий к уголовному кодексу Российской Федерации в 4 томах. Особенная часть. Ответственный редактор В.М. Лебедев, М. 2020 Том 2, ст. 34-35.

ցությունը, հատկանիշները և քրեաիրավական բնութագիրը թեմաների քննարկման ժամանակ:

Ինչպես նկատել ենք, տուժողին տանջելը, անարգելը, ստորացնելը, ծաղրուծանակի ենթարկելը կամ մոտալուտ մահվան գիտակցմամբ պայմանավորված այլ նվաստացումները և դրանց արդյունքում նրան ուժեղ ֆիզիկական և (կամ) հոգեկան տառապանք պատճառելը առանձին դաժանության դրսևորումներ են, որտեղ թե սպանության կատարման եղանակը, և թե հանցավորի առանձին դաժանությունը վկայող այլ հանգամանքները կարող են համատեղվել և զուգորդվել:

Ինչպես նշեցինք՝ առանձին դաժանությամբ կատարված սպանության եղանակ է նաև անձին անարգմամբ կատարված սպանությունը: Տևական ժամանակ առանձին դաժանությամբ կատարված սպանություն է համարվել նաև դիակն անարգելը: Դիակի անդամահատման և ոչնչացման բոլոր դեպքերը համարվել են որպես առանձին դաժանություն և սպանությունից հետո դիակի անդամահատման և ոչնչացման բոլոր դեպքերը դիտվել են որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն: Հետագայում, դատական բարձրագույն ատյանների որոշումների արդյունքում, արվեցին որոշակի սահմանափակումներ, որոնց համաձայն հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակի ոչնչացումը կամ անդամահատումը այլևս չէր կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատական բարձրագույն ատյանների մի շարք որոշումների պարզաբանումներով նշվեցին, որ դիակի անարգումն ինքնին չի կարող համարվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության հատկանիշ, եթե նման դեպքերում չկան այլ տվյալներ տուժողի սպանությունից առաջ կամ սպանության կատարման ընթացքում հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին: Դատական բարձրագույն ատյանի որոշումների համաձայն նման դեպքերում արարքը ենթակա է որակման սպանության և դիակն անարգելու հոդվածների համակցությամբ: Փաստորեն, տևական ժամանակ անց

դիակի անարգումը դադարեց որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության հատկանիշ համարվել, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են տուժողին սպանությունից առաջ կամ սպանության կատարման ընթացքում հանցավորի դրսևորած առանձին դաժանության մասին վկայող տվյալներ: Այսինքն՝ այս հարցում դատական պրակտիկան տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մոտեցումներ, իսկ ավելի առարկայական այն կրել է հետևյալ պատկերը: Այսպես՝ «Դիտավորյալ սպանությունների գործերով դատական պրակտիկայում ծագած որոշ հարցերի մասին» ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի 1963 թվականի հուլիսի 3-ի որոշման համաձայն՝ առանձին դաժանությունը կարող էր դրսևորվել նաև դիակի անարգմամբ: Նույն մարմնի 1975 թվականի հուլիսի 27-ի «Դիտավորյալ սպանությունների գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման համաձայն՝ առանձին դաժանությունը կարող էր արտահայտվել դիակի անարգմամբ, բացառությամբ հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակը ոչնչացնելու կամ մասնատելու դեպքերի: Նույն բանը այլ ձևակերպմամբ արձանագրվեց նաև ՌԴ գերագույն դատարանի պլենումի 1992 թվականի դեկտեմբերի 22-ի, ինչպես նաև ՀՀ գերագույն դատարանի պլենումի 1993 թվականի դեկտեմբերի 2-ի «Դիտավորյալ սպանությունների գործերով դատական պրակտիկայի մասին» նույնանուն որոշումներով, համաձայն որոնց հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակը ոչնչացնելը կամ մասնատելը չեն կարող հիմք հանդիսանալ արարքն առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար:

«Սպանությունների վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» ՌԴ գերագույն դատարանի պլենումի 1999 թվականի հունվարի 27-ի որոշման համաձայն՝ դիակի անարգումն ինքնին չի կարող գնահատվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն, և եթե նման դեպքերում չկան այլ տվյալներ սպանությունից առաջ կամ սպանության կատարման ընթացքում հանցավորի կողմից դրսևորած առանձին դաժանության մասին, ապա արարքը ենթակա է որակման սպանության հոդվածի համապատասխան մասով

և դիակն անարգելու հողվածի համակցությամբ: Նույն որոշման մեջ նշվել է նաև, որ հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակի ոչնչացումը կամ մասնատումը չի կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու համար:

Բոլոր դեպքերում՝ անցած ավելի քան հիսուն տարիների ընթացքում քննչական և դատական պրակտիկան դիակի անարգմամբ ուղեկցվող սպանության դեպքերին տվել է ոչ միատեսակ և ոչ նույնական որակում: Իրավաբանական գրականության մեջ հարցին առնչվող խնդիրներին նույնպես տրվել է տարատեսակ մեկնաբանություններ: Այսպես՝ Լ.Ա. Անդրևան, Պ.Յու. Կոնստանտինովը գտնում են, որ դիակի անդամահատումը կամ ոչնչացումը ոչ մի դեպքում չի կարող վկայել սպանության առանձին դաժանության մասին, քանի որ ինչպես էլ դրսևորվի անարգանքը, դիակը չի կարող ոչ մի տառապանք կրել<sup>16</sup>: Ջ.Ա. Նեգնամովան. Ա.Ի. Իգնատովը նույնպես գտնում են, որ նման դեպքերում արարքը պետք է որակվի սպանության և դիակն անարգելու հանցագործությունների համակցությամբ<sup>17</sup>: Ն.Ի. Ջագորոդնիկովի և այլոց կարծիքով՝ դիակի անդամահատումը առանձին դաժանության դրսևորում է<sup>18</sup>: Վ.Վ. Ստաշիսի, Մ.Ի. Բաժանովի կարծիքով՝ սպանությունից հետո դիակի անարգումը պետք է համարել որպես առանձին դաժանության դրսևորում, եթե առկա չէ սպանությունը թաքցնելու նպատակ<sup>19</sup>:

Մեր կարծիքով՝ տուժողի առանձին տառապանքներ չզգալը նշանակություն չունի արարքն առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու հարցում և որ առանձին դաժանության համար բավարար են հանցագործության կատարման առանձին դաժան եղանակը և հանցավորի դիտավորությունը, որը կարող է դրսևորվել նաև տուժողի մերձավորների նկատմամբ՝ անուղղակի դիտավորու-

թյամբ: Հետևաբար, եթե դիակի անդամահատմամբ կամ ծաղրուծանակի ենթարկելով (ականջները, քիթը, մարմնի մասերը կտրելը, աչքերը հանելը և այլն) հանցավորը հետապնդել է կամ գիտակցաբար թույլ է տվել տուժողի մերձավորների նկատմամբ լրացուցիչ, հավելյալ տառապանք, նույնպես կարող է համարվել առանձին դաժանության դրսևորում, առավել ևս, երբ դրանք հաճախ դրսևորվում են նախապես ծագած դիտավորությամբ և առանց հանցագործությունը թաքցնելու նպատակի<sup>20</sup>:

Գործող օրենսդրական կարգավորումների արդյունքում կարծում ենք, որ.

1. Այն դեպքերում, երբ սպանությունը կատարելիս հանցավորը չի դրսևորել առանձին դաժանություն և սպանությունից հետո է սկսել անարգել դիակը, ապա արարքը չի կարող որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

2. Այն դեպքում, երբ սպանության կատարման ժամանակ հանցավորի կողմից դրսևորվել է առանձին դաժանություն, որից հետո կատարվել է դիակի անարգում, արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն և դիակի անարգում:

3. Այն դեպքում, երբ սպանության կատարման ընթացքում հանցավորը չի մանալով տուժողի արդեն իսկ մահացած լինելու մասին, առանձին դաժանությամբ սպանություն կատարելու դիտավորությամբ, գիտակցաբար, արդեն իսկ մահացածին հասցրել է բազմաթիվ վնասվածքներ, կտրել ականջները, քիթը, հանել աչքերը և այլն, ապա հանցավորի արարքը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:

4. Այն դեպքերում, երբ հանցավորը սխալմամբ կարծել է, թե տուժողը մահացել է, նոր միայն անարգել է դիակը, ապա արարքը չի կարող որակվել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն, եթե մինչ այդ

<sup>16</sup> Sեն Андреева Л.А., Константинов П.Ю. Влияние жестокости преступного поведения на уголовную ответственность. СПб., 2002. ст. 132.

<sup>17</sup> Sեն Уголовное право. Особенная часть., Учебник для вузов/ под ред. И. Я. Козаченко, З.А. Незнамовой, К.П. Новоселова. М., 2001. ст. 623.

<sup>18</sup> Sեն Загородников Н.И. Преступления против жизни по советскому уголовному праву. М. 1961. ст. 177.

<sup>19</sup> Sեն Сташис В.В., Бажанов М.И. Преступления против личности в УК УССР и судебной практике. Харьков 1987. ст. 36.

<sup>20</sup> Sեն Թամազյան Ա.Ա. Սպանությունների որակման հիմնախնդիրները, Երևան 2011, ց. 152:

հանցավորի գործողություններում առանձին դաժանություն չի դրսևորվել:

Փաստորեն, դիակն անարգելու հանցագործության քրեաիրավական գնահատման պատմական ընթացքում, արդեն իսկ շուրջ կես դար է ինչ Հայաստանի, Ռուսաստանի և այլ երկրների դատական բարձրագույն ատյանների որոշումների համաձայն, հանցագործությունը թաքցնելու նպատակով դիակի մասնատումը կամ ոչնչացումը չի համարվում առանձին դաժանությամբ կատարված սպանություն, եթե սպանությունից առաջ կամ դրա կատարման ընթացքում չկան հանցավորի կողմից առանձին դաժանության դրսևորման հատկանիշներ:

**Մեր կարծիքով՝ սպանությունից հետո դիակի անարգումը կարող է դիտարկվել որպես սպանության հանցակազմի սուբյեկտիվ կողմը բացահայտող, ինչպես նաև օբյեկտիվ կողմից հանցագործության կատարման իրավիճակը բնութագրող հանգամանք և post factum նրա և հանցագործության կատարման եղանակի համակցված վերլուծությունը կարող է ուղղորդող նշանակություն ունենալ հանցավորի դիտավորության վերջնական բացահայտման և գնահատման հարցում՝ կապված հանցավորի արարքում առանձին դաժանության առկայության կամ բացակայության մասին:**

Այս առումով հետաքրքրական է Ս.-ի վերաբերյալ քրեական գործով ՌԴ գերագույն դատարանի որոշումը, որով դատական բարձրագույն ատյանը վերլուծելով Ս.-ի կողմից Պ.-ին բուխ և սուր կտրող առարկաներով ավելի քան 25 հարված հասցնելու և սպանելու վերաբերյալ գործով կատարած հանցագործությունը թաքցնելու նպատակով Պ.-ի կողմից տուժողի դիակը ավտոմեքենային կապված վիճակում 5-7 կիլոմետր քարշ տալու և ճանապարհի կողնակին թողնելու հանգամանքը, հանգել է հետևության, որ չնայած հանցավորի արարքում առկա է եղել կատարված սպանությունը թաքցնելու նպատակ, սակայն դրա կատարման եղանակը նույնպես վկայում է այն մասին, որ տուժողին կյանքից զրկելու ընթացքում Ս.-ն ցանկացել է Պ.-ին պատճառել առանձին տան-

ջանք և տառապանք և վերացնելով Ս.-ի արարքում առանձին դաժանության բացակայության վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատական ակտը, Ս.-ին դատապարտել է առանձին դաժանությամբ կատարված սպանության համար<sup>21</sup>:

Փաստորեն, մեկ անգամ ևս փաստվում է, որ հանցագործության կատարման եղանակի և գործի այլ փաստական հանգամանքների մանրամասն ուսումնասիրումն ու վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն ինչպես արարքի հանրորեն վտանգավորության աստիճանի բացահայտման ու որոշման, այնպես էլ անձի բնութագրման առումով:

Կարծում ենք՝ տրված լուծումն ընդունելի է, առավել ևս, երբ տուժողի առանձին տառապանքներ չզգալը նշանակություն չունի արարքը առանձին դաժանությամբ կատարված սպանություն որակելու հարցում, և որ առանձին դաժանությունը կարող է դրսևորվել նաև տուժողի մերձավորների նկատմամբ, այդ թվում՝ անուղղակի դիտավորությամբ: Բնական է, որ դիակի անդամահատմամբ կամ ծաղրուծանակի ենթարկելով (քիթը, ականջները, մարմնի մասերը կտրելը, աչքերը հանելը և այլն) հանցավորը նախատեսում է, ցանկանում, գիտակցում կամ գիտակցաբար թույլ տալիս տուժողի մերձավորներին լրացուցիչ, հավելյալ վիշտ ու տառապանք, հաճախ նաև՝ նախապես ծագած դիտավորությամբ:

Դիակի անարգման քրեաիրավական վերլուծության յուրահատուկ օրինակ կարող է հանդիսանալ Ս.Երեմյանի կողմից Ա.Հունանյանի սպանության վերաբերյալ գործը: Համաձայն դատական ակտի՝ Երեմյանը դրսի կողմից կողպելով սեփական տան մուտքի դուռը՝ մոտ երկու ժամ իր տանը միայնակ, մահամերձ և անօգնական վիճակում գտնվող Ա.Հունանյանին որևէ օգնություն չցուցաբերելով, ցանկացել է նրա մահը, իսկ այնուհետև, հավաստիանալով վերջինիս մահվան մեջ, կատարած սպանությանն իր առնչությունը հաստատող հետքերը թաքցնելու դիտավորությամբ, վերջինիս դիակը սղոց-դանակով և կացնի գործադրմամբ որովայնի հատվածից մասնատել է երկու մասի, առանձին առանձին փաթեթավորել, տեղափո-

<sup>21</sup> Сги Д.В. Пешков. Частные случаи убийства с особой жестокостью. Журнал стр. 207-212.

խել և թաքցրել է տանը կից հողատարածքում<sup>22</sup>:

Ինչ վերաբերում է 2003 թվականի քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածում ամրագրված դիակն անարգելու հանցակազմին և դրանում սահմանված տուգանք կամ առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանք պատժատեսակին, ապա կարծում ենք վերջինս եթե ոչ զավեշտալի, ապա խիստ անհամաչափ է նախատեսված հանցավոր արարքի բնույթին ու վտանգավորությանը: Նույնը վերաբերում է և 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով տրված կարգավորումներին, որքանով որ մահացածների մարմինն անարգանքի ենթարկելը ոչ այլ ինչ է, քան բացառիկ անպատկառություն և անբարոյականություն, որը վկայում է հանցավորի առանձին անգթության, անմարդկայնության և դաժանության մասին:

Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես 2003 թվականի այնպես էլ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերով դիակն անարգանքի ենթարկելը դիտարկվել է որպես հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն և դիակն անարգանքի ենթարկելու զուտ փաստը չի համարվել որպես առանձին դաժանության հատկանիշ, որով իսկ ինչպես օրենսդրի, այնպես էլ դատական պրակտիկայի կողմից «արգելափակվել է» այն որպես առանձին դաժանություն

դիտարկելը<sup>23</sup>, հիմք ընդունելով գործող օրենսդրական կարգավորումները և դրանց շրջանակներում հնարավոր լուծումների սահմանները, միաժամանակ և խնդրի կարևորությունը և այն որ մահացածների մարմինն անարգանքի ենթարկելը ոչ այլ ինչ է, քան բացառիկ անպատկառություն և անբարոյականություն, որը վկայում է հանցավորի առանձին անգթության և դաժանության մասին, հանցավորի արարքին համարժեք գնահատական տալու նպատակով կարծում ենք 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածի առաջին մասում թվարկված դիակն անարգանքի ենթարկելու ցանկից պետք է առանձնացնել «դիակը պղծելը» և այն սահմանել որպես առանձին հանցակազմ՝ «մահացածի մարմինը պղծելը» վերտառությամբ, այն ընդգրկելով ծանր հանցագործությունների խմբում:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքում «դիակն անարգանքի ենթարկելը» վերտառությամբ հոդվածին, ապա նպատակահարմար ենք համարում փոփոխել այն «մահացածի ապօրինի արտաշիրիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրերը վերցնելը կամ մահացածի հիշատակն այլ կերպ անարգելը» ձևակերպմամբ, նույնը և հոդվածի դիսպոզիցիայում: Կարծում ենք, առաջարկվող փոփոխությունը ավելին է, քան զուտ բառերի բարեհունչ դարձնելը:



<sup>22</sup> Տե՛ս Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի օգոստոսի 9-ի դատավճիռը, գործ թիվ ԵԿԴ/0056/01/13:  
<sup>23</sup> Տե՛ս Լատվիայի քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը, որտեղ որպես սպանությունը ծանրացնող հանգամանք է սահմանվել սպանությունից հետո դիակն անարգելը:

**ԱՐՄԵՆ ԴՈՒԿԱՍՅԱՆ**

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԷՔՍՏՐԵՄԻՉՄԻ ԶԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Էքստրեմիզմ» կամ հայերեն թարգմանությամբ «ծայրահեղականություն» տերմինը ծագել է լատիներեն extremus բառից, որը բառարանային թարգմանությամբ նշանակում է «ծայրահեղ հայացքների և միջոցների դավանանք»<sup>1</sup>: Համապատասխանաբար, «extremist» կամ «ծայրահեղական» բառը նշանակում է մարդ, որը կրում է ծայրահեղ հայացքներ, կողմնակից է ծայրահեղ միջոցների կիրառման:

Մեր առօրյա կյանքում հաճախ ենք հանդիպում ծայրահեղականության տարատեսակ դրսևորումների, ընդ որում հնարավոր չէ սպառնիչ կերպով թվարկել դրանք: Մասնավորապես, առավել հաճախ ենք հանդիպում ծայրահեղականության երիտասարդական<sup>2</sup>, քաղաքական<sup>3</sup>, էթնիկական<sup>4</sup>, ռասայական<sup>5</sup>, կրոնական, հանցավոր, նույնիսկ՝ սպորտային տարատեսակներին, ինչպես նաև դրանց բազմատեսակ համակցություններին<sup>6</sup>:

Շատ գիտնականներ կիսում են այն տեսակետը, որ ծայրահեղականությունը՝ անձի այնպիսի գործունեությունն է (ինչպես նաև հանդուժումը, վերաբերմունքը, հույզերը, գործո-

ղությունները, ռազմավարությունը), որը զգալիորեն շեղվում է սովորական, համընդհանուր ճանաչում գտած ստանդարտներից<sup>7</sup>:

20-րդ դարում մարդկությունը միջազգային իրավական փաստաթղթերով սահմանեց նման «նորմաներ»՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների որոշակի շրջանակի տեսքով, որոնցից շեղումները դիտարկեց որպես էքստրեմիզմի դրսևորումներ: Այդ նորմաներն ամրագրվել են, մասնավորապես.

➔ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում<sup>8</sup> (հոդվածներ՝ 7, 18, 19, 20), որով ամրագրվեցին հետևյալ ստանդարտները՝

➔ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում<sup>9</sup> (հոդված 18):

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով վերը նշված հիմնարար փաստաթղթերը և մարդու իրավունքների ոլորտին առնչվող մի շարք կոնվենցիաներ, ստանձնեց հանձնառություն վերը նշված նորմերի հիման վրա ձևավորելու ազգային օրենսդրությունը: Մասնավորապես, **«Հ սահմանադրությունում»<sup>10</sup>** նե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 129 2022

<sup>1</sup> Российский энциклопедический словарь / Гл. ред. А. М. Прохоров. – М.: Научное изд-во «Большая Российская энциклопедия», 2000. – Т. 2. – С. 1832.  
<sup>2</sup> Молодежный экстремизм/ Под ред. А.А. Козлова. СПб.1996. С. 36.  
<sup>3</sup> Арчаков, М. К. Политический экстремизм: сущность, проявления, меры противодействия: монография / М. К. Арчаков; под научной редакцией Ю. А. Ермакова. – Москва: Издательство Юрайт, 2020. С. 28.  
<sup>4</sup> Противодействие этническому и религиозному экстремизму, правовому нигилизму/ Под ред. М.П. Клейменова. Омск. 2006. С. 22.  
<sup>5</sup> Некрасов Д. Е. Расово-этнический экстремизм: криминологический аспект. Дис.. канд. юрид. наук. Рязань, 2006. С. 17.  
<sup>6</sup> Антонян Ю.М. Этнорелигиозный терроризм М.: Аспект Пресс, 2006. С. 14  
<sup>7</sup> Coleman Peter T., Bartoli Andrea. Addressing Extremism. The International Center for Cooperation and Conflict Resolution (ICCCR), Teachers College, Columbia University // The Institute for Conflict Analysis and Resolution (ICAR), George Mason University. 2002.  
<sup>8</sup> <https://www.irtek.am/views/act.aspx?aid=37342>  
<sup>9</sup> <https://www.irtek.am/views/act.aspx?aid=37346>  
<sup>10</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

րառվեցին մի շարք հողվածներ, որոնք ամրագրեցին վերը նշված նորմերը, մասնավորապես.

■ Հոդված 29. Խտրականության արգելքը՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, կամ անձնական, կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

■ Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

■ Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

■ Հոդված 45. Միավորումների ազատությունը՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

■ Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն ի-

րենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

■ Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը՝ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Վերը թվարկված սահմանադրական նորմերն էլ հենց սահմանագծում են մարդկանց համակեցության «նորմաները», որոնք ներառում են մարդու տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր արժեհամակարգի ստանդարտները: Բնականաբար, ցանկացած շեղում նշված ստանդարտներից կրում է հակաիրավական բնույթ և նախատեսում է իրավական պատասխանատվություն՝ անկախ նրանից, թե այդ խախտումն ում կողմից է թույլ տրվել՝ այլ մարդկանց, իրավաբանական անձանց, պետական իշխանության մարմինների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, շարժումների:

Անդրադառնալով իրավաբանական պատասխանատվության խնդրին՝ պետք է արձանագրել, որ ՀՀ օրենսդիրը, ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, չի օգտագործել վարչաիրավական ներգործության հնարավորությունը՝ ապավինելով միայն քրեաիրավական գործիքակազմին, ինչը թույլ չի տվել լիարժեք և համակարգված օգտագործել ծայրահեղականության դեմ պայքարում իրավական պրեվենցիայի ողջ պոտենցիալը:

ՀՀ օրենսդիրը ծայրահեղականություն նախատեսող արարքները ամրագրել է **«ՀՀ քրեական գործող օրենսգրքում»<sup>11</sup>** հիմնականում երեք ձևով.

1. *Նախապես էլ է առանձին 7 հանցակազմերի դիսպոզիցիաներում, որոնցում ուղղակիորեն մատնանշում է ծայրահեղական դրսևորումները.*

✓ Մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 143 հոդ. 1 և 2 մասեր՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի

<sup>11</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>

կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին:

✓ Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը (ՀՀ քրեական օրենսգրքի 226 հոդ. 1 և 2 մասեր՝ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները):

✓ Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը (ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդ. 1 և 2 մասեր՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-ին, 301-րդ, 385-րդ, 397.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները):

✓ Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ (ՀՀ քրեական օրենսգրքի 390 հոդ. 4 մասի 3-րդ կետ՝ զինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող հետևյալ արարքները՝ 3) ապարտեիդի կամ ռասայական խտրականության վրա հիմնված անձի արժանապատվությունը ստորացնող, ոչ մարդասիրական և նվաստացնող այլ գործողությունների պրակտիկայի կիրառումը:

տացնող այլ գործողությունների պրակտիկայի կիրառումը:

✓ Մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 392 հոդ.՝ արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային և պարբերական մահապատիժներ կիրառելը, մարդկանց առևանգելը, ինչին հետևում է նրանց անհետանալը, խոշտանգելը կամ դաժան գործողությունները, որոնք կատարվում են՝ ըստ քաղաքացիական բնակչության ռասայական, ազգային, էթնիկական պատկանելության, քաղաքական հայացքների և դավանանքի):

✓ Ցեղասպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 393 հոդ.՝ ցեղասպանությունը, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մանկածնությանը խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը, բռնությամբ վերաբնակեցնելը կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը):

✓ Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 397.1 հոդ.՝ համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված սույն գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով):

2. *Շայրահեղական դրսևորումները նախադեսել են որպես պաշտասխանարվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ* (ՀՀ



քրեական օրենսգրքի 63 հոդված), առանձնացնելով հանցանքի կատարումը հետևյալ շարժառիթներով՝

- ազգային, ռասայական կամ կրոնականատելության,
- կրոնական մոլեռանդության,
- այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի:

Ի դեպ, գրականության մեջ նշվում են նաև քաղաքական և գաղափարական շարժառիթները, որոնք, մեր կարծիքով, նույնպես պետք է ներառվեն օրենսդրորեն ամրագրված շարժառիթների մեջ:

3. *Ազգային, ռասայական կամ կրոնականատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթները* ՀՀ քրեական օրենսգրքում հանդես են գալիս որպես որակյալ հատկանիշներ նաև 6 հանցակազմերում՝

- սպանություն (ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդ. 2 մասի 13 կետ),
- դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդ. 2 մասի 12 կետ),
- դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 113 հոդ. 2 մասի 7 կետ),
- ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 119 հոդ. 2 մասի 7 կետ),
- գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդ. 2 մասի 4 կետ),
- դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը (ՀՀ քրեական օրենսգրքի 265 հոդ. 2 մասի 2 կետ):

Հակիրճ անդրադառնանք նաև մարդկությանը հայտնի **ծայրահեղականության տարատեսակ դրսևորումներին**՝ ազգայնամոլությանը, նացիզմին, ֆաշիզմին, քսենաֆոբիային, անջատողականությանը, ռադիկալիզմին, ֆունդամենտալիզմին և ահաբեկչությանը, փորձենք տալ վերջիններիս համառոտ բնութագիրը:

**Ազգայնամոլությունը կամ նացիոնալիզմը** (ֆր.՝ nationalisme) ոչ միանշանակ գնահատվող երևույթ է: Որոշ դեպքերում այն բնորոշվում է որպես գաղափարախոսություն և քաղաքական ուղղություն, որոնց հիմնարար սկզբունքն ազգի արժեքի ընկալումն է որպես հասարակական միասնության բարձրագույն ձևի և պետականության կերտման առաջնություն<sup>12</sup>: Կարծում ենք, որ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ազգայնամոլության, այլ ազգայնականության մասին է:

Մյուս կողմից, այն ընկալվում է որպես ռեակցիոն գաղափարախոսություն և քաղաքականություն, որի նպատակն է ազգայինատելություն հրահրել տարբեր ազգերի միջև: Նման գաղափարախոսություն կրողները երբեք չեն հանդուրժի, որպեսզի իրենց երկրում իշխանությունն անցնի էթնիկապես օտար, ոչ տիտուլային ազգի ներկայացուցիչներին: Այս պարագայում, թերևս, տեղին է խոսել արդեն ազգայնամոլության մասին, որը, համապատասխան պայմանների առկայության դեպքում, կարող է վերածել նացիզմի:

**Նացիզմին** (գերմ.՝ Nationalsozialismus, կրճատ՝ նացիզմ) բնորոշ է մի ազգի գերակայության ապահովումը մյուս ազգերի ու ազգությունների նկատմամբ՝ զուգորդված հալածանքներով ու ոչնչացմամբ: Այն Գերմանիայի պաշտոնական քաղաքական գաղափարախոսությունն էր 20-րդ դարի 30-ական թվականներին, որի նպատակն էր ճնշել և ոչնչացնել այլ ազգերին, հաստատել «մաքուր արիացիների» համաշխարհային տիրապետությունը, ստեղծել «ռասայապես մաքուր» պետություն<sup>13</sup>:

**Ֆաշիզմը** (իտալ.՝ fascismo, от fascio, խուրձ, կապ, միավորում) նացիզմի գաղափարախոսության տարատեսակ է, քաղաքական շարժում, հասարակական պրակտիկա, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- մեկ ազգի գերակայության և բացառիկության հիմնավորումը ռասայական հատկանիշից ելնելով և այն որպես իշխող ազգ ճանաչելը,
- անհանդուրժողականությունը և խտրա-

<sup>12</sup> Политология: энциклопедический словарь.- М.: Изд-во Московского коммерческого университета, 1993. С.195.

<sup>13</sup> Долгова А.И., Гуськов А.Я., Чуганов Е.Г. Проблемы правового регулирования борьбы с экстремизмом и правоприменительной практики. М., Академия Генеральной прокуратуры Российской Федерации. 2010. С. 57.

կանությունը «օտարածին», «թշնամական» ազգերի և ազգային փոքրամասնությունների նկատմամբ,

- ժողովրդավարության և մարդու իրավունքների մերժում,
- տոտալիտար-կորպորատիվ պետականության, միակուսակցականության և «առաջնորդի իշխանության» սկզբունքների վրա հիմնված ռեժիմի պարտադրումը,
- քաղաքական հակառակորդներին և այլախոհության ցանկացած դրսևորում ճնշելու նպատակով բռնության և ահաբեկչության կիրառումը,
- հասարակության զինվորականացում, զինվորական կազմավորումների ստեղծում և պատերազմի արդարացում՝ որպես միջպետական խնդիրների լուծման արդյունավետ միջոց<sup>14</sup>:

**Քսենոֆոբիան** (լատ.՝ վախեր, զգուշավորություն, անբարյացկամություն օտարների հանդեպ) անհանդուրժողականության դրսևորումն է սոցիալական որոշակի խմբերի նկատմամբ, որոնք ընկալվում են զանգվածային գիտակցության մեջ որպես «օտարներ»<sup>15</sup>:

Քսենոֆոբիայի մասնավոր տեսակ է էթնոֆոբիան՝ վախեր, որոնք ուղղված են թե՛ կոնկրետ էթնիկական համայնքների, թե՛ զանգվածային գիտակցության մեջ անորոշ ձևավորված «օտար» ժողովուրդների համակցության («կովկասցիներ», «սևեր», «այլազգիներ» և այլն) դեմ<sup>16</sup>: Էթնոֆոբիայի վառ դրսևորում կարելի է համարել ադրբեջանական հասարակությունում վերջին 30 տարիներին տարածվող «հայատյացությունը» կամ «արմենոֆոբիան», որը սերմանվում է պետական մակարդակում՝ նունիսկ նախադպրոցական և դպրոցական ուսումնական հաստատություններում: Ցավով պետք է

արձանագրել, որ նույնիսկ ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանում շարունակվում են պետական մակարդակով զարգանալ «հայատյացության» տարատեսակ դրսևորումները:

Քսենոֆոբիայի, այդ թվում՝ էթնոֆոբիայի, դրսևորումներն ունեն տարբեր ինտենսիվություն, քանի որ թե՛ զգուշավորությունը, թե՛ անբարյացկամությունը կարող են տատանվել կասկածամտությունից մինչև վախեր, զգվանքից մինչև ատելություն:

**Անջատողականությունը** (սեպարատիզմը, լատ. Separatus՝ առանձին)<sup>17</sup> գործունեություն է, որի նպատակն է խախտել որևէ պետության տարածքային ամբողջականությունը, այդ թվում՝ վերջինիս տարածքի մի մասի անջատումը կամ պետության կազմաքանդումը բռնի ճանապարհով, ինչպես նաև գործողությունների պլանավորումն ու նախապատրաստումը, օժանդակությունն ու դրդչությունը<sup>18</sup>:

**Արմատականությունը** (ռադիկալիզմը)<sup>19</sup> քաղաքական հոսանք է, որի հետևորդները հանդես են գալիս հասարակական կյանքի տարբեր ոլորտներում արագ և վճռական փոփոխությունների օգտին: Նրանք չեն հանդուրժում լճացումը, և այս առումով հանդես են գալիս որպես բարեփոխումների և փոփոխությունների շարժիչ ուժ: Ռադիկալները պահպանողականների հակառակն են (որոնք հակված են զգուշավոր գործողությունների, քաղաքական մշակույթի ավանդույթների նկատմամբ խնամքի դրսևորման): Հասարակության մեջ արմատական և պահպանողական հայացքների հավասարակշռությունը վերջինիս հետևողական առաջընթացի գրավականն է:

**Ֆունդամենտալիզմը** (լատ.՝ Fundamentum, հիմք)<sup>20</sup> կրոնի սկզբնական, հիմնարար արժեքներին, կրոնական արմատներին հասնելու

<sup>14</sup> Фашизм // Большая актуальная политическая энциклопедия / Под общ. ред. А. Белякова и О. Матвейчева.- М.: Эксмо, 2009. С. 347.

<sup>15</sup> Советский энциклопедический словарь.- М.: Советская энциклопедия, 1981. С.670.

<sup>16</sup> Экстремизм и его причины: [монография] / [Ю. М. Антонян и др.]; под ред. Ю. М. Антоняна.- Москва: Логос, 2010. С. 58.

<sup>17</sup> Нарочницкая Е. А. Понимание сепаратизма (рус.) // Актуальные проблемы Европы: Научный журнал.- 2015.- № 1.- С. 14-26.

<sup>18</sup> Тадевосян Э.В. Словарь-справочник по социологии и политологии.- М.: Знание, 1986. С.211

<sup>19</sup> Водовозов В. В. Радикализм и радикальная партия // Энциклопедический словарь Брокгауза и Ефрона: в 86 т. (82 т. и 4 доп.).- СПб., 1899.- Т. XXVI.- С. 73-75.

<sup>20</sup> Oxford English Dictionary, Oxford University Press, 2nd edition, 1989.

ձգտում է դրանց բուն էությունը աղավաղող տարատեսակ շերտավորումների, այլասերվածության հաղթահարման միջոցով: Հարկ է նշել, որ ֆունդամենտալիստական շարժումներ առկա են գրեթե բոլոր կրոններում:

Կրոնական ֆունդամենտալիզմը պոտենցիալ կոնֆլիկտային է, քանի որ այն առաջնահերթություն է տալիս ոչ թե ազգային, պետական, ժողովրդավարական արժեքներին, այլ կրոնական: Կրոնական ֆունդամենտալիզմի ծայրահեղ դրսևորումները վերածվում են ծայրահեղականության: Այս իմաստով կրոնական ծայրահեղականությունը՝ ծայրահեղ հայացքների և միջոցների կիրառմամբ ֆունդամենտալիստական հայացքներին համապատասխան աշխարհի վերակառուցումն է: «Մաքուր կրոնի» արժեքների պահպանումը ձեռք է բերվում ոչ թե ինքնամաքմամբ, այլ արտաքին աշխարհը մաքրելով: Անձի ներքին փոխակերպումը դառնում է երկրորդային, գլխավորը՝ աշխարհի արտաքին փոխակերպումն է: Այս նպատակին հասնելու համար արվում են բռնության կոչեր «անհավատների» նկատմամբ:

**Ահաբեկչության** դեպքում բռնությունը նպատակաուղղված է վախեցնելու բնակչությանը, խաթարելու հասարակական անվտանգությունը կամ ստիպելու իշխանություններին կամ միջազգային կազմակերպությանը կատարել որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրանք կատարելուց<sup>21</sup>:

Միջազգային իրավական ակտերում ընդգրծվում է ահաբեկչության՝ որպես բռնության տարատեսակի, հետևյալ առանձնահատկությունը. հոգեբանաֆիզիկական բռնություն, որը կիրառվում է մի խումբ անձանց նկատմամբ, սակայն պահանջներ ներկայացվում են երրորդ կողմին: Այս պարագայում հաշվի է առնվում երրորդ կողմի վրա ազդեցության բարդ բնույթը,

այդ թվում՝ հասարակության կամ խմբի շրջանում սարսափի տարածման կամ բնակչությանը վախեցնելու հանգամանքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է արձանագրել, որ ծայրահեղականությունը իր բոլոր դրսևորումներով հանդերձ, գնալով ավելի ու ավելի կազմակերպված, համակարգված բնույթ է ձեռք բերում, ուստի ժամանակն է համարժեք արձագանքելու նշված բացասական զարգացումներին: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսել առանձին հոդված՝ ծայրահեղական գործունեության առավել վտանգավոր տեսակների կազմակերպման և ղեկավարման համար:

Մեր կարծիքով՝ Հայաստանում գործող ծայրահեղական ուղղվածության կազմակերպությունների (այդ թվում կրոնական ուղղվածության) գործունեությունը չի ստանում պետական համարժեք հակազդեցություն նաև ոլորտի ոչ բավարար իրավական կարգավորման պատճառով: Վաղուց է հասունացել «Ծայրահեղականության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչի բացակայությունը ներկայումս լուրջ խոչընդոտ է այս բացասական երևույթի քրեաբանական կանխարգելման աշխատանքները Հայաստանում պատշաճ կերպով կազմակերպելու համար: Նշված օրենսդրությունը, թերևս, կսահմաներ ոչ միայն ծայրահեղական գործունեության բնորոշումը, նախականխիչ միջոցառումների շրջանակը, այլև դրանք իրականացնող և վերահսկող սուբյեկտների գործառույթները, ծայրահեղական ուղղվածություն ունեցող այս կամ այն կազմակերպության գործունեության կասեցման ընթացակարգը և այլ իրավակարգավորումներ:



<sup>21</sup> Экстремизм в современном мире: монография / под общ. ред. А. И. Бастрыкина, В. П. Кириленко, В. А. Шамахова. – СПб.: ИПЦ СЗИУ РАНХиГС, 2018. С. 98

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՆՁՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ**

Քրեական դատավարության ոլորտում պետությունների միջազգային համագործակցության շրջանակներում կիրառվող արդյունավետ իրավական գործիքներից է էքստրադիցիայի (հանձնման) ինստիտուտը, որի միջոցով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ապահովվում է հանցանք կատարած անձի նկատմամբ պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքը:

Յուրաքանչյուր պետության ազգային ինքնիշխանությունը ենթադրում է, որ այն պետք է իրավասություն ունենա իր տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ: Պետությունը չունի պարտավորություն ընդունելու կամ վտարելու օտարերկրացիներին իր տարածք կամ իր տարածքից, հետևաբար չունի նաև պարտավորություն բավարարել այլ պետության հանձնման միջնորդությունը, եթե առկա չէ դրա վերաբերյալ պայմանագիր<sup>1</sup>: Այլ խոսքով՝ միջազգային իրավունքը չի սահմանում հանձնման պարտավորություն<sup>2</sup>: Հանձնման գործընթացը կարգավորվում է ինչպես միակողմ կամ բազմակողմ պայմանագրերով, համընդհանուր ճանաչում ստացած կառուցակարգերով, ինչպիսին է, օրինակ, ձերբակալման եվրոպական որոշումը, ՄԱԿ-ի կոնվենցիաներով, հատուկ (ad hoc) պայմանավորվածություններով, այնպես էլ բարեվարքության (comity-вежливость,) կանոններով, ինչն իրենից ենթադրում է հանձնման պատրաստակամություն, երբ առկա չեն քննարկվող հարաբերությունները կարգավորող պայմանագրեր:

Հանձնման նպատակն է ապահովել քրեա-

կան օրենսդրության կիրառումը: Այն միջոց է ապահովելու քրեական օրենքի կանխարգելիչ (պրիվենտիվ), դաստիարակչական, վերականգնողական ազդեցությունը ցույց տալով, որ դրա իրագործման հնարավորությունը նույնիսկ հանցանք կատարած անձի կողմից այլ պետություն փախուստի դիմելու պարագայում<sup>3</sup>:

Գոյություն ունի հանձնման ինստիտուտի ընկալման երկու եղանակ: Մի կողմից այն դիտարկվում է որպես գործիք, որը ծառայում է ընդհանուր, գլոբալ շահերին ինչով ապահովվում է արդարադատության իրականացումը: Այս դեպքում այն պահանջում է միջազգայնորեն ընդունված սոցիալական կամ բարոյական կարգ: Որպես հետևանք ներպետական քրեական օրենքի դերերից մեկը այդ դեպքում կլինեն այդ համընդհանուր կարգի ապահովումը: Մյուս դեպքում, այն կարող է դիտարկվել որպես միջազգային համագործակցության ձև, որը նպատակ է հետապնդում ապահովել փոխադարձ անձնական շահերը: Յուրաքանչյուր պետության շահերից է կարողանալ ապահովել սեփական քրեական իրավունքի կիրառումը: Որպեսզի պետությունը կարողանա ետ բերել հանցանք կատարած և իր տարածքը լքած անձանց, այն պետք է աջակցի այլ պետություններին վերոնշյալ նպատակի իրագործման գործում<sup>4</sup>: Ինչպես նշվում է, քրեական օրենքի գործադրումը յուրաքանչյուր պետության ինքնիշխանության արտահայտման ձևերից է<sup>5</sup>: Հանձնումը որպես ընթացակարգ բավականին հետաքրքիր է, քանի որ այն ստիպում է պետություններին կախված լինել մեկ այլ պետության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>1</sup> Տե՛ս Sambei, Du Plessis and Polaine, 2009, 405; or Oppenheim, Jennings and Watts, 1992, 948–971, on the rules of international law concerning extradition; and Gilbert, 1998, for a detailed view on extradition processes  
<sup>2</sup> Տե՛ս Gilbert, 1991, 8.  
<sup>3</sup> Տե՛ս Bassiouni, Wise, 1995, 26. See also e.g. Gilbert, 1991, 3.  
<sup>4</sup> Տե՛ս Extradition, Politics, and Human Rights, Christopher H. Pyle, 1986 and 2001.  
<sup>5</sup> Տե՛ս Terrorism, Criminal Law and Politics The Decline of the Political Offence Exception to Extradition, Julia Jansson, first published 2020, p. 50

ինքնուրույն որոշում կայացնելու գործընթացից, որպեսզի հնարավորություն ունենա գործադրել սեփական քրեական իրավունքը հանցանք կատարած և իր տարածքը լքած անձանց նկատմամբ:

Նախկինում հանձնումը կազմում էր, այլ հարաբերություններ կարգավորող պայմանագրի մաս: Առաջին բազմակողմ պայմանագիրը, որը կարգավորում էր նաև հանձնմանը վերաբերող հարաբերություններ 1802 թվականի Ամիենի պայմանագիրն է, չնայած նրան, որ պայմանագրի՝ հանձնմանը վերաբերող հոդվածը այդպես էլ չկիրառվեց պատերազմի պատճառով: 1842 թվականի Վեբսթեր-Էշբերթոնի պայմանագիրը, որը կնքված է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև Միացյալ Թագավորության և ԱՄՆ հյուսիսային սահմաններին վերաբերող բազմաթիվ հարցերի կարգավորումից բացի պարունակում էր հոդվածներ, որոնք վերաբերում էին այն իրավախախտ անձանց հանձնմանը, ովքեր մեղադրվում էին սպանություն, սպանության փորձ, ծովահենություն, հրկիզում, կողոպուտ և փաստաթղթերի կեղծիք կատարելու համար<sup>6</sup>: Աստիճանաբար սկսեցին կնքվել պայմանագրեր, որոնք կարգավորում էին բացառապես հանձնմանը վերաբերող հարաբերություններ: ԱՄՆ-ի առաջին պայմանագիրը, որը կարգավորում էր բացառապես հանձնման հետ կապված հարաբերություններ կնքվել է 1843 թվականին Ֆրանսիայի հետ: Առաջին բազմակողմ պայմանագիրը, որը նույնպես վերաբերում էր միայն հանձնման գործընթացին Հանձնման վերաբերյալ պայմանագիրն է, որը ստորագրվել է Լիմայում 1879 թվականին, ինը կենտրոնական և հարավամերիկյան նահանգների միջև<sup>7</sup>:

Որոշ պայմանագրեր, որոնք կարգավորում են միջազգային հանցագործությունների վերաբերյալ հարաբերություններ, իրենց մեջ ընդգրկել են հանձնման գործընթացը՝ որպես հիմնական գործիք: Օրինակ՝ ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ կոնվենցիաները, դիտարկում են

հանձնումը որպես ահաբեկչության դեմ պայքարի հիմնական գործիք: Հանձնումը որպես հիմնական կարգավորիչ մեխանիզմ բովանդակող պայմանագրերից է, օրինակ, նաև 1949 թվականի Ժնևի կոնվենցիան:

Հանձնումը ունի երկակի գործառույթ՝ իրավական և քաղաքական: Հանձնումը երբեք չի կարող դիտարկվել միայն որպես դատավարական ընթացակարգ, քանի որ այն շոշափվում և շոշափում է արտաքին քաղաքականությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Գրականության մեջ հանդիպող տեսակետներից մեկի համաձայն՝ հանձնումը կրում է խիստ քաղաքական բնույթ և այն ընկած է միջազգային քաղաքականության, էթնիկ քաղաքականության և միջճյուղային մրցակցության խաչմերուկում<sup>8</sup>:

Հանձնման քաղաքական բնույթը երևում է հանձնման թույլտվության գործընթացում: Ըստ Բասսիոնիի՝ ինչքան մոտ են միմյանց հայցող և հայցվող պետությունների քաղաքական համակարգերը, այդքան քիչ հավանական է, որ հանցանքը, որի համար անձը հայցվում է կլինի քաղաքական բնույթի և ավելի շատ հավանական, որ հանձնման միջնորդությունը կբավարարվի<sup>9</sup>: Նկատի ունենալով հանձնման քաղաքական բնույթը՝ բազմաթիվ պետությունների կողմից քննարկման առարկա է դարձել նույնիսկ այն հարցը, թե ինչքանով է ճիշտ դրա գործադրման վերապահումը դատական և ոչ թե գործադիր իշխանությանը:

Հանձնումը դիտարկվում է որպես երկու պետությունների միջև տեղի ունեցող գործընթաց: Հանցանք կատարած և փախուստի դիմած անձը այդ գործընթացի հիմքն է, որի իրավունքների ապահովումը մինչև վերջին ժամանակները չէր առաջացնում լուրջ անհանգստություն: Վերջին ժամանակներում այդ իրավունքները մեծապես հաշվի են առնվում, բայց միևնույն ժամանակ համադրվում շահագրգիռ պետությունների և միջազգային հանրության շահերի հետ նպատակ հետապնդելով պահ-

<sup>6</sup> Տե՛ս Webster-Ashburton Treaty, 9 August 1842.

<sup>7</sup> Տե՛ս Zanotti, 2006, 1. The Lima treaty was adopted by the American Congress of Jurists and was signed by the representatives of Argentina, Bolivia, Chile, Costa Rica, Ecuador, Guatemala, Peru, Uruguay and Venezuela. Zanotti, 2006, 5. A detailed list of multilateral conventions and treaties that deal with extradition can be found in Zanotti, 2006.

<sup>8</sup> Տե՛ս Extradition, Politics, and Human Rights, Christopher H. Pyle, 1986 and 2001.

<sup>9</sup> Տե՛ս Bassiouni, 1969, 232, 249.

պանել համընդհանուր կարգ<sup>10</sup>: Այդ իսկ պատճառով, որպես կանոն առաջանում է ճշում հանցանք կատարած և փախուստի դիմած անձի իրավունքների և հանցագործությունները ճնշելու նպատակ հետապնդող պետության շահերի միջև: Հանձնման գործընթացը պաշտոնական գործընթաց է և որպես այդպիսին պարտավոր է հաշվի առնել հանցանք կատարած անձի իրավունքները: Հանձնումը կարգավորող կոնվենցիաները պարունակում են կարգավորումներ, որոնք միտված են այն անձի իրավունքների պաշտպանությանը, որի հանձնումը քննարկվում է: Դրանք պարունակում են համապատասխան կարգավորումներ, օրինակ, խտրականության արգելքի, քաղաքական բնույթի հանցագործությունների դեպքում հանձնման արգելքի կամ հանցանքը հայցող և հայցվող պետություններում պատժելի լինելու պայմանի վերաբերյալ: Նույնիսկ, եթե պայմանագրերը չնախատեսեն հատուկ կարգավորումներ, մարդու միջազգային իրավունքի կանոնները կարգավորում են հանձնման գործընթացը:

Այնուամենայնիվ, նման սահմանափակումների նախատեսման հիմնական պատճառներից մեկը պետության ինքնիշխանության ապահովումն էր, և ոչ թե անձի իրավունքների պաշտպանությունը<sup>11</sup>: Անդրազգային հանցագործությունների դեմ պայքարի մասին կոնվենցիաների հիմնական նպատակը հանցագործությունների կանխումն է, որոնք պահպանում են նաև պետությունների պարտականությունը ապահովելու անհատի իրավունքները: Պետությունների որոշմանն է թողնված խախտել իր պարտականությունները կոնվենցիաների ազդեցության տակ, թե գործել միջազգային իրավունքին համապատասխան<sup>12</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անհատի իրավունքների պաշտպանությունը էապես մեծացավ: Այնուամենայնիվ, ինչ-

պես նշվում է գրականության մեջ, բավականին երկար ժամանակ հանցանք կատարած և փախուստի դիմած անձանց իրավունքների պաշտպանությունը պետություններում սահմանափակվում էր միայն իր պետության տարածքով: Այն պահից, երբ անձը հանձնվում էր պետությանը, պարտականություններն ավարտվում էին: 1980-1990-ականների նախադեպային իրավունքը փոխեց այս պրակտիկան: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված Ստերինգի վերաբերյալ հանրահայտ գործով ընդլայնեց պետությունների պարտականությունները հանցանք կատարած և փախուստի դիմած անձանց իրավունքների ոլորտում: ՄԻԵԴ-ին անդամակցող պետությունները միջազգային համագործակցության ոլորտում այժմ կապված են մարդու իրավունքների վերաբերյալ նորմերով<sup>13</sup>:

Այժմ միջազգային իրավունքի հիմնական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը ի հակառակ հանձնման գործընթացը դյուրացնելուն: Դա պայմանավորված է նրանով, որ մարդու իրավունքները բխում են jus cogens հասկացությունից: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտվել նաև Ստերինգի վերաբերյալ որոշումը գրելու ժամանակ<sup>14</sup>:

Բոհստերի կարծիքով՝ Ստերինգի վերաբերյալ գործը մեծ ազդեցություն է ունեցել ՆԳ ընդդեմ Կանադայի վերաբերյալ գործի ելքի համար: Վերոնշյալ գործով ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն ընդունեց Ստերինգի գործով արտահայտված դիրքորոշումները և որոշեց, որ ՆԳ-ի հանձնումը Կալիֆորնիային, որտեղ վերջինս կարող էր ենթարկվել մահապատժի գազային թունավորման միջոցով, կխախտեր Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրով նախատեսված իրավունքները: Չնայած նրան, որ ԱՄՆ-ի դեմ էր դաշնագրի կիրառումը նման մեկնաբանության համատեքստում<sup>15</sup>:

<sup>10</sup> Sѓu Bassiouni, 1973, 25. See Gilbert, 1998, 147–174; and Dugard and Van den Wijngaert, 1998, 188, for more details concerning the relation between extradition and human rights.

<sup>11</sup> Sѓu See in more detail on the protection of human rights in the crime suppression conventions e.g. Boister, 2002; and Currie, 2015, 28–34.

<sup>12</sup> Sѓu նույն տեղում:

<sup>13</sup> Sѓu Soering v. the United Kingdom, Application no. 14038/88, 7 July 1989. See also Blakesley, 2000, 64–69; Boister, 2002, 204–205; and Currie, 2015, 36.

<sup>14</sup> Sѓu Dugard and Van den Wijngaert, 1998, 194–195.

<sup>15</sup> Sѓu Boister, 2002, 205. See also Chitat Ng v. Canada, Communication No. 469/1991, U.N. Doc. CCPR/C/49/D/469/1991 (1994).

Չնայած վերջին տասնամյակում մարդու իրավունքներին վերաբերող կարգավորումների ամրապնդմանը՝ անհատների իրավունքները շատ դեպքերում դառնում էին երկրորդական: Հատկապես այն բանից հետո, երբ 2001թ թվականին ԱՄՆ-ի դեմ իրականացվեց ահաբեկչական ակտի այլ մեթոդներ, որոնք ավելի արդյունավետ են համարվել ահաբեկչության դեմ պայքարում, դրանք սկսեցին կիրառվել ենթադրյալ ահաբեկիչների տեղափոխման գործում: 1970-ից 1980-ականներին որպես հանձնմանն այլընտրանք կիրառվում էին առևանգումներն և անօրինական փոխանցումները<sup>16</sup>:

Վերոնշյալ այլընտրանքային մեթոդները հանցանք կատարած և փախուստի դիմած անձանց համար չէին ապահովում այն նույն իրավական երաշխիքները, ինչ էքստրադիցիոն գործընթացը: Այդ մեթոդները արտաիրավական կամ անօրինական էին և կիրառվում էին այն ժամանակ, երբ հանձնման իրականացման օրինական եղանակները սպառվում էին: Օրինակ՝ արտաքսումը եղել է կարևոր մեթոդ հանցանք կատարած անձին քննության ներկայացնելու համար: Քանի որ այն ավելի պարզը ընթացակարգ է, քան հանձնման գործընթացը, պետությունները ահաբեկչության դեմ պայքարում շատ հաճախ դիմում էին դրան հանձնման բարդ ընթացակարգին չանդրադառնալու համար<sup>17</sup>: Մթերահի կարծիքով՝ հանձնումը և արտաքսումը միմյանցից առանձին չպետք է դիտարկել, բացի այդ արտաքսումը կիրառվում է այն իրավիճակներում, երբ հանձնումը ձախողվում է<sup>18</sup>: Այս մեթոդի կիրառման իրավականությունը փախուստի դիմած անձանց նկատմամբ վիճելի է: Օրինակ՝ Բասսոն պնդում էր, որ արտաքսումը կարող է օրինական ձևով փոխարինել հանձնմանը:

Հանձնման և արտաքսման հիմքում ընկած են տարբեր գաղափարախոսություններ: Չնայած, որ երկուսն էլ ունեն նույն արդյունքը՝ անձի հեռացումը պետության տարածքից, դրանք ծառայում են տարբեր նպատակների<sup>19</sup>: Հանձնման և արտաքսման տարբերությունն այն է, որ միայն օտարերկրացիները կարող են արտաքսվել, միևնույն ժամանակ, օրինակ, ԱՄՆ օրենսդրությունը թույլ է տալիս հանձնել նաև սեփական քաղաքացիներին: ԱՄՆ-ն կիրառում է արտաքսում այն ժամանակ, երբ պետությունը, որի հետ ԱՄՆ-ն չունի հանձնման վերաբերյալ պայմանագիր պահանջում էր փախուստի դիմած անձին<sup>20</sup>: Արտաքսման նպատակն է հեռացնել անցանկալի անձին կոնկրետ պետության տարածքից, առանց պատժելու նպատակի: Հանձնման դեպքում անձը փոխանցվում է քրեական հետապնդման ենթարկվելու կամ պատիժն ի կատար ածելու նպատակով: Այդ իսկ պատճառով արտաքսումը երբեք չի կարող կիրառվել հանձնման փոխարեն: Անձը, ով չի կարող հանձնվել, կարող է արտաքսվել: Ավելին՝ հանձնման դեպքում անձը վերադարձվում է այն պետությանը, որը վերջինիս պահանջում է, իսկ արտաքսման դեպքում անձը կարող է ընտրել վերադարձի պետությունը: Արտաքսումը, որպես կանոն, կիրառվում է երկու հարևան պետությունների միջև, երբ հեշտ է փոխանցել արտաքսվողին<sup>21</sup>:

Նույնիսկ եթե արտաքսումը դիտք որպես հանձնմանը այլընտրանք, որը թվում է թե նպատակ է հետապնդում շրջանցել օրենքները, այնուամենայնիվ այն պաշտպանվում է մարդու իրավունքների կողմից: Օրինակ՝ Խոշտանգումների դեմ կոնվենցիան արգելում է անձի հանձնումը կամ արտաքսումը այն պետությանը, որ-

<sup>16</sup> Stéu M. Cherif Bassiouni has classified these into three categories: “(1) the abduction and kidnapping of a person in one state by agents of another state; (2) the informal surrender of a person by agents of one state to another without formal or legal process; and (3) the use of immigration laws as a device to directly or indirectly surrender a person or place him in a position in which he or she can be taken into custody by the agents of another state.” Bassiouni has strongly criticised these methods: “Aside from the flagrant violation of the individual’s human rights, these practices affect the stability of international relations and subvert the international legal process.” States using kidnapping as a rendition technique while simultaneously on the official level calling kidnappings terrorism hardly strengthens trust in the international legal system. Bassiouni, 1973, 26–27. For more details see e.g. Bassiouni, 1973; Van den Wijngaert, 1980, 50–63; Freestone, 1981, 204–205; Murphy, 1985, 81–93; Gilbert, 1991, 182–207; Nadelmann, 1993, 857–882; and Gilbert, 1998, 337–377.

<sup>17</sup> Stéu Freestone, 1981, 205.

<sup>18</sup> Stéu McElrath, 2000, 64.

<sup>19</sup> Basso, 1989, 330–332.

<sup>20</sup> Stéu նույն տեղում

<sup>21</sup> Stéu Oppenheim, Jennings and Watts, 1992, 947

տեղ էական հիմքեր կան ենթադրելու, որ անձը կարող է խոշտանգվել<sup>22</sup>:

20-րդ դարի ընթացքում՝ անմիջապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մարդու իրավունքները և պետությունների պարտականությունները հասարակության նկատմամբ սրընթաց զարգացում ապրեցին: Այս ժամանակահատվածում ձևավորվեցին պետությունների կողմից անհատների իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմներ: Արտաքսման գործընթացին զուգընթաց սկսեց ձևավորվել չվերադարձելիության սկզբունքը, իսկ հանձնած գործընթացի մասով՝ խտրականության արգելքը: Դրանց զուգընթաց սկսեցին ստեղծվել փախստականների իրավունքների վերաբերյալ կարգավորումներ<sup>23</sup>:

Խտրականության արգելքի սկզբունքը, որը ստեղծվել է զարգացել է Փախստականների մասին կոնվենցիայի 33-րդ հոդվածի հիման վրա, ընդլայնեց իր պաշտպանության սահմանները կիրառելի դառնալով նաև այն փախստականների նկատմամբ, ովքեր իրենց քաղաքական հայացքների համար խտրական վերաբերմունքի արժանանալու վտանգի տակ էին: Այն կիրառելի է այն իրավիճակներում, երբ կասկածվում է, որ անձը հետախուզվում է քաղաքական հանցագործության համար քրեական հետապնդման ենթարկվելու նպատակով, կամ, որ նրա հանձնումը կարող է հանգեցնել նրա հետապնդմանը՝ ռասայական, կրոնական, ազգային պատկանելության, քաղաքական հայացքների կամ կարծիքների կամ այլ նմանատիպ պատճառների համար, կամ, եթե այդ պատճառներից մեկը կարող է ազդել հայցող երկրում անձի նկատմամբ վերաբերմունքի վրա<sup>24</sup>: Խտրականության արգելքի պայմանը մինչև ինքնուրույն սկզբունք դառնալը, ըստ էության, ընկած էր այլ պայմանների հիմքում, օրինակ մրցակցության և հավասար պաշտպանության: Հանձման գաղափարը առաջարկվել է նաև 1880 թվականին Միջազգային իրավունքի ինստիտուտի կողմից: Իր որոշումներում այս

հեղինակավոր կառույցը բազմիցս նշում է, որ քաղաքական հանցագործություն կատարած անձի հանձնման համար հայցող պետությունը պետք է ներկայացնի հավաստի հիմնավորումներ, որ հանձնվողի նկատմամբ չի ցուցաբերվի սովորականից տարբերվող վերաբերմունք<sup>25</sup>:

Քննարկվող սկզբունքի պահպանման հարցը մասամբ լուծվեց քաղաքական հանցագործությունների համար հանձնման բացառման սկզբունքով, այնուամենայնիվ դրանց նպատակները տարբեր են: Վերոնշյալ սկզբունքը ստեղծվեց պաշտպանելու նրանց ովքեր մեղադրվում էին քաղաքական բնույթի հանցագործություններ կատարելու համար, մինչդեռ խտրականության արգելքի սկզբունքի նպատակն այլ է: Այն նպատակ է հետապնդում պաշտպանել սովորական մեղադրյալներին, որոնց հանձնման դեպքում առկա են բավարար հիմքեր, որ վերջիններս այս կամ այն ձևով կարժանանան կողմնակալ վերաբերմունքի: Բացի այդ, քաղաքական հանցագործությունների համար հանձնման բացառման սկզբունքը առհասարակ բացառում է անձանց հանձնումը, իսկ խտրականության արգելքի սկզբունքը պաշտպանում անձանց անարդար վերաբերմունքից:

Խտրականության արգելքի սկզբունքը առաջին անգամ ամրագրվել է Հանձնման մասին 1957թ. Եվրոպական կոնվենցիայում, որի արմատները տեղ էին գտել դեռևս հանձնման մասին Ֆրանսիայի 1927 թվականի օրենքում: Քննարկվող սկզբունքի հիմքում ընկած է այն նույն գաղափարը, ինչ քաղաքական հանցանքներով հանձնման արգելքի դեպքում. քաղաքական բնույթի հանցանք կատարած անձը չի կարող արժանանալ արդար քննության այն պետության տարածքում, որի շահերին վնաս է պատճառվել վերջինիս գործողությունների հետևանքով:

Խտրականության արգելքը կանխում է դատաքննության օգտագործումը քաղաքական նպատակներով և ապահովում օրենքի պատ-

<sup>22</sup> Տե՛ս Article 3, Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (CAT), A/RES/39/46, 10 December 1984.

<sup>23</sup> Տե՛ս United Nations Convention Relating to the Status of Refugees, 28 July 1951.

<sup>24</sup> Տե՛ս Soering case.

<sup>25</sup> Տե՛ս Article 15, Justitia et Pace, Institut de Droit International, Session d'Oxford, Résolutions d'Oxford (Extradition), 9 September 1880.



շած իրականացման ընթացքը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ այս սկզբունքը դժկամությամբ է կիրառվում պետությունների կողմից նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ենթադրում է որոշման ընդունում մեկ այլ պետության դատական գործընթացի և դրա ընթացքի վերաբերյալ, ինչը կարող է հանգեցնել դիվանագիտական տեսանկյունից անցանկալի հետևանքների: Այս սկզբունքի առկայությունը պայմանագրի կողմերի միջև կարծես թե արտահայտի անվստահությանը բնորոշ տարրեր: Այն նույնիսկ արժանացել է քննադատության այն տեսանկյունից, որ խառնում է դատական հարցերը ավելի լայն հետաքրքրություն ներկայացնող քաղաքական շահերի հետ<sup>26</sup>:

Մինչև խտրականության սկզբունքի ամրագրումը՝ Հանձնման մասին 1957 թվականի Եվրոպական կոնվենցիայում, նմանատիպ կարգավորումներ էին ձևավորվել նաև ԱՄՆ-ի որոշ պայմանագրերում<sup>27</sup>: Մեր ժամանակներում խտրականության արգելքը բազմաթիվ պայմանագրերի պարտադիր բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ-ը դատարանները որպես կանոն չէին պահպանում քննարկվող սկզբունքը, քանի որ պարտավորված էին առաջնորդվել այլ՝ «քննություն չիրականացնելու» կանոնով, որը հնարավորություն չէր տալիս գնահատել այլ պետությունների դատական համակարգերի արդարացիությունը (սկզբունքի մասին ավելի մանրամասն կխոսվի հաջորդ գլխում)<sup>28</sup>:

Խտրականության արգելքի պայմանին իր իրավական մեխանիզմով մոտ սկզբունք է չվերադարձելիության սկզբունքը: Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիան բու-

վանդակում է հետևյալ կարգավորումը՝ ոչ մի պայմանավորվող պետություն չպետք է որևէ կերպ վտարի կամ վերադարձնի («refouler») փախստականին այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կներկայացվի նրա ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար<sup>29</sup>: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է քաղաքական փախստականների նկատմամբ, մինչդեռ խտրականության արգելքը կիրառելի է հանցանք կատարած և փախուստի դիմած բոլոր անձանց համար, ովքեր հետախուզվում են քրեական հետապնդման կամ պատժի ի կատար ածման նպատակով: Որպես միջազգային իրավունքի սովորության սկզբունք՝ չվերադարձելիության սկզբունքը պարտադիր է բոլոր պետությունների համար անկախ այն հանգամանքից նրանք ստորագել են կոնվենցիան, թե՛ ոչ<sup>30</sup>:

Չվերադարձելիության սկզբունքին համանման սկզբունք ամրագրվել էր դեռևս փախստականների կարգավիճակի վերաբերյալ Ազգերի լիգայի 1933 թվականի կոնվենցիայում: Այս սկզբունքը կիրառվել է տասնամյակի վերջին, փախստականներին նացիստական Գերմանիայից և Իսպանիայից քաղաքացիական պատերազմի ժամանակ պաշտպանելու նպատակով<sup>31</sup>:

Քաղաքական բնույթի հանցագործությունների և խտրականության արգելքի սկզբունքներից բացի կան նաև այլ հիմքեր, որոնց հիման վրա պետությունը կարող է մերժել պայմանագրերով նախատեսված հանձնման դեպ-

<sup>26</sup> S’u Freestone, 1981, 213–216.

<sup>27</sup> S’u The first one was the Jamaica International Extradition Treaty with the United States, 14 June 1983. See also Abbell, 2010, 119; Galgani, 2013, 182.

<sup>28</sup> S’u Blakesley has commented this rule in the following way: “[The rule of non-inquiry] is applied by courts to avoid considering the propriety of extradition, when questions about the fairness of the requesting state’s justice system are raised. The requested state sees its interest in not embarrassing the requesting state as being stronger than the fugitive’s interest in justice or fairness.” Blakesley, 2000, 5.

<sup>29</sup> S’u Article 33(1), Convention Relating to the Status of Refugees, 28 July 1951. However, the principle of non-refoulement does not limit the actions of the state upon the refugee in other ways. The state may refuse asylum, or send the person elsewhere or even imprison them. The only restriction this principle offers is that the refugee cannot be returned to where they are likely to be persecuted.

<sup>30</sup> S’u Terrorism, Criminal Law and Politics The Decline of the Political Offence Exception to Extradition, Julia Jansson, first published 2020, p. 59.

<sup>31</sup> S’u Article 3 Convention relating to the International Status of Refugees, 28 October 1933. League of Nations, Treaty Series Vol. CLIX No. 3663.

քերը: Որպես օրինակ պետությունը կարող է մերժել հանձնման միջնորդությունը՝ ելնելով ներքաղաքական գաղափարներից: Պետությունների մեծ մասը դեմ է իրենց քաղաքացիների հանձնմանը՝ ելնելով ազգային ինքնիշխանության, ներքին քաղաքականության և քաղաքական նկատառումներից: Սեփական քաղաքացիներին չհանձնելու սկզբունքը գոյություն ունի այնքան ժամանակ, ինչքան որ հանձնման ինստիտուտն ինքնին և որպես սկզբունք առավել տարածված է քաղաքացիական իրավունքում:

Ինչպես քաղաքական հացագործների չհանձնման սկզբունքը, այնպես էլ չվերադարձելիության սկզբունքը կարող է ընկալվել որպես անվստահության արտահայտություն հայցող պետության նկատմամբ: Մասամբ այն արդյունք է այն նույն անհանգստության, ինչ քաղաքական հացագործների հանձնման կամ խտրականության արգելքի դեպքում՝ հայցող պետությունում անարդար վերաբերմունքին արժանանալու վախը<sup>32</sup>: Այն պաշտպանում է պետությունների՝ իր քաղաքացիների նկատմամբ իրավազորություն ունենալու իրավունքը, իսկ քաղաքացիներին պաշտպանում այլ պետության իրավասությանը փոխանցվելուց: Միևնույն ժամանակ գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ դրա շնորհիվ պաշտպանվում են ծանր հանցագործություններ կատարած անձինք<sup>33</sup>:

Անկախ տվյալ սկզբունքի կիրառման վերաբերյալ գոյություն ունեցող հակասական մոտեցումներից՝ բազմաթիվ պետություններ հրաժարվում են հանձնել սեփական քաղաքացիներին: Այս սկզբունքը մաս է կազմում բազմաթիվ միջազգային պայմանագրերի, այդ թվում նաև 1957 թվականի հանձնման մասին Եվրոպական Կոնվենցիայի, Միավորված ազգերի կազմակերպության հանձնման մասին 1990թ. մոդելային կոնվենցիայի և այլն: Եվրոպայի Միության՝ հանձնման մասին 1996 թվականի կոնվենցիայով վերացվեց քաղաքացիության հիման վրա հանձնման միջնորդությունների մերժ-

ման սկզբունքը: Այնուամենայնիվ այս կարգավորումը դեռևս վերապահումների առարկա է<sup>34</sup>:

Այնուամենայնիվ, ապացուցվել է, որ քննարկվող սկզբունքը հատկապես խնդրահարույց է միջազգային հանցագործություն կատարած անձանց հանձնման հարցում: Միջազգային դատարանները չեն կարողանում իրականացնել իրենց գործառույթները, եթե հանցանք կատարած անձինք թաքնվեն իրենց պետության տարածքում: Առաջարկվող լուծումը, որն առաջանում էր քննարկվող սկզբունքի կիրառման պարագայում մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում e aut dedere aut iudicare (հանձնելու կամ քրեական հետապնդման ենթարկելու) սկզբունքի ներդրումն էր: Այս սկզբունքը պետություններին պարտավորեցնում է կամ հանձնել իրենց տարածքում հայտնաբերված անձանց, որոնք այլ պետության կողմից հետախուզվում են հանձնման ենթակա հանցագործությունների համար, կամ դնում պետությունների վրա պարտականություն քրեական հետապնդման ենթարկել անձանց իրենց տարածքում<sup>35</sup>: Այնուամենայնիվ, այս սկզբունքի կիրառումը չի իրականացվում առանց խնդիրների:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ հարցերը իրենց լուծումն են գտել ձերբակալման եվրոպական որոշման կիրառման արդյունքում, որի դեպքում չեն կիրառվում վերը քննարկված մի շարք սկզբունքներ, ինչպես նաև գործում են այլ կանոններ:

2004 թվականից սկսած, երբ գործարկվեց ձերբակալման եվրոպական որոշումը (European Arrest Warrant), Եվրոպական Միության անդամ երկրների համար հանձնման գործընթացը դարձավ բավականին դյուրին, քանի որ այն հիմնվում էր անդամ պետությունների միջև փոխադարձ վստահության սկզբունքի և ԵՄ պետությունների դատարանների որոշումների փոխադարձ ընդունման վրա: Դրա հիմնական տարբերությունը սովորական հանձնման գործընթացից հետևյալն է՝

- ժամանակի խիստ սահմանափակում:

<sup>32</sup> Տե՛ս Terrorism, Criminal Law and Politics The Decline of the Political Offence Exception to Extradition, Julia Jansson, first published 2020, p. 59.

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>34</sup> Տե՛ս Article 7 Convention, drawn up on the basis of Article K.3 of the Treaty on European Union, relating to extradition between the Member States of the European Union, Dublin, 27 Sept. 1996, O.J. 1996, C 313/12.

<sup>35</sup> Տե՛ս on the principle and its history in more detail e.g. Bassiouni and Wise, 1995; and Plachta, 1999, 123–140.

Պետությունը, որի տարածքում անձը կալանավորված է պարտավոր է վերջնական որոշում ընդունել 60 օրվա ընթացքում:

- Արարքի՝ երկու պետությունում քրեորեն հետապնդելի լինելու սկզբունքը չի կիրառվում 32 ավելի հանցատեսակների նկատմամբ<sup>36</sup>: Մնացած դեպքերում հանձնումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ արարքը քրեորեն հետապնդելի է երկու պետությունների օրենսդրությամբ:
- Եվրոպական կալանքի սանկցիայի դեպքում ոչ մի հանցագործություն չի դիտարկվում քաղաքական բնույթի: Ինչի հետևանքով անձ զրկվում է հայտարարելու, որ իր նկատմամբ հետապնդումը քաղաքական բնույթի է<sup>37</sup>:

- ԵՄ պետությունները հանձնման մերժման հիմքում չեն դրել քաղաքացիության սկզբունքը, հակառակ դեպքում կպարտավորվեն անձին քրեական պատասխանատվության ենթարկել իրենց տարածքում և այլն:

Պետք է նշել նաև, որ Եվրոմիության խորհրդի 2002 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ խիստ սահմանափակվեցին նաև հանձնման մերժման դեպքում դրա հիմքերը:

Անդրադառնալով քննարկվող կարգավորմանը՝ անհրաժեշտ է նշել, որ թեև այն բավականին դյուրացնում է հանձնման գործընթացը, այնուամենայնիվ այն կիրառելի չի լինի ՀՀ-ում՝ նկատի ունենալով աշխարհաքաղաքական դիրքն ու իրավական համակարգերի տարբերությունները:



<sup>36</sup> Օրինակ՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, սպանություն, բռնաբառություն, փողերի լվացում, ահաբեկչությունը և այլն:

<sup>37</sup> Sնս Karpati V., Kummer T., Kiss P. Actual Problems with the European Arrest Warrant. P. 10 [Electronic resource]. URL: [www.ejtn.eu/.../Team%20HU%20semi%20final%20A.doc](http://www.ejtn.eu/.../Team%20HU%20semi%20final%20A.doc) (date of application: 24.08.2020).

**ՍԵՐԳԵՅ ԲԵՐԲԵՐՅԱՆ**

Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ

**ԽՈՍՏՄԱՆ ԷՍՏՈՊԵԼ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՅԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Ընդհանուր դրույթներ**

Հայտնի է, որ նախաքննության ընթացքում քննիչն օգտագործում է հատուկ մշակված հնարքներ, որոնք նպատակաուղղված են քննչական գործողությունների արդյունավետ կատարումն ապահովելու համար: Այդպիսի հնարքներն անվանում են տակտիկական (մարտավարական): Այդպիսի հնարքները հայտնի են վաղ ժամանակներից: Հին հույների մոտ «տակտիկա» հասկացությունը նշանակում էր «գործ կառուցելու արվեստ»:<sup>1</sup> Ներկայումս այն օգտագործվում է որպես նախատեսված նպատակին հասնելու մեթոդների և հնարքների ամբողջություն:<sup>2</sup> Կարելի է եզրակացնել, որ տակտիկական հնարքը քննչական գործողություններ կատարելու առավել ուսցիոնալ և արդյունավետ միջոց է, որն օրենքի շրջանակներում ընտրում է քննիչը՝ կախված կոնկրետ իրավիճակից: Խաբեությունը հասկացվում է որպես ինչ-որ բանի մասին ապակողմնորոշիչ, մոլորեցնող, կեղծ պատկերացում:<sup>3</sup> Ստացվում է, որ որպես տակտիկական հնարք՝ խաբեությունը քննիչի կողմից կիրառվող միջոց է քննչական գործողությունների ժամանակ, որն ուղղված է առավել պրոդուկտիվ կերպով հանցագործությունների բացահայտմանը: Գրականության մեջ քննիչի կողմից քննչական գործողությունների ժամանակ օգտագործվող այդպիսի մեթոդները հաճախ կոչվում են «հոգեբանական թակարդներ» և «Քննչական հնարքներ», որը կարելի է մեկնաբանել որպես խաբեություն: Լ.Լ. Կաննսկին նշում է, որ եթե տակտիկական

(մարտավարական) հնարքը հիմնված է քննիչի օրինական և բարոյական տեսանկյունից թուլատրելի գործողությունների վրա, ապա դրանք պետք է անվանել «հոգեբանական հնարքներ»<sup>4</sup>: Որպես տակտիկական հնարք՝ խաբեությունը կարող է դրսևորվել ակտիվ և պասիվ ձևով: Խաբեությունը դրսևորվում է ակտիվ ձևով, երբ խոսքը ճշմարտության գիտակցված խեղաթյուրման մասին է<sup>5</sup>: Իսկ պասիվ ձևով խաբեությունն առկա է, երբ սուբյեկտը միտումնավոր լռում է ճշմարտության մասին<sup>6</sup>:

**2. Խաբեության՝ որպես տակտիկական միջոցի թույլատրելիության սահմանները**

Առաջին հայացքից կարող է թվալ, թե սա բավականին լավ միջոց է հանցավորության դեմ պայքարի գործում, սակայն տվյալ մեթոդի կիրառումը կարող է առաջ քաշել մի շարք հարցեր, մասնավորապես՝ արդյո՞ք որոշակի տեղեկատվություն (ինֆորմացիան) թաքցնելու կամ իրականությանը մասնակի կամ ամբողջությամբ հակասող տեղեկատվություն հայտնելը ընդունելի արարք է, թե ոչ: Եթե ընդունելի է, ապա պետք է սահմանափակվի ինչ-որ պայմաններով, թե ոչ:

Տվյալ հարցի շուրջ դեռևս միասնական մոտեցում առկա չէ: Առաջին տեսակետի կողմնակիցները նշում են, որ քննչական պրակտիկական պետք է հիմնվի օրենքի նկատմամբ հարգանքով, հետևաբար, համապատասխանի բարոյականության սկզբունքներին, ինչը նշանակում է, որ այս դեպքում անհնար է խոսել խարդախ միջոցներով լավ նպատակին հասնելու

<sup>1</sup> Большая иллюстрированная энциклопедия / В 32 т. Т. 27. М.: АСТ Астрель, 2010. С. 88.  
<sup>2</sup> Большой словарь иностранных слов: сост. А.Ю. Москвин. М., 2008. С. 544.  
<sup>3</sup> Է.Աղայան. Արդի Հայերենի բացատրական բառարան, էջ 553:  
<sup>4</sup> Латко Д.К.О допустимости обмана в следственной практике, стр. 116.  
<sup>5</sup> С. В. Купрейченко.Введение в заблуждение и обман в уголовном процессе: соотношение понятий, последствия и процессуальное реагирование, стр. 146.  
<sup>6</sup> Филип Меленчук.Тактико-Криминалистические средства досудебного производства по делам о мошенничестве с использованием сети интернет, стр. 21.

մասին: Այս տեսակետի կողմնակիցն էր Մ.Ս. Ստրոգովիչը, ով նշում է. «Խաբեությունը կարող է լինել և՛ ակնհայտ սուտ, և՛ ունենալ թաքնըված բարդ ձև: Այսինքն՝ բառերը կարող են ճշմարիտ լինել, բայց խոսքն ինքնին կարող է հնչել այնպիսի ձևով, այնպիսի հուզականությամբ ու համապատասխան դեմքի արտահայտություններով, որ դատավարության մասնակիցը կարող է սուտը ընդունել որպես ճշմարտություն և հակառակը: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ խաբեությունը մատուցվում է խորամանկ ձևով, այն թույլատրելի չի դարձնում: Ընդհակառակը՝ այն ձեռք է բերում անհանդուրժողական, անօրինական և անբարոյական բնույթ:<sup>7</sup>

Երկրորդ տեսակետի կողմնակիցները հանդես են գալիս հակափաստարկով, ըստ որի՝ առաջին տեսությունը իդեալական է ու դեկլարատիվ և չի կարող համապատասխանել ժամանակակից աշխարհի իրողություններին: Իհարկե, պետք է հիշել, որ քննչական գործողությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով, սակայն գործնականում մեծ ծավալի աշխատանքը, ժամանակի սղությունը, հանցագործության հետ աշխատանքը միշտ չէ, որ թույլ է տալիս կիրառել օրինակելի հնարքներ<sup>8</sup>: Առաջիններից մեկը, ով բարձրացրել է խաբեության թույլատրելիության հարցը, եղել է Ռ.Ս. Բելկինը, ով նշում էր, որ այն պայմանները, որոնցում այսօր աշխատում են վարույթ իրականացնող մարմինները, իրապես էքստրեմալ (արտակարգ) են: Բացի գերծանրաբեռնվածությունից և ժամանակի մշտապես առկա սղությունից՝ հանցագործությունների բացահայտման դեմ մոլի պայքար է գնում հանցավոր աշխարհի կողմից: Այդ իսկ պատճառով անթույլատրելի է քննիչին զրկել ցանկացած տակտիկական միջոցից (հնարքից), որն ուղղված է հանցավորության դեմ պայքարին, միայն այն պատճառով, որ այն (տակտիկական միջոցը) կարող է կասկած առաջացնել «բարոյական մաքրության» վերացական պատկերացումների մասին:<sup>9</sup>

Բելկինը, ով առաջինն է խոսել խաբեության թույլատրելիության մասին, մատնանշել է նաև դրա բացարձակ անթույլատրելիության դեպքերը, երբ դա ոչնչով չի կարող արդարացվել: Այսպես՝ խաբեությունը կհամարվի անօրինական հետևյալ դեպքերում.

1. Քննչական գործողությունների ենթարկվող անձի իրավական անտեղյակության դեպքում (իր իրավունքների և պարտականությունների անտեղյակության, իր գործողությունների հետևանքների մասին սխալ պատկերացումների դեպքում),
2. Գիտակցաբար անձին տրված խոստումների դեպքում,
3. Կեղծված ապացույցների դեպքում,
4. Քննչական գործողությունների ենթարկվող անձի մոտ հոգեկան և այլ արատների առկայության դեպքում,
5. Անձի առեղծվածային և կրոնական նախապաշարմունքները հաշվի առնելու դեպքում:<sup>10</sup>

Գիտնականների մի խումբ էլ հակված է այն կարծիքին, որ իրավապահ գործունեությունը պետք է ունենա բարոյական սկիզբ: Այն չի կարող և չպետք է հակասությունների մեջ մտնի բարոյականության պահանջների հետ, և եթե խորամանկության տակ նկատի է առնվում նպատակի հետապնդումը խաբեության ճանապարհով, ապա բնական է, որ չի կարող խոսք լինել «խորամանկ» մեթոդների կիրառման մասին նախնական քննության ընթացքում ու դատարանում, նույնիսկ այն դեպքում, երբ նմանատիպ մեթոդները կօգնեն իրականության բացահայտմանը: Դրանք պետք է ճանաչել անթույլատրելի՝ միջանձնային հարաբերությունների բարոյական սկզբունքների տեսանկյունից, քանի որ դրանք վկայում են անձի նկատմամբ նվազագույն հարգանքի բացակայության մասին:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Քննչական գործողություններ կատարելիս անթույլատրելի է բռնու-

<sup>7</sup> А. Р. Белкин. Теория доказывания. Цит. Строгович М. С. Проблемы судебной этики // Колл. монография. М., 1974. С. 20.  
<sup>8</sup> Латко Д.К. О допустимости обмана в следственной практике, стр. 117.  
<sup>9</sup> Д. В. Зотов, В. А. Панюшкин. Обман в уголовном судопроизводстве: Сущность, Допустимость, формы, стр. 80.  
<sup>10</sup> Белкин Р.С. Нравственные начала деятельности следователя органов внутренних дел. Лекция. - М., 1999 стр. 22-23.

թյան, սպառնալիքների և այլ անօրինական միջոցների կիրառումը, որոնք կարող են անձանց կյանքի և առողջության համար վրանգ ստեղծել»:<sup>11</sup> «Այլ անօրինական միջոցներ» հասկացությունը չի մեկնաբանվում ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով: Այդպես՝ կարելի է ենթադրել, որ ՌԴ քր.դատ օրենսգրքը այդպիսի անթույլատրելի, անօրինական միջոցներից է համարում խաբեությունը, քանզի այն, ըստ էության, չի համապատասխանում դատավարության սկզբունքներին, նպատակներին ու խնդիրներին: Սակայն, մյուս կողմից, ՌԴ քր.դատ օրենսգրքում անօրինական միջոցների դասակարգման մեջ «խաբեություն» հասկացությունը չի հանդիպում, և հաշվի առնելով այդ փաստը՝ քննիչը իրավասու է կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ և օրենքներով:

Ադրբեջանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է. «...արգելվում է բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ և իրավունքները ոտնահարող այլ անօրինական միջոցների կիրառմամբ ցուցմունք վերցնել տուժողից, կասկածյալից կամ մեղադրյալից, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից»:<sup>12</sup>

Այստեղ խոսքը միայն ցուցմունք վերցնելիս խաբեության կիրառման անթույլատրելիության մասին և կարելի է ենթադրել, որ մյուս քննչական գործողությունների դեպքում որպես տակտիկական միջոց խաբեությունը կիրառելը արգելված չէ: Բացի այդ, տվյալ օրենքի նորմը չի մանրամասնում, թե որ տեսակի խաբեություն է արգելվում՝ ակտիվ, թե՛ պասիվ:

Նիդերլանդների թագավորության Վերաքննիչ դատարանը Guida Quint and Van den Brink & Co 1990 գործով արգելել է քննիչներին քննչական գործողությունների ժամանակ իրականությունը խեղաթուրող կեղծ հայտարարություն-

ներ անել և կեղծ խոստումներ տալ անձից հանցանքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:<sup>13</sup>

ԱՄՆ Իլինոյս և Օրեգոն նահանգներում արգելվել է խաբեությամբ տակտիկական հնարքների կիրառումը անչափահասների նկատմամբ, սակայն դրա կիրառումը, այնուամենայնիվ, օրենսդրորեն արգելված չէ 50 նահանգներում:<sup>14</sup> Դրան գումարած, ԱՄՆ մի շարք նահանգների Գերագույն դատարանները իրենց նախադեպային որոշումներում թույլատրել են քննիչների կողմից խաբեության կիրառումը: Այսպես՝ Oregon v. Mathiason ԱՄՆ Գերագույն դատարանը թույլատրել է քննիչներին խաբեությամբ պնդել, որ կասկածյալի մատնահետքերը հայտնաբերվել են հանցանքի վայրում այն դեպքում, երբ նման բան իրականում տեղի չի ունեցել:<sup>15</sup>

Commonwealth v Gallet-ի գործով Մասաչուսեթսի Գերագույն դատարանը հաստատել է ամբաստանյալի խոստովանության օրինականությունը: Սակայն, ամբաստանյալը պնդում էր, որ իրեն հարցաքննողները ճիշտ չեն ներկայացրել գործի հետ կապված ապացույցների բովանդակությունը և կեղծ երաշխիքներ են տվել, որի արդյունքում ամբաստանյալը ինքնախոստովանական ցուցմունք է տվել:<sup>16</sup>

1969 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը Frazier v.Cupp գործով հաստատել է քննիչի կողմից տակտիկական հնարքի՝ խաբեության միջոցով ձեռքբերված ապացույցների թույլատրելիության փաստը: Այս գործով Գերագույն դատարանը հաստատել է ամբաստանյալի խոստովանական ցուցմունքի օրինականությունը, որը քննիչի կեղծ հայտարարության արդյունքն էր այն մասին, թե իր հանցակիցը խոստովանական ցուցմունք է տվել: Սույն գործով Գերագույն դատարանը արձանագրել է, որ քննիչի կողմից խաբեությամբ արված տակտիկական հնարքը,

<sup>11</sup> Уголовно процессуальный кодекс России, ч.4, ст. 164.

<sup>12</sup> К.Нахапетян. Критерии допустимости тактических приемов (на примере тактического обмана, ст. 2.

<sup>13</sup> New journal of European Criminal Law.A pragmatic attitude: The right to silence in the Netherlands.

<sup>14</sup> Nigel Quiroz.Five Facts About Police Deception and Youth You Should Know.

<sup>15</sup> Cynthia, J. Najdowski. Deception in the interrogation room.

<sup>16</sup> Should Investigators Be Allowed To Lie About Evidence To A Subject During Interrogation?, Հղում՝ <https://reid.com/resources/whats-new/2019-should-investigators-be-allowed-to-lie-about-evidence-to-a-subject-during-interrogation>.

այնուամենայնիվ, կապ ունի գործի բնույթի հետ, սակայն այն չի կարող «այլ կերպ» ազդել ամբաստանյալի կամավոր ձևով խոստովանության վրա, և չի կարող այդ փաստը դարձնել անընդունելի ու անօրինական:

Կարևոր է ընդգծել Գերագույն դատարանի հետևյալ սահմանումը՝ «այլ կերպ ազդել կամավոր ձևով խոստովանության վրա», ինչը նշանակում է, որ եթե սուբյեկտի իրավունքները հարգվել են, այսինքն՝

1) եթե քննիչի կողմից չի եղել ուժի կիրառման կամ անխուսափելի վնասակար հետևանքների առաջացման սպառնալիք,

2) եթե չի եղել պատիժը մեղմացնելու խոստում,

3) եթե քննիչը քննչական գործողություններն իրականացնելիս ղեկավարվել է դատարանների կողմից սահմանված կարգով, ապա խաբեությունը որպես տակտիկական միջոց չի կարող վտանգի տակ դնել ինքնախոստովանության օրինականության հարցը:<sup>17</sup>

People v. Thomas գործով Նյու Յորքի Վերաքննիչ դատարանը հանգել է այն որոշման, որ քննիչների կողմից կիրառված տակտիկական հնարքի արդյունքում իր մանկահասակ երեխայի սպանության մեջ կասկածվող հոր ինքնախոստովանական ցուցմունքը կամավոր չէ, քանզի նրանք սուտ տեղեկություններ են տրամադրել կասկածյալին այն մասին, որ իր երեխան ողջ է, և նրա կնոջը սույն գործով պետք է մեղադրանք առաջադրվի: Արդյունքում հայրը ինքնասպանության փորձ էր կատարել: Վերաքննիչ դատարանը վճռեց, որ խաբեությամբ զուգորդվող տակտիկական հնարքներն անթույլատրելի են, քանզի ուղղված են անձի կամքին հակառակ:<sup>18</sup>

ԱՄՆ Նյու Յորք նահանգում այժմ քննարկվում է օրենքի մի նախագիծ, համաձայն որի՝ քննիչներին արգելվելու է օգտագործել խաբեությունը որպես տակտիկական միջոց քննչա-

կան գործողությունների ժամանակ: Դա ելնում է այն դիրքորոշումից, որ տվյալ տակտիկական միջոցի կիրառումը քննչական գործողությունների ժամանակ կարող է հանգեցնել ոչ կամավոր խոստովանության: Տվյալ հանգամանքն անընդունելի է, քանզի պատշաճ կերպով քննչական գործողությունների ընթացքն ապահովելու և անձի ինքնախոստովանական ցուցմունքն ապահովելու համար քննիչները պարտավոր են՝

1) Ապահովել, որպեսզի սուբյեկտի իրավունքները չխախտվեն:

2) Խուսափել ուժի կիրառումից, դրա կիրառման սպառնալիքից և անխուսափելի վնասակար հետևանքներ առաջացնելու սպառնալիքից:

3) Խուսափել պատիժը մեղմացնելու խոստումներից:

4) Անցկացնել քննչական գործողությունները դատարանների կողմից սահմանված կարգով:<sup>19</sup>

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ խաբեությունը՝ որպես տակտիկական միջոց հանցագործությունների բացահայտման արդյունավետ միջոցներից մեկն է, սակայն դրա կիրառումը չպետք է լինի անսահմանափակ: Հարկ է ընդգծել Բախինի հետևյալ խոսքերը. «Իրական խաբեությունը օգտագործվել և օգտագործվելու է քննիչների կողմից որպես տակտիկական հնարք, և պետք է առանձնացնել ու արգելել այն խաբեությունը, որը հակասում է քրեադատավարական իրավունքի սկզբունքներին ու նպատակներին»: <sup>20</sup> Այսինքն՝ խաբեությունը չպետք է հակասի անձի կամքին, չպետք է հիմնված լինի անձի՝ իր իրավունքների և պարտականությունների անտեղյակության, կեղծ ապացույցների, ուժի, դրա կիրառման սպառնալիքի, սուտ խոստումների, անձի մտավոր և հոգեկան արատներ ունենալու դեպքում:

<sup>17</sup> Law School Case Brief. Frazier v. Cupp - 394 U.S. 731, 89 S. Ct. 1420 (1969). հղում՝ <https://www.lexisnexis.com/en-us/lawschool/pre-law/how-to-brief-a-case.page>.

<sup>18</sup> Law School Case Brief. People v. Thomas - 729 P.2d 972. Հղում՝ <https://www.lexisnexis.com/en-us/lawschool/pre-law/how-to-brief-a-case.page>.

<sup>19</sup> Should Investigators Be Allowed To Lie About Evidence To A Subject During Interrogation? Հղում՝ <https://reid.com/resources/whats-new/2019-should-investigators-be-allowed-to-lie-about-evidence-to-a-subject-during-interrogation>.

<sup>20</sup> Б. В. Якимчук. Обман как тактическое средство при производстве следственных (розыскных) действиях с участием иностранцев, ст. 12.

**3. Խոստման էստոպել (Promissory estoppel) սկզբունքի նշանակությունը**

Սույն համատեքստում անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ հասկացությունները՝

**3.1 Խոստում**

Խոստումը որոշակի ձևով գործելու, ինչ-որ գործողություն կատարելու կամ ինչ-որ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու մտադրության դրսևորում է:<sup>21</sup> Խոստումը կարող է լինել հստակ կամ ենթադրյալ: Քրեադատավարական իրավունքում հստակ ձևով խոստումը դրսևորվում է, երբ քննիչը հստակ կերպով կասկածյալին կամ մեղադրյալին բարենպաստ արդյունքի հասնելու երաշխիք է տալիս: Օրինակ՝ քննիչը խոստում է տալիս պատիժը մեղմացնելու վերաբերյալ, եթե մեղադրյալը ինքնախոստովանական ցուցմունք տա: Ենթադրյալ խոստումը դրսևորվում է, երբ քննիչը խոստում է տալիս ավելի նուրբ, քողարկված ձևով: Օրինակ՝ երբ քննիչը իր ենթադրյալ խոստումը ձևակերպելիս օգտագործում է «ավելի բարենպաստ կլիներ», «ինքնախոստովանությունը կամ հանցագործության վերաբերյալ փաստական հանգամանքները մանրամասնելը լավ գաղափար է» և նմանատիպ բառակապակցություններ:<sup>22</sup> Այստեղ խոստումը դրսևորվում է վերբալ (բանավոր) եղանակով և չի ունենում առարկայական ձև, օրինակ, համագործակցության վարույթը: Արդյո՞ք քննիչի կեղծ խոստումը ակտիվ խաբեության դրսևորում է: Կեղծ խոստումը ապագայի հետ կապված հանգամանքների կեղծ հաղորդումներն են:<sup>23</sup> Սրանից կարելի է ենթադրել, որ կեղծ խոստումը գիտակցված իրականության, ապագայում տեղի ունեցող իրադարձությունների խեղաթյուրման դրսևորումն է, ինչը համապատասխանում է ակտիվ խաբեության պահանջներին, քանզի ակտիվ խա-

բեությունը ճշմարտության ու իրականության գիտակցված աղավաղումն է:

**3.2 Էստոպել**

Էստոպելը իրավական սկզբունք է, որի համաձայն՝ անձը զրկվում է առարկություն (պահանջ) ներկայացնելու կամ որոշակի փաստերի վրա հիմնվելու իրավունքից: Օրինակ՝ քաղաքացիական հայցվորը տեղյակ է դատավորին բացարկելու հիմքերի մասին, սակայն հրաժարվում է դատավորին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու դատավարական իրավունքից: Էստոպելի կանոնի համաձայն՝ քաղաքացիական հայցվորը նախորդող վարքագծի, այն է՝ դատավորին բացարկելու իրավունքից հրաժարվելու հետևանքով զրկվում է դատավորի անաչառության հիմքով դատական ակտը բողոքարկելու իրավունքից<sup>24</sup>:

**3.3 Խոստման էստոպել (Promissory estoppel)**

Սա իրավական սկզբունք է, որի համաձայն՝ խոստումն օրինական ուժ ունի՝  
 ա. նույնիսկ եթե այն տրվել է առանց պաշտոնական քննարկման,  
 բ. երբ խոստացողը խոստում է տվել խոստում ստացող անձին: Խոստում ստացող անձն իրավունք ունի նաև ապավինել այդ խոստմանը հետագայում վնաս կրելու դեպքում:<sup>25</sup>  
 Խոստման էստոպել ձևավորվում է այն դեպքում, երբ անձը մյուս կողմի համեմատ անբարեխիղճ առավելություն ձեռքբերելու նպատակով խոստում է տալիս և զրկվում է այդ առավելությունը օգտագործելու իրավունքից:  
 Խոստման էստոպելը նախատեսված է խոստացողին խանգարելու համար, որպեսզի նա չկարողանա խուսափել իր հիմնարար խոստման կատարումից կամ այն իրավաբանորեն հաստատելուց:

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 129 2022

<sup>21</sup> Legal dictionary. Հղում՝ [https://dictionary.law.com/Default.aspx?selected=1637#:~:text=1\)%20n.,item\)%20for%20the%20other%20promise.&text=2\)%20v.%20to%20make%20a,make%20a%20payment%20or%20delivery.](https://dictionary.law.com/Default.aspx?selected=1637#:~:text=1)%20n.,item)%20for%20the%20other%20promise.&text=2)%20v.%20to%20make%20a,make%20a%20payment%20or%20delivery.)  
<sup>22</sup> Margaux Joselow Promise-Induced False Confessions: Lessons from Promises in Another Context, p. 1683.  
<sup>23</sup> Юлия Малышева. Ответственность за преступления в сфере экономики, совершаемые путем обмана, по уголовному праву России, ст. 9.  
<sup>24</sup> Արթուր Ղամբարյան. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները, Օրինականություն N91 2016, էջ 26:  
<sup>25</sup> Law Shelf.Promissory Estoppel as a Substitute for Consideration.



Խոստման էստոպելի սկզբունքը Միացյալ Նահանգներում և այլ երկրներում օրենքի մի մասն է, թեև օրենքների ճշգրիտ իրավական պահանջները տարբերվում են ոչ միայն երկրների, տարբեր իրավահամակարգերի միջև, այլև նույն երկրի սահմաններում գտնվող նահանգների միջև<sup>26</sup>: Օրինակ՝ Ա-ն, ենթադրելով, որ ունի կնքված պայմանագիր, պարտավորվում է իրականացնել տան վերանորոգում, որից հետո վաճառել այն՝ պայմանով, որ վաճառքից ստացված գումարի 10%-ը պետք է ստանա որպես պարտավորությունների կատարման վարձատրություն: Ելնելով տվյալ հանգամանքից՝ Ա-ն վարձում է շինարարներ տան վերանորոգման համար՝ խոստանալով՝ տունը վաճառվելու դեպքում նրանցից յուրաքանչյուրին կտա տվյալ գործարքից իր ստացված շահույթի 10%-ը: Բնակարանը վերանորոգվում ու վաճառվում է, և Ա-ն ստանում է պայմանագրով նախատեսված իր շահույթը (վարձատրությունը): Կարճ ժամանակ անց պարզվում է, որ նախկինում կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը իր մեջ պարունակում է այնպիսի սխալ, ինչը բերում է պայմանագրի անվավերության: Նման պայմաններում Ա-ն հրաժարվում է շինարարներին տալ խոստացված գումարը: Ըստ promissory estoppel-ի կանոնների՝ շինարարներն իրավունք ունեն ստանալ իրենց խոստացված գումարը:

### 3.4 Դատախազական խոստման էստոպելի (Promissory estoppel of a prosecutor) սկզբունքի էությունը:

Սա խոստման էստոպել (promissory estoppel) իրավական սկզբունքի մասնավոր դրսևորումն է: Դատախազական խոստման էստոպելը կիրառվում է հիմնականում անգլոսաքսոնական իրավական համակարգում: Այս սկզբունքի էությունն այն է, որ որպես խոստում տվող սուբյեկտ հանդես է գալիս դատախազը: Այսինքն՝ դատախազը, ցանկանալով մյուս կողմի համեմատ անբարեխիղճ առավելություն ձեռքբերել, խոստում է տալիս՝ ձևավորելով էստոպել:

Ուշագրավ է Commonwealth of Pennsylvania v. Cosby գործով Փենսիլվանիայի Գերագույն դատարանի հայտնած դիրքորոշումը՝ կապված դատախազական խոստման հետ: Մասնավորապես, Փենսիլվանիայի Գերագույն դատարանը ընդգծել է, որ խոստման էստոպել առկա է՝

1) Երբ խոստացողը որդեգրել է այնպիսի վարքագիծ, ինչը դրդել է հակառակ կողմին գործելու տրված խոստմանը համապատասխան:

2) Տուժող կողմը պետք է ապացուցի, որ ցուցաբերել է խոստմանը համապատասխան վարքագիծ:

3) Տուժող կողմը պետք է ապացուցի, որ անարդարություն կառաջանար, եթե չկատարվեր գործողությունը դրդող երաշխիքը (խոստումը):

Դատարանը նշել է նաև, որ դատախազները կարող են կաշկանդված լինել իրենց խոստումներով և որոշումներով, որոնք պետք է համապատասխանեն արդարության հիմնարար սկզբունքներին: Դատախազները, պայմանավորված լինելով իրենց եզակի դերով քրեական արդարադատության համակարգում, կաշկանդված են իրենց խոստումներով հատկապես այն դեպքում, երբ այդ խոստումների վրա են հիմնվում ամբաստանյալները: Օրինակ՝ երբ դատախազի կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու մասին խոստումը ներկայացվում է որպես բացարձակ և վերջնական որոշում կամ հայտարարվում է այնպես, որ դրդում է մեղադրյալին գործել դատախազի կողմից տրված խոստմանը համապատասխան: Այս դեպքում դատախազի խոստումը կարող է հիմք հանդիսանալ հետագայում ամբաստանյալի դեմ քրեական հետապնդում հարուցելը մերժելու համար<sup>27</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ վարույթ իրականացնող մարմինը պետք է կաշկանդված լինի իր խոստումներով, քանզի այդ խոստումների վրա օբյեկտիվորեն կարող է հիմնվել կասկածյալը, մեղադրյալը և ապավինելով այդ խոստումների բարենպաստ արդյունքներին՝ կարող է տալ խոստովանական

<sup>26</sup> Anthony Battle. What is promissory estoppel?. Կայքի հղում՝ [https://www.investopedia.com/terms/p/promissory\\_estoppel.asp](https://www.investopedia.com/terms/p/promissory_estoppel.asp)  
<sup>27</sup> Pennsylvania v. Cosby and “promissory estoppel”, Lawrence B. Ebert).

ցուցմունք: Բացի այդ, կարծում ենք, որ խոստումը պետք է ունենա ֆորմալ (ձևական) ամրագրում, ինչպես օրինակ՝ համագործակցության վարույթի շրջանակում արդարադատության հետ կնքվող պայմանագիրը:

**Եզրահանգում:** Խոստումը կարող է լինել հստակ կամ ենթադրյալ: Քրեադատավարական իրավունքում հստակ ձևով խոստումը դրսևորվում է, երբ քննիչը հստակ կերպով կասկածյալին կամ մեղադրյալին բարենպաստ արդյունքի հասնելու երաշխիք է տալիս: Ենթադրյալ խոստումը դրսևորվում է, երբ քննիչը խոստում է տալիս ավելի նուրբ, քողարկված ձևով: Խոստման էստոպել ձևավորվում է այն դեպքում, երբ անձը մյուս կողմի համեմատ անբարեխիղճ առավելություն ձեռքբերելու նպատա-

կով խոստում է տալիս և զրկվում է այդ առավելությունը օգտագործելու իրավունքից: Դատախազական խոստման էստոպել սկզբունքի էությունը այն է, որ որպես խոստում տվող սուբյեկտ հանդես է գալիս դատախազը: Վարույթ իրականացնող մարմինը պետք է կաշկանդված լինի իր խոստումներով, քանզի այդ խոստումների վրա օբյեկտիվորեն կարող է հիմնվել կասկածյալը, մեղադրյալը և ապավինելով այդ խոստումների բարենպաստ արդյունքներին՝ կարող է տալ խոստովանական ցուցմունք: Բացի այդ, կարծում ենք, որ խոստումը պետք է ունենա ֆորմալ (ձևական) ամրագրում, օրինակ, համագործակցության վարույթի շրջանակում արդարադատության հետ կնքվող պայմանագիրը:



**ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ**

Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի իրավագիտության դոկտոր,  
Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հետազոտող

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐՆԵՐԸ

### 1. Ներածություն

Ժամանակակից տնտեսությունը հիմնված է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ տվյալների վերլուծության միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու գաղափարի վրա: Տնտեսվարող սուբյեկտների կողմից մշակվող տվյալների մեծամասնությունը կազմում են անձնական տվյալները, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել առցանց վճարումներ, մատուցել ծառայություններ, կանխատեսել հաճախորդների վարքագիծը: Անձնական տվյալները դարձել են նաև առանցքային ռեսուրս մարքեթինգի արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից<sup>1</sup>: Նկատի ունենալով տվյալների, ինչպես նաև թվային տեխնոլոգիաների կարևորությունը՝ տնտեսության ներկայիս մոդելը կոչվում է թվային կամ «տվյալահեն տնտեսություն»<sup>2</sup>:

Հաշվի առնելով անձնական տվյալների ինտենսիվ օգտագործումը թվայնացման դարաշրջանում՝ դրանց տիրապետող անձինք կարող են դառնալ կիբերհարձակումների զոհ, որոնց պարագայում կիբերհանցագործը կարող է արգելափակել հասանելիությունը տվյալներին՝ դրանց դիմաց պահանջելով դրամական փոխհատուցում: Ավելին՝ տնտեսվարող սուբյեկտների անզգուշության հետևանքով կարող է տեղի ունենալ անձնական տվյալների արտահոսք: Բացի այդ, տնտեսվարող սուբյեկտը կարող է չունենալ անձնական տվյալների մշակման հստակ ռազմավարություն, որի արդյունքում համակարգային միջոցառումներ չձեռնարկվեն տվյալների սուբյեկտների իրավունքները պաշտպանելու համար:

Վերոնշյալ վտանգների համատեքստում ՀՀ օրենսդրությունը, հանձինս «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի՝ նախատեսում է անձնական տվյալները մշակելու ընթացքում անվտանգության ապահովման միջոցներ կիրառելու պարտավորություն: Արդյո՞ք ՀՀ իրավունքը տնտեսվարող սուբյեկտներին և ոլորտը կարգավորող մարմինն տրամադրում է արդյունավետ գործիքակազմ՝ քննարկվող ոլորտում անվտանգային մարտահրավերներին դիմագրավելու համար: Արդյո՞ք ոլորտի իրավակարգավորումն օժտված է բավականաչափ ճկունությամբ տեխնոլոգիական զարգացումներին և փոփոխություններին ադապտացվելու համար: Եվ արդյո՞ք ՀՀ իրավունքն ապահովում է անձնական տվյալների անվտանգության արդյունավետ մեխանիզմներ՝ դեպի ՀՀ ձեռնարկատիրական նպատակներով տվյալների անդրասահմանային փոխանցման համար: Սրանք այն հարցերն են, որ առաջանում են թվային հասարակության և «տվյալահեն» տնտեսության պայմաններում:

Հաշվի առնելով քննարկվող թեմայի վերաբերյալ ՀՀ իրավունքում դոկտրինալ վերլուծությունների բացակայությունը՝ սույն հոդվածը, նախևառաջ, կոչված է բացահայտելու անձնական տվյալներ մշակելու անվտանգության հասկացությունը և դրա նշանակությունը (2): Այնուհետև, հոդվածը նպատակ է հետապնդում վերլուծել անձնական տվյալներ մշակելու անվտանգության իրավական հիմնախնդիրները, որոնք առկա են ՀՀ օրենսդրության մեջ (3):

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 129 2022

<sup>1</sup> HAUCAP, Justus, «Competition and Competition Policy in a Data-Driven Economy», Intereconomics, 2019, p. 207.  
<sup>2</sup> ZOLYNSKI, Célia, «Un nouveau droit de propriété intellectuelle pour valoriser les données: le miroir aux alouettes?», Dalloz IP/IT, 2018. 94.

**2. Անձնական տվյալներ մշակելու անվտանգության հասկացությունը և նշանակությունը**

*2.1. Անձնական տվյալներ մշակելու անվտանգության հասկացությունը*

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում «անվտանգությունը» բացարձակ հասկացություն չէ և պետք է սահմանվի՝ ելնելով որոշակի չափանիշներից<sup>3</sup>: Նախևառաջ, անձնական տվյալների մշակման անվտանգությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների իրականացում **որոշակի ռիսկերի զսպման նպատակով**: Այդ ռիսկերն անուղղակի կերպով սահմանված են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով: Այդպիսիք են՝ տվյալների պատահական կորուստը, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելը, անձնական տվյալների անօրինական օգտագործումը, ձայնագրումը, ոչնչացումը, վերափոխումը, ուղեփակումը, կրկնօրինակումը, տարածումը, ինչպես նաև այլ միջամտությունները:

Որոշ դեպքերում անձնական տվյալների մշակման անվտանգության կանոնները խախտելը կարող է հանգեցնել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման: *Z v. FINLAND* գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ անձնական տվյալների պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունի անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքից օգտվելու համար: Հետևաբար, ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխան երաշխիքներ նախատեսի՝ կանխելու համար անձնական առողջապահական տվյալների ցանկացած հաղորդում կամ բացահայտում, որը կարող է հակասել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին<sup>4</sup>:

Վերոնշյալ խախտումները կարող են նաև առաջացնել ռիսկեր տնտեսվարող սուբյեկտների համար, ինչպիսիք են ֆինանսական կորուստները էլեկտրոնային ծառայության խա-

փանման հետևանքով, ինչպես նաև ընկերության համբավի ռիսկը տվյալների արտահոսքի պատճառով<sup>5</sup>: Այսպիսով՝ անձնական տվյալների մշակման անվտանգության գաղափարը կառուցված է տվյալների սուբյեկտների և տվյալներ մշակողների շահերի համընկումների վրա, որը ենթադրում է, որ տվյալների սուբյեկտների իրավունքների խախտումը կարող է հանգեցնել տնտեսվարող սուբյեկտների շահերի խախտման:

Գնահատելով տվյալների մշակման անվտանգությանը սպառնացող ռիսկերը՝ տնտեսվարող սուբյեկտը պետք է պարզի, թե **ինչպիսի օբյեկտներ կարող են վնասվել** այդ ռիսկերի վրա հասնելու պարագայում: Որոշ դեպքերում տվյալների մշակման անվտանգության օբյեկտ են հանդիսանում էլեկտրոնային կամ տեղեկատվական համակարգերը, որոնք ավտոմատացված կարգով մշակում են անձնական տվյալներ կամ նախատեսված են այդպիսի տվյալների պահպանման կամ տվյալներն այլ սուբյեկտներին փոխանցելու համար: Տվյալ կոնտեքստում անհրաժեշտ է տարբերել անձնական տվյալների մշակման անվտանգությունը կիրառանվտանգությունից: Այսպես՝ ԵՄ Կիրառանվտանգության ակտի<sup>6</sup> 2-րդ հոդվածի համաձայն՝ «կիրառանվտանգություն» եզրույթը նշանակում է այնպիսի գործողությունների ամբողջություն, որոնք անհրաժեշտ են տեղեկատվական ցանցի և տեղեկատվական համակարգերի, այդ համակարգերի օգտագործողների և կիրառ սպառնալիքներից տուժած անձանց պաշտպանության համար: Նմանատիպ բնորոշումը թույլ է տալիս արձանագրել, որ կիրառանվտանգությունը կոչված է պաշտպանելու ոչ միայն անձնական տվյալները, ներառյալ՝ ինֆորմացիոն համակարգերը, որոնցում առկա են այդ տվյալները, այլ նաև ինտերնետային ցանցը և տեղեկատվական համակարգերը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանցում ներառված տվյալները իրենց բնույթով անձնական են, թե՛ ոչ: Մինչդեռ անձնական տվյալներ-

<sup>3</sup> HERVEG, Jean, «Deep Diving into Data Protection», Bruxelles, Larcier, 2021, p. 258.

<sup>4</sup> ECHR, *Z v Finland*, paras. 95–96.

<sup>5</sup> HERVEG, Jean, «Deep Diving into Data Protection», op. cit., p. 260.

<sup>6</sup> Ակտի ամբողջական անվանումը՝ Regulation (EU) 2019/881 of the European Parliament and of the Council of 17 April 2019 on ENISA (the European Union Agency for Cybersecurity) and on information and communications technology cybersecurity certification and repealing Regulation (EU) No 526/2013.

րի մշակման անվտանգության պարագայում ինֆորմացիոն համակարգերը պաշտպանվում են այնքանով, որքանով անհրաժեշտ են անձնական տվյալներ մշակելու (պահպանելու, վերլուծելու, փոխանցելու) համար:

Որպես տվյալների մշակման անվտանգության օբյեկտ կարող են լինել նաև նյութական կրիչները, որոնք օգտագործվում են անձնական տվյալները պահպանելու կամ փոխանցելու համար: Օրինակ, եթե անձը որոշում է տվյալները պահպանել USB կրիչի վրա, ապա պետք է ապահովի կողմնակի անձանց հասանելիության անհնարինությունը վերջինիս:

Սակայն որոշ դեպքերում տվյալների անվտանգության ապահովումն իրականացվում է ոչ թե որոշակի օբյեկտների անվտանգությունն ապահովելու, այլ ուղղակիորեն անձի վարքագծի վրա ներազդելու միջոցով: Մասնավորապես, ընկերության վեբ կայքը, համակարգչային ծրագրերը և նյութական կրիչները կարող են տեխնիկապես անվտանգ լինել, սակայն տվյալների արտահոսքը, վնասումը կամ կորուստը կարող է լինել տվյալները մշակող սուբյեկտի աշխատողի անփույթ գործողությունների հետևանք: Հետևաբար, ընկերությունը պարտավոր է իր ներքին իրավական ակտերով կարգավորել անձնական տվյալների օգտագործման և պաշտպանության կանոնները:

Անձնական տվյալների մշակման ռիսկերն ու պաշտպանության ենթակա օբյեկտներն իդենտիֆիկացնելուց հետո տնտեսվարող սուբյեկտի հաջորդ քայլը այդ ռիսկերը կանխելու նպատակով որոշակի **միջոցառումների իրականացումն է**, որոնք իրենց բնույթով կարող են լինել՝

**1. Տեխնիկական միջոցառումներ:** Օրինակ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է տվյալներ մշակողին իրականացնել գաղտնագրման միջոցներ՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց պաշտպա-

նելու համար: Գաղտնագրման օրինակ է, երբ տվյալներ մշակողը անձնական տվյալների բազան դարձնում է անընթեռնելի երրորդ անձանց համար՝ տվյալներին հասանելիություն տալով միայն ընկերության որոշ աշխատակիցների:

**2. Կազմակերպարավական միջոցառումներ:** Որոշ միջոցառումներ կրում են կազմակերպական կամ իրավական բնույթ: Մասնավորապես, տվյալներ մշակողը կարող է ընդունել անձնական տվյալների դասակարգման քաղաքականություն<sup>7</sup> կամ սահմանել տվյալների հասանելիության տարբեր աստիճաններ տարբեր հաստիքներ զբաղեցնող աշխատակիցների համար և այդ նպատակով ընդունել համապատասխան ներքին իրավական ակտեր: Բացի այդ, որոշ դեպքերում անձնական տվյալների մշակումն իրականացվում է մի քանի սուբյեկտների կողմից: Այսպես՝ համաձայն Օրենքի՝ 14-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում տվյալներ մշակողին ներգրավել լիազորված անձի՝ վերջինիս ղեկգացնելով անձնական տվյալների մշակումը: Այս պարագայում նրանց միջև կնքվում է պայմանագիր, որը, ի թիվս այլ դրույթների, ներառում է տվյալների մշակման անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները:

Տվյալների մշակման անվտանգությունը ենթադրում է միաժամանակ *a priori* միջոցների ձեռնարկում՝ **տվյալների անվտանգության խախտումը կանխելու նպատակով**, ինչպես նաև *a posteriori* քայլերի ձեռնարկում՝ խախտումը հայտնաբերելուց հետո **խախտման հետևանքները նվազագույնի հասցնելու կամ չեզոքացնելու նպատակով**<sup>8</sup>: Մասնավորապես, գործերից մեկով Ֆրանսիայի Ինֆորմատիկայի և ազատությունների ազգային գործակալությունը (ֆրանս.՝ Commission Nationale de l'Informatique et des Libertés, այսուհետ՝ CNIL) երկու անգամ նվազեցրել է տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակված տուգանքի չափը տվյալների պաշտպանության խախտմանը հաջորդող ուղղիչ քայլերի ձեռնարկման, ինչ-

<sup>7</sup> CNIL, «La sécurité des données personnelles», 2018, p. 8.

<sup>8</sup> CASTETS-RENARD, Céline, CATELAN, Nicolas, «Données à caractère personnel – Aspect pénal – Révisions de la loi Informatique et Libertés pour transposition de la directive no 2016/680/UE du Parlement européen et du Conseil du 27 avril 2016 en matière pénale», Dalloz, 2019, p. 45.

պես նաև վերջինիս կողմից ստուգման ընթացքում համագործակցության համար<sup>9</sup>:

Այսպիսով՝ վերոշաղկի վերլուծությունը թույլ է տալիս բնորոշել տվյալների մշակման անվտանգության ապահովման պարտավորությունը որպես **տեխնիկական և կազմակերպահրավական տարաբնույթ միջոցառումների ամողջություն, որոնք կոչված են ապահովելու անձնական տվյալների պաշտպանվածությունը պատահական կորստից, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ձայնագրումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլ միջամտությունից:**

*2.2. Անձնական տվյալներ մշակելու անվտանգության իրավական նշանակությունը*

Անձնական տվյալներ մշակելու անվտանգության հասկացությունը պարզաբանելուց հետո հաջորդ քայլը անձնական տվյալներ մշակելու անվտանգության իրավական նշանակությունը բացահայտելն է: Նախևառաջ, անձնական տվյալներ մշակելու անվտանգության ապահովումը ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով ամրագրված **անձնական տվյալների պաշտպանության իրավունքի բաղադրատարրերից մեկն է**, ի թիվս այլ իրավական երաշխիքների, ինչպիսիք են Օրենքի 4-7-րդ հոդվածներով սահմանված անձնական տվյալների մշակման սկզբունքները, տվյալների սուբյեկտների՝ օրենսդրորեն ամրագրված իրավունքները և այլն: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց սույն հոդվածի շրջանակներում, անձնական տվյալների մշակման անվտանգության միջոցառումների ձեռնարկումը նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման կարևորագույն երաշխիք է:

Սակայն անձնական տվյալների մշակման անվտանգության նշանակությունը չի սահմանափակվում տվյալների սուբյեկտների իրավունքների պաշտպանությամբ: Այն կարևոր դեր է խաղում **թվային տնտեսության իրավական**

**ապահովման հարցում:** Գաղտնիք չէ, որ 21-րդ դարում էլեկտրոնային առևտուրը առավելապես հիմնված է **անձնական տվյալների անդր-սահմանային փոխանցումների** վրա: Հաշվի առնելով ՀՀ-ում SS ոլորտի զարգացվածությունը՝ օտարերկրյա ընկերությունները կարող են պայմանագրի հիման վրա դեֆագացնել անձնական տվյալների մշակումը ՀՀ-ում գործունեություն ծավալող ընկերություններին: Այն պարագայում, երբ ԵՄ Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (այսուհետ՝ GDPR կամ Կանոնակարգ) իրավազորության ներքո գտնվող տվյալներ մշակողները ցանկանում են պարբերաբար փոխանցել անձնական տվյալներ ՀՀ-ում գործող կազմակերպություններին, ապա անհրաժեշտ է, որ ԵՄ Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատի, որ երրորդ երկիրը երաշխավորում է անձնական տվյալների՝ ԵՄ իրավունքին ներդաշնակ պաշտպանության մակարդակ: Կանոնակարգի 45-րդ հոդվածի 2-րդ մասը երրորդ երկրի պաշտպանվածության մակարդակը գնահատելիս հաշվի է առնում նաև տվյալների անվտանգության<sup>10</sup> ապահովմանն ուղղված երաշխիքների առկայությունը:

Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կողմից երրորդ երկրի, իսկ տվյալ դեպքում՝ ՀՀ-ան նկատմամբ ներդաշնակեցման որոշում չի կայացվել (որն այդպես էլ կա), ապա համաձայն GDPR-ի 46-րդ հոդվածի՝ տվյալներ մշակողը կամ լիազորված անձը պարտավոր է *հնարավորության սահմաններում* ապահովել երրորդ երկրում փոխանցվող տվյալների պաշտպանվածության բավարար երաշխիքներ, ինչպես նաև հետևել, որ ԵՄ ռեզիդենտ տվյալների սուբյեկտներն օժտված լինեն իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներով: Այսինքն՝ եթե *a priori* ընդունենք, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձնական տվյալների անվտանգության ապահովման միջոցները էականորեն ցածր պաշտպանվածության մակարդակ են ապահովում՝ համեմատած ԵՄ իրավունքի, ապա տվյալ պարագայում ՀՀ տնտեսվարողները, ինչպես նաև GDPR-ի իրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>9</sup> Délibération de la formation restreinte de la CNIL n° SAN-2018-002 du 7 mai 2018.

<sup>10</sup> Չնայած որ Կանոնակարգն օգտագործում է «տվյալների անվտանգություն» եզրույթը, բովանդակապես այն նույնական է Օրենքով սահմանված «տվյալների մշակման անվտանգություն» հասկացությանը:

վազորության ներքո գտնվող այլ ընկերությունները պարտավոր են ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ անվտանգության այդ բացը լրացնելու համար: Նմանատիպ միջոցառումների շարքին է դասվում տվյալներ փոխանցող և տվյալներ ստացող ընկերությունների միջև պայմանագրային այնպիսի դրույթների ներառումը, որոնք նախատեսում են տվյալներ ստացող ընկերության կողմից որոշակի անվտանգային երաշխիքների տրամադրում:

Այսպիսով՝ անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովումը ոչ միայն էական նշանակություն ունի անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների իրականացման տեսանկյունից, այլ նաև անհրաժեշտ նախապայման է SS ոլորտում և էլեկտրոնային առևտրում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար: Հոդվածի տրամաբանական շարունակությունը ենթադրում է պարզել, թե արդյոք ՀՀ-ում անձնական տվյալների մշակման անվտանգության իրավակարգավորումն արդյունավետ կերպով ի վիճակի է հաղթահարել թվայնացման արդյունքում առաջացած մարտահրավերները:

**3. Անձնական տվյալներ մշակելու անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում:**

Ինչպես նշվեց, անձնական տվյալների մշակման անվտանգությունը կոչված է զսպելու այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են այդ տվյալների անօրինական օգտագործումը, ձայնագրումը, ոչնչացումը, վերափոխումը, ուղեփակումը, տարածումը, տեղեկատվական համակարգեր անօրինական մուտք գործելը և այլն: Դրանք կանխելու նպատակով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է անձնական տվյալներ մշակելու ընթացքում անվտանգության ապահովման որոշակի միջոցառումներ կիրառելու պարտավորություն: Սակայն Օրենքի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ քննարկվող բնագավառում առկա են տարաբնույթ խնդիրներ, որոնք կներկայացվեն ստորև:

*3.1. Անձնական տվյալներ մշակելու անվտանգությունն ապահովելու միջոցառումների գնահատման չափանիշների անորոշությունը*

Նախևառաջ, չնայած այն բանին, որ Օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է անվտանգային որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ, բավարար կոնկրետությամբ չի տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին այդ միջոցառումների գնահատման չափորոշիչները: Ո՛չ Օրենքը, ո՛չ էլ դրա ընդունման նախապատրաստական աշխատանքները թույլ չեն տալիս հասկանալ, թե ինչպիսի հանգամանքներ պետք է հաշվի առնվեն տնտեսվարող սուբյեկտի կողմից անձնական տվյալների մշակման անվտանգության քաղաքականությունը մշակելիս: Այս կոնտեքստում առավել արդյունավետ կարգավորում է նախատեսված GDPR-ի 32-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ հաշվի առնելով ոլորտի վերաբերյալ առկա գիտելիքները, տվյալների մշակման ծախսերը, մշակման բնույթը, շրջանակը, համատեքստը և նպատակները, ինչպես նաև անձանց իրավունքներին և ազատություններին սպառնացող ռիսկերը, որոնց հավանականության աստիճանն ու ծանրությունը կարող են տարբերվել, տվյալները մշակողը և լիազորված անձն իրականացնում են համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ ռիսկին համահունչ անվտանգության մակարդակ երաշխավորելու համար: Այսպիսով՝ GDPR-ը նախատեսում է ռիսկի վրա հիմնված մոտեցում՝ որոշելու համար, թե որ տեխնիկական և կազմակերպչական միջոցառումները կարող են կիրառվել տվյալ իրավիճակում ծառայած համապատասխան ռիսկը կանխելու նպատակով<sup>11</sup>: Ընդ որում, գործերից մեկով CNIL-ը գտել է, որ տվյալների սուբյեկտներին պատճառված վնասի բացակայությունը չի ազդում անվտանգության թերության առկայության վրա, որը GDPR-ի 32-րդ հոդվածի խախտում է<sup>12</sup>: Հետևաբար, GDPR-ի նպատակն է պատժել և կանխել այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որն առաջացնում է վերոնշյալ հոդվածով նախատեսված ոչ

<sup>11</sup> VOIGT, Paul, VON DEM BUSSCHE, Axel, «The EU General Data Protection Regulation (GDPR): A Practical Guide», Springer, 2017, p. 40.  
<sup>12</sup> Délibération de la CNIL n° SAN-2021-020 du 28 décembre 2021.

ցանկալի հետևանքները (տվյալների ուղեփակում, ոչնչացում և այլն):

Ըստ GDPR-ի՝ տվյալների մշակման անվտանգությունը հանդիսանում է **ողջամիտ վարքագծի ստանդարտ**, որի էությունն այն է, որ տնտեսվարող սուբյեկտները պետք է գործադրեն լավագույն ջանքերը՝ տվյալների մշակման անվտանգությունն ապահովելու համար<sup>13</sup>: Հետևաբար, վերջինս միջոցի, այլ ոչ թե արդյունքի պարտավորություն է: Նման մոտեցումն ամբողջովին արդարացված է և պայմանավորված է մի շարք պատճառներով: Մասնավորապես, այնպիսի բացասական հետևանքը, ինչպիսին է տվյալների ոչնչացումը, կարող է լինել տարերային աղետների հետևանք, որի պարագայում ողջամիտ անձը չէր կարող ապահովել տվյալների անվտանգությունը: Որոշ դեպքերում էլ որոշակի անվտանգային ծրագրային համակարգ ձեռք բերելը կարող է լինել այնքան ծախսատար, որ վերջինիս ներդրման դեպքում ծառայություն մատուցելը չլիներ նպատակահարմար շուկայի խաղացողների համար: Բացի այդ, կիրառական ցածր լարող է օգտագործել այնպիսի գործիքներ, որոնք օբյեկտիվ պատճառներով չեն հասցրել ուսումնասիրվել ոլորտի մասնագետների կողմից՝ դրանց հետևանքները չեզոքացնելու համար: Հետևաբար, GDPR-ի կողմից որդեգրված մոտեցումը կոչված է հավասարակշռություն հաղորդելու անձանց իրավունքներին սպառնացող ռիսկերի և տնտեսվարող սուբյեկտների ձեռնարկատիրական շահերի միջև: Մինչդեռ ՀՀ օրենսդիրը որևէ կերպ չի սահմանում այն չափորոշիչները, որոնց վրա պետք է հիմնվեն տվյալներ մշակողները անվտանգային միջոցառումներ ձեռնարկելիս, այլ ընդամենը սահմանափակվում է որոշ անվտանգային միջոցառումներ թվարկելով:

*3.2. Անձնական տվյալների մշակման անվտանգության գործիքակազմի հետք կապված խնդիրները*

Մյուս խնդիրը վերաբերում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տվյալների մշակման

անվտանգության միջոցառումների բովանդակությանը: Ցավով պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությունը տվյալներ մշակողներին չի ապահովում անձնական տվյալների անվտանգության ապահովման արդյունավետ գործիքակազմով: Մասնավորապես, Օրենքը չի պարտավորեցնում տվյալներ մշակողին կիրառել **տվյալների պսևվորնիմիզացիայի** միջոցառումներ: Պսևվորնիմիզացիայի դեպքում այն տվյալները, որոնք կարող են հնարավորություն ընձեռել նույնականացնել անձին, փոխարինվում են կեղծ տվյալներով կամ պսևվորտվյալներով: Օրինակ՝ տվյալների սուբյեկտների անուն-ազգանունը և էլեկտրոնային հասցեն անհրաժեշտ են տվյալ սուբյեկտների՝ Օրենքով նախատեսված իրավունքներն իրականացնելու համար<sup>14</sup>, սակայն COVID 19-ի հետևանքների կամ բարդությունների վերաբերյալ հասարակության լայն շերտերում ուսումնասիրության տեսանկյունից վերոնշյալ տվյալների մշակումն անհրաժեշտ չէ: Հետևաբար, այդ տվյալները մասնագետների կողմից մշակվելիս կարող են փոխարինվել պսևվորտվյալներով, և իրական տվյալների հասանելիությունը կարող է տրվել իրավաբանական անձի սահմանափակ թվով աշխատակիցների: Այնուհետև, երբ անձնական տվյալների վերլուծության արդյունքում տրվի եզրակացություն տվյալների սուբյեկտի առողջական վիճակի վերաբերյալ, տվյալները մշակողի աշխատակիցը հատուկ կողմի միջոցով կարող է վերականգնել պսևվորնիմիզացված տվյալը և ծանուցել տվյալների սուբյեկտին վերջինիս առողջական խնդիրների մասին: Ընդ որում, հնարավոր կեղծանունների թիվը պետք է լինի այնքան, որ նույն կեղծանունը երբեք պատահականորեն չընտրվի երկու անգամ<sup>15</sup>:

Տվյալների պսևվորնիմիզացիան պետք է տարբերել դրանց **ապանձնավորումից**, որի պարագայում իրականացվում են գործողություններ, որոնց արդյունքում հնարավոր չէ որոշել տվյալների պատկանելությունը կոնկրետ տվյալների սուբյեկտին: Մեր կողմից ներկայացված օրինակում, եթե ընդունենք, որ տնտես-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>13</sup> SCHREIDER, Tari, «Cybersecurity Law, Standards and Regulations», 2<sup>nd</sup> edition, Rothstein publishing, 2020, p. 48  
<sup>14</sup> Մասնավորապես, խոսքը կարող է գնալ Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված՝ տվյալների սուբյեկտի կողմից տվյալների մշակման մասին տեղեկություն ստանալու իրավունքի իրականացմանը:  
<sup>15</sup> Article 29 Data protection Working party, Opinion 4/2007 on the concept of personal data, 2007, p. 18.



վարող սուբյեկտի նպատակը միայն COVID-19-ի հետևանքների կամ բարդությունների վերաբերյալ հասարակության լայն շերտերում ուսումնասիրություն կատարելն է՝ հիվանդության, այլ ոչ թե կոնկրետ հիվանդների առողջական վիճակի մասին եզրակացություն ստանալու նպատակով, ապա այս պարագայում անհրաժեշտ միջոցառում է տվյալների ապանձնավորումը: Ընդ որում, տվյալների սուբյեկտներին նույնականացնելու հնարավորությունը գնահատելիս հարկավոր է հաշվի առնել տվյալներ մշակողի կամ որևէ այլ անձի կողմից ձեռնարկվելիք բոլոր այն միջոցները, որոնք, հավանաբար, ողջամտորեն կօգտագործվեն վերջիններիս կողմից՝ տվյալների սուբյեկտներին նույնականացնելու համար<sup>16</sup>:

Գոյություն ունեն նաև այլ կարևոր անվտանգային միջոցառումներ, որոնք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, GDPR-ի 32-րդ հոդվածի համաձայն՝ տվյալներ մշակողը պարտավոր է մշակել ընթացակարգեր, որոնք ուղղված են տվյալների մշակման անվտանգության ապահովմանն ուղղված **տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների արդյունավետության կանոնավոր փորձարկմանը**, վերլուծությանը և գնահատմանը: Այսինքն՝ տվյալներ մշակողը պարտավոր է փոփոխել տվյալների անվտանգության ապահովման համար գործադրված տեխնիկական և կազմակերպչական միջոցառումները, եթե պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում պարզ է դառնում, որ այդ միջոցառումները համարժեք չեն տվյալները մշակելու հետ կապված ռիսկերին: Տվյալ նորմի կիրառման նպատակով CNIL-ն արձանագրել է, որ տվյալներ մշակողը պարտավոր է պարբերաբար աուդիտի ենթարկել իր վեր կայքը տվյալների անվտանգության հետ կապված խնդիրները բացահայտելու համար<sup>17</sup>:

Այսպիսով՝ վերը նշված միջոցառումները թույլ են տալիս առավել արդյունավետ կերպով ապահովել անձնական տվյալների մշակման

անվտանգությունը: Հետևաբար, դրանց ամրագրումն օրենսդրությամբ էականորեն կբարձրացնի տվյալների մշակման անվտանգության մակարդակը: Սակայն մյուս կողմից, տեխնոլոգիաների զարգացումն իր հետ օրեցօր բերում է նոր անվտանգային մարտահրավերներ, որին արձագանքելու նպատակով իրականացվող օրենսդրական գործընթացը կարող է տևել ամիսներ: Ավելին, նույնիսկ ամիսներ առաջ ընդունված նորմատիվ իրավական ակտերը կարող են ի վիճակի չլինել հաղթահարելու տեխնոլոգիաների արագընթաց զարգացմամբ պայմանավորված խնդիրները, որն էլ իր հերթին բերի օրենսդրական նոր փոփոխության անհրաժեշտություն<sup>18</sup>: Արդյունքում, տեխնոլոգիական զարգացումները դրդում են փնտրելու այլընտրանքային և ավելի ճկուն իրավակարգավորման մոդել: Որպես այդպիսին կարող է լինել **«փափուկ իրավունքի»** կոնցեպտը:

### 3.3. «Փափուկ իրավունքի» կիրառման անհրաժեշտությունը

«Փափուկ իրավունք» եզրույթի ներքո պետք է հասկանալ սոցիալական նորմերի ամբողջությունը, որոնք, չնայած որ չեն հանդիսանում իրավական նորմեր, այնուամենայնիվ կարող են ազդեցություն ունենալ իրավունքի սուբյեկտների վարքագծի վրա<sup>19</sup>: Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում «փափուկ իրավունքի» էությունն այն է, որ պետական մարմինների կողմից խորհրդատվական որոշումների կամ ուղեցույցների ձևով ընդունվում են այնպիսի որոշումներ, որոնք թեկուզև նորմատիվ իրավական ակտեր չեն, սակայն պարունակում են որոշակի բնագավառներում վարքագծի անհրաժեշտ կանոններ՝ հիմնված փորձագետների եզրակացությունների և ոլորտում ձևավորված լավագույն փորձի վրա:

Անձնական տվյալների պաշտպանության բնագավառում «փափուկ իրավունքի» կիրառման առանձնահատկությունների մասին պատկերացում կարելի է կազմել Ֆրանսիայի իրա-

<sup>16</sup> Ibid, p. 21.

<sup>17</sup> Délibération de la CNIL n° SAN-2018-002 du 7 mai 2018.

<sup>18</sup> MERABET, Samir, Vers un droit de l'intelligence artificielle, thèse pour le doctorat en droit privé, Université d'Aix-Marseille, 2018m p. 298.

<sup>19</sup> GERSEN, Jacob, POSNER, Eric, «Soft Law», Stanford Law Review, Public Law and Legal Theory Working Paper No. 213, 2008, p. 1.

վակիրառ պրակտիկայի վերլուծությամբ: Գործերից մեկով ընկերությունը չէր իրականացրել սերվերի մուտքերի գրանցման որևէ միջոցառում, որի իրականացումը, այնուամենայնիվ, հնարավոր կդարձներ բացահայտել սերվերի վրա կատարված ապօրինի գործողությունները, ինչպիսիք են կեղծ անձնական տվյալների մուտքագրումները<sup>20</sup>: Տնտեսվարող սուբյեկտը առարկում էր, որ վերոնշյալ միջոցառումը չէր կրում համապարտադիր բնույթ, քանի որ այն նախատեսված էր խորհրդատվական ուղեցույցով, այլ ոչ թե նորմատիվ իրավական ակտով: CNIL-ի դիրքորոշմամբ՝ սերվերներում մուտքերի գրանցումներ իրականացնելը պատշաճ վարքագծի էլեմենտար կանոն է, և չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ տեխնիկական միջոցառումը նախատեսված չէ օրենսդրությամբ, վերջինիս կիրառումը բխում է GDPR-ի 32-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովմանն ուղղված տեխնիկա-կազմակերպչական միջոցներ ձեռնարկելու իմպերատիվից<sup>21</sup>: Այսինքն՝ CNIL-ը ընկերությանը ենթարկել է պատասխանատվության ոչ թե խորհրդատվական ուղեցույցը, այլ GDPR-ի 32-րդ հոդվածը խախտելու համար՝ խորհրդատվական ուղեցույցով նախատեսված անվտանգային միջոցառումը համարելով տվյալ գործով լավագույն միջոցը GDPR-ի 32-րդ հոդվածով սահմանված տվյալների մշակման անվտանգությունն ապահովելու համար: «Փափուկ իրավունքի» վերոնշյալ նորմով ամրագրված միջոցառումներն իրենց անհրաժեշտության և արդյունավետության ուժով (այլ ոչ թե նորմատիվ իրավական ակտում ամրագրված լինելու հիմքով) պետք է իրականացվեն իրավունքի սուբյեկտների կողմից: Սակայն, եթե փափուկ իրավունքի հասցեատերը չի ցանկանում կիրառել «փափուկ իրավունքով» ամրագրված միջոցառումը, ապա նա պարտավոր է այնպիսի այլընտրանքային իրավաչափ միջոցառում կիրառել, որն առնվազն ապահովում է անվտանգության այնպիսի մակարդակ,

ինչպիսին կլինեն «փափուկ իրավունքով» ամրագրված միջոցառումների իրականացման արդյունքում:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում քննարկվող կոնցեպտի կիրառման հեռանկարներին, ապա օրենսդրությունը ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը (այսուհետ՝ Գործակալություն) տալիս է հնարավորություն ձևավորելու «փափուկ իրավունքի» նորմեր՝ հիմնվելով տեխնոլոգիական ոլորտում առկա լավագույն փորձի վրա: Մասնավորապես, Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետը հնարավորություն է ընձեռում լիազոր մարմնին տալ տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնել անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին: Չնայած այն հանգամանքին, որ լիազոր մարմնի ուղեցույցերով նախատեսված անվտանգային միջոցառումները կրում են խորհրդատվական բնույթ, այնուամենայնիվ, դրանք հանդիսանում են ուղղորդող նորմեր, որոնց հետևելը կվկայի այն բանի մասին, որ տվյալներ մշակողը ձեռնարկել է անձնական տվյալներ մշակելու անվտանգության ապահովման միջոցներ:

Ճիշտ է, վերջին տարիներին Գործակալության կողմից որոշ աշխատանքներ են իրականացվել անձնական տվյալների պաշտպանության բնագավառում «փափուկ իրավունքի» ձևավորման ուղղությամբ, այնուամենայնիվ, դրանք մասնավոր դեպքեր են, և չեն արտահայտում համակարգային մոտեցումներ տնտեսվարող սուբյեկտների անհրաժեշտ վարքագծի ուղղորդման հարցում<sup>22</sup>: Բացի այդ, չնայած որ տվյալների մշակման անվտանգության միջոցառումները հաճախ առնչվում են տեխնիկական բնույթի հարցերին, Գործակալության կողմից տրված չեն պարզաբանումներ և խորհրդատվական որոշումներ վերջիններիս էության և պրակտիկ կիրառման վերաբերյալ:

Հաշվի առնելով քննարկվող բնագավառում ՀՀ օրենսդրությամբ առկա խնդիրները,

<sup>20</sup> Délibération de la CNIL n° SAN-2021-020 du 28 décembre 2021.

<sup>21</sup> Ibid.

<sup>22</sup> Վերջին տարիներին գործակալության կողմից ընդունվել են որոշ ուղեցույցներ, որոնց թվում են հետևյալ աղբյուրները. «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց», 2017թ.: «Ուղեցույց. Անձնական տվյալների մշակումը հիշողության սարքեր պարունակող սարքավորումների տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման ծառայություններ մատուցողների կողմից» և այլն:

գտնում ենք, որ առավել ընդունելի է ոլորտի կարգավորման հետևյալ մոդելը. Օրենքով պետք է նախատեսված լինի տվյալների մշակման անվտանգությունը՝ որպես ունիվերսալ պարտավորություն՝ նշելով ձեռնարկվող միջոցառումների գնահատման չափանիշները, ռիսկերը, որոնք անհրաժեշտ է գսպել, ինչպես նաև հայեցողության դեպքում այդ միջոցառումների ոչ սպառիչ ցանկը: Մինչդեռ «փափուկ իրավունքը», հանձնիս Գործակալության ուղեցույցների, պետք է տեղեկություն հաղորդի տվյալ պահին անվտանգության արդյունավետ մակարդակ ապահովող գործիքակազմի (օրինակ՝ տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովելու նպատակով SSL (*secure sockets layer*) պրոտոկոլների օգտագործումը<sup>23</sup> կամ ինֆորմացիոն համակարգի մուտքի գաղտնաբանի սահմանման վերաբերյալ պրակտիկ ուղեցույցները<sup>24</sup>) մասին: «Փափուկ» և դասական իրավունքների նմանատիպ համադրումը իրավակարգավորմանը հաղորդում է որոշակի ճկունություն. իրավական նորմով սահմանվում են ելակետային, հիմնական նպատակները, մինչդեռ «փափուկ» նորմերը նախատեսում են իրավական, տեխնիկական, կազմակերպչական բնույթի կոնկրետ գործողություններ, որոնք անհրաժեշտ են իրավական նորմով ամրագրված նպատակին հասնելու համար:

*3.4. Անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման նկատմամբ պետության կողմից արդյունավետ վերահսկողության բացակայությունը*

Վերջին խնդիրը, որ կցանկանայինք ներկայացնել, վերաբերում է անձնական տվյալների մշակման անվտանգության նկատմամբ պետության կողմից վերահսկողություն իրականացնելուն: Տնտեսվարող սուբյեկտները առավել հակված կլինեն պահպանելու քննարկվող բնագավառում անվտանգային կանոնները, եթե նրանց նկատմամբ իրականացվի արդյունավետ վերահսկողություն պետության կողմից: Ցավոք սրտի, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն պետական **վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ**՝ տվյալների մշակման անվտանգության վերաբերող նորմերի կիրառման նկատմամբ հսկողությունն ապահովելու համար: Մասնավորապես, Օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ «*սույն հոդվածի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ առանց տեղեկատվական համակարգերում մշակվող անձնական տվյալները մշակելու իրավունքի*»: Վերը նշված նորմից միարժեքորեն բխում է, որ Գործակալության կողմից տեղեկատվական համակարգերում առկա անձնական տվյալները չեն կարող ուսումնասիրվել տվյալների մշակման անվտանգության մակարդակը ստուգելու նպատակով: Այսինքն՝ կարգավորող մարմինն իրավասու չէ իրապես համոզվել, թե արդյոք տվյալներ մշակողը խախտել է անվտանգությանը վերաբերող նորմերը: Ավելին, ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում որևէ նորմ, որը կիրավագրեր անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին **իրականացնել ստուգումներ** և ստանալ հասանելիություն մշակվող անձնական տվյալներին, այն ինֆորմացիոն համակարգերին, որոնցում պահպանվում են այդ տվյալները, ինչպես նաև այլ փաստաթղթերին, որոնք կապված են տվյալների մշակման անվտանգության միջոցների ձեռնարկման հետ: Տվյալ կոնտեքստում ոչինչ չի մնում անել, քան արձանագրել, որ Գործակալությունն օժտված չէ բավարար և արդյունավետ գործիքակազմով՝ անձնական տվյալների մշակման անվտանգության կանոնների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում: Ուստի, վերոնշյալ խնդիրը կարող է լուծվել միայն վերջինիս լիազորությունների ընդլայնմամբ: Սակայն ներկայիս իրավակարգավորման պայմաններում ԵՄ-ից դեպի Հայաստան փոխանցվող անձնական տվյալների պաշտպանությունը չի բավարարում GDPR-ով ամրագրված՝ համահունչ պաշտպանության հրամայականին, քանի որ լիազոր պետական մարմնի կողմից արդյունավետ հսկողության առկայությունը համարվում է ԵՄ հանձ-

<sup>23</sup> CNIL, «La sécurité des serveurs », 2018, <https://www.cnil.fr/fr/securite-securer-les-serveurs>.  
<sup>24</sup> CNIL, «Les mots de passe: des recommandations de sécurité minimale pour les entreprises », 2017, <https://www.cnil.fr/fr/mots-de-passe-des-recommandations-de-securite-minimales-pour-les-entreprises-et-les-particuliers>.

նաժողովի կողմից ընդունվող ներդաշնակեցման որոշման չափանիշներից մեկը<sup>25</sup>:

#### 4. Եզրակացություն

Այսպիսով՝ սույն հոդվածի շրջանակներում իրականացված վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1) Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անվտանգային անհրաժեշտ գործիքակազմի, ինչպես նաև ոլորտի նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր պետական մարմնի անհրաժեշտ լիազորությունների բացակայության պայմաններում առկա ի-

րավակարգավորումը չի ապահովում անձնական տվյալների մշակման անվտանգության արդյունավետ մակարդակ: Վերջինս կարող է ապահովվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարմամբ և «փափուկ իրավունքի» արդյունավետ կիրառմամբ:

2) Գործող իրավակարգավորման պայմաններում GDPR-ի իրավազորության ներքո գտնվող ընկերությունների կողմից ՀՀ-ում գործունեություն ծավալող ընկերություններին անձնական տվյալներ փոխանցումը չի համապատասխանում GDPR-ի 45-րդ հոդվածի պահանջներին:



<sup>25</sup> GDPR, 45-րդ հոդված, 2-րդ մաս:

**ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հազենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

**ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՅՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Սկիզբը՝ 128-րդ համարում*

**3. Հրապարակային իրազեկման հետևանքը՝ ճանապարհային նշանի «համատարած ներգործությունը»**

Հրապարակային իրազեկման հետևանք այն է, որ ճանապարհային նշանում ամփոփված պահանջների ու արգելքների մասին իրազեկվում են երթևեկության բոլոր մասնակիցները հավասարապես, նաև նրանք, որոնք դեռ չեն հայտնվել ճանապարհային նշանի գործողության ոլորտում:<sup>1</sup> Հրապարակային իրազեկումն ունի, այսպիսով, «համադարձ ներգործություն» («Ringsumwirkung»):<sup>2</sup> Բացակա անձանց հանդեպ ճանապարհային նշանի ուժի մեջ մտնելը հիմնավորելու համար մասամբ ասվում է, թե կայանված մեքենայի սեփականատերը նույնպես «երթևեկության մասնակից» է<sup>3</sup> կամ «ներկայացվում է» իր մեքենայի կողմից:<sup>4</sup> Բայց հրապարակային իրազեկման դեպքում այսպիսի հետևությունների կարիք չկա, քանի որ հրապարակային իրազեկումը կատարվում է հենց անկախ նրանից, թե արդյոք երթևեկության մասնակիցը (նաև իր մեքենայի միջոցով) հանդիպում է ճանապարհային նշանին, թե ոչ: Վարչական ակտն ուժի մեջ է

մտնում **յուրաքանչյուրի համար** դրա հրապարակման պահից (ճանապարհային նշանի դեպքում՝ այն փողոցում տեղադրելու պահից):<sup>5</sup> Ճանապարհային նշանների իրազեկումից և դրանց ուժի մեջ մտնելուց տարբերվող մեկ այլ հարց է, թե ինչքանով են հրապարակային իրազեկման պահից սկսում հոսել վարչական բողոք (Վարչ-ՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետ) կամ վարչական հայց (Վարչ-ԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ) ներկայացնելու ժամկետները (այս մասին մանրամասն տես ստորև **V.3.** կետը):

Վերևի օրինակում մեքենան հեռացնելու պահանջը, ըստ այդմ, ուժի մեջ է մտել նաև Հ-ի համար, թեև մեքենան կայանելու արգելքի նշանը տեղադրվել է Հ-ի կողմից մեքենան փողոցում կայանելուց **հետո**: Հետևաբար, այդ ճանապարհային նշանը կարող էր լինել փոխարինող գործողության հիմք ծառայող հիմնական վարչական ակտ Վարչ-ՀիմՕ 78-րդ հոդ. 1-ին մասի իմաստով: Փոխարինող գործողության մյուս նախապայմանները նույնպես առկա են: Հրատապության պատճառով այս հարկադրանքի միջոցը կիրառելու մասին նախազգուշացնելը (Վարչ-ՀիմՕ 84-րդ հոդ.) բացառության կարգով անհրաժեշտ չէ:<sup>6</sup> Մեքենան հեռացնե-

<sup>1</sup> Stén Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 334; նույն ինքը, NJW 2010, 1184 (1185f.); Kopp/Ramsauer, VwVfG, 2016, § 35 Rn. 171 և § 41 Rn. 47: Այլ կարծիքի է Beaucamp, JA 2008, 612 (613), ըստ որի՝ իրազեկվում են միայն երթևեկության կոնկրետ իրավիճակում գտնվող անձինք:  
<sup>2</sup> Հասկացության հեղինակն է Niehues, DVBl 1982, 317 (321):  
<sup>3</sup> Rebler, NZV 2006, 113 (114); Milker, Jura 2017, 271 (276); քննադատաբար Schoch, Jura 2011, 23 (27):  
<sup>4</sup> Stén Rebler, BayVBl 2004, 554 (556); Koch/Niebaum, JuS 1997, 312 (314)՝ մեքենան իբրև «հայտարարությունն ընդունող սուրհանդակ»; Bitter/Konow, NJW 2001, 1386 (1391f.)՝ մեքենան իբրև «փոստարկը»:  
<sup>5</sup> Stelkens, NJW 2010, 1184 (1185); նույն ինքը in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 41 Rn. 138f.; Kopp/Ramsauer, VwVfG, 2016, § 35 Rn. 171 և § 41 Rn. 47; այլ կարծիք՝ Schoch in Schoch, BesVerwR, 2013, Kap. 2 Rn. 395՝ ճանապարհային նշանի ներքին իրավական ուժը դրսևորվում է միայն այն ժամանակ, երբ երթևեկության մասնակիցը (առաջին անգամ) հանդիպում է ճանապարհային նշանին: Ներքին ու արտաքին իրավական ուժի տարբերակման մասին տես ստորև **IV.5.** կետը:  
<sup>6</sup> VGH Mannheim, NVwZ-RR 2003, 558; OVG Schleswig, NVwZ-RR 2003, 647.

լու պահանջի **անհապաղ կատարման** անհրաժեշտությունը բխում է ՎարչՀիմՕ 74-րդ հոդ. 1-ին մասի «բ» կետից կամ ՎարչԴՕ 83-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետից, քանի որ ճանապարհային նշանի պահանջի կատարումը կասեցնելու հետևանքով պահանջին հակառակ կայանված մեքենայով կարող է անմիջականորեն վտանգվել անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը (եթե չասենք, որ վտանգն արդեն իսկ առաջացել է): Քանի որ մեքենայի կայանումն արգելող ճանապարհային նշանի հակաիրավականության հիմքեր չկան, ուստի կարող է անպատասխան մնալ այն հարցը, թե արդյոք հիմնական վարչական ակտի իրավաչափությունը վարչական հարկադրանքի միջոց կիրառելու նախապայման է: Մտահոգությունների առիթ չկա նաև կոնկրետ դեպքում վարչական հարկադրանքի միջոց կիրառելու առնչությամբ, մասնավորապես, մեքենան տարհանելը անհամաչափ չէ այն պատճառով, որ բացակայում է <-ի մեղքը:<sup>7</sup> Փոխարինող գործողության կատարումը չի պահանջում, մասնավորապես, մեքենայի կայանումն արգելող շարժական նշանը տեղադրել մի քանի օր առաջ, որովհետև մեքենան հեռացնելու՝ նշանից բխող պահանջը հրապարակային իրազեկման հիման վրա միանգամից ուժի մեջ է մտնում յուրաքանչյուրի համար (ՎարչՀիմՕ 60-րդ հոդ. 3-րդ մաս) ու այդ պատճառով կարող է անմիջապես հարկադրաբար կատարվել:

Համաչափության մասին դատողությունները նշանակություն ունեն միայն կատարողական վարույթի ծախսերի (ՎարչՀիմՕ 92-րդ հոդ. 1-ին մասի «ը» կետ) մասին հարցը քննարկելիս (այսպես կոչված *երկրորդային մակարդակ*):<sup>8</sup> Այստեղ մեքենայի սեփականատիրոջ կողմից կատարողական վարույթի ծախսերը կրելու՝ ՎարչՀիմՕ 81-րդ հոդ. 1-ին մասից բխող պարտականությունը («պարտավոր անձի հաշվին») պետք է բացառել, եթե նրա վստահությունը երթևեկության իրավահարաբերությունների անփոփոխելիության նկատմամբ արժա-

նի է պաշտպանության:<sup>9</sup> Վստահությունը բոլոր դեպքերում արժանի չէ պաշտպանության, եթե մեքենան տարհանվել է մեքենայի կայանումն արգելող շարժական նշանի տեղադրումից առնվազն **երեք օր հետո**, որովհետև երթևեկության մասնակիցների՝ ՃաներթԱնվտանգՕ 23-րդ հոդ. 3-րդ մասից բխող **ընդհանուր հոգածության պարտականությունը** պահանջում է, որ մեքենայի սեփականատերը մեքենան կայանելուց առնվազն երեք օր հետո ստուգի ճանապարհային երթևեկության հարաբերությունների հնարավոր փոփոխությունը:

Կայանումն արգելող շարժական նշանները պլանավորված շինարարական աշխատանքներն սկսելուց շատ օրեր առաջ տեղադրելու դեպքում ճանապարհի լիազոր մարմինը մեր օրինակում կարող է կատարողական ծախսերի ռիսկը դնել <-ի վրա: Մի քանի օր առաջ տեղադրելը մեքենան տարհանելու համար, հակառակը, նախապայման չէ, առավել ևս դա նախապայման չէ մեքենան հեռացնելու պահանջի մասին իրազեկելու համար: Ասվածը նշանակում է, որ կայանումն արգելող նշանի տեղադրումից հետո մեքենան կարող է անմիջապես իրավաչափ կերպով տարհանվել (առաջնային մակարդակ), բայց կատարողական ծախսերը չեն կրող դրվել մեքենայի սեփականատիրոջ վրա (երկրորդային մակարդակ), քանի որ այդ դեպքում նրա վստահությունն արժանի է պաշտպանության: Առնվազն երեք օր հետո տարհանելու դեպքում տարհանման ծախսերը կկրի մեքենայի սեփականատերը:

**4. Ճանապարհային նշանների մասին իրազեկմանը ներկայացվող պահանջները. այսպես կոչված տեսանելիության սկզբունքը**

Ճանապարհային նշանների մասին հրապարակային իրազեկմանն, անշուշտ, պետք է որոշակի պահանջներ ներկայացնել, ինչն արդարացված է երթևեկության մասնակիցների ընդհանուր հոգածության պարտականությամբ (ՃաներթԱնվտանգՕ 23-րդ հոդ. 3-րդ մաս): Այս պարտականությունը ճանապարհային նշաններ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 129 2022

<sup>7</sup> Վարչական ակտերի հարկադիր կատարումը պետք է արդյունավետ լինի, և հարկադիր կատարման վարույթում այդ տիպի հարցերը հարկադիր կատարողի համար, որպես կանոն, ճանաչելի չեն: Տես նաև BVerwGE 149, 254 Rn. 20 ff.; OVG Münster, NWVBI 2017, 164 (165):

<sup>8</sup> Առաջնային մակարդակը վարչական ակտի հարկադիր կատարման վարույթն է:

<sup>9</sup> Տես, օրինակ, VGH Mannheim, NJW 2007, 2058 (2059); OVG Bautzen, NJW 2009, 2551 (2552); OVG Hamburg, NVwZ-RR 2010, 263 (265):

րի հիմքն ու սահմանն է. դրանց իրավական ներգործությունը երթևեկության բոլոր մասնակիցների համար կարող է պարտադիր լինել **միայն** այն դեպքում, երբ դրանք այնպես են տեղադրված, որ միջին վարորդն ընդհանուր հոգածության պարտականությունը պահպանելու դեպքում մի արագ ու թռուցիկ հայացքով կարող է դրանք հասկանալ: Այս այսպես կոչված **տեսանելիության սկզբունքը** (*Sichtbarkeitsgrundsatz*) (տես ՎարչՀիմՕ 59-րդ հոդ. 7-րդ մասը՝ «անմիջականորեն տեսանելի») ճանապարհային նշանների ընկալելիությանը ներկայացվող օբյեկտիվ պահանջ է: Մասշտաբը «միջին վարորդն» է: Ընկալելու սուբյեկտիվ ունակությունը, հակառակը, չի կարող նշանակություն ունենալ, որովհետև ճանապարհային երթևեկության իրավունքը հավասարապես տարածվում է երթևեկության **բոլոր** մասնակիցների վրա:<sup>10</sup> Սակայն ՎարչՀիմՕ 59-րդ հոդ. 7-րդ մասից արտածվող տեսանելիության սկզբունքը պահանջներ է ներկայացնում ոչ միայն փողոցում ճանապարհային նշանների ֆիզիկական տեղադրմանը, այլ նաև դրանց կարգավորման բովանդակությանը. երթևեկության չափազանց համալիր կամ առավել ևս հակասական կարգավորումները հենց չեն կարող հասկացվել «մի արագ ու թռուցիկ հայացքով»:<sup>11</sup> Գնահատելու համար, թե արդյոք ճանապարհային նշանը բավարարում է տեսանելիության սկզբունքի պահանջը, պետք է անշուշտ համապատասխանաբար տարբերակել, թե այն ուղղված է շարժվող, թե դադարի վիճակում գտնվող երթևեկությանը, որովհետև երթևեկության մասնակցից ակնկալվող հոգածության չափը կախված է երթևեկության կոնկրետ իրավիճակից: Դադարի վիճակում գտնվող երթևեկությանը (կանգառ, կայանում) կարելի է ընդհանուր առմամբ հոգածության ավելի բարձր պահանջներ ներկայացնել, քան շարժվող երթևեկությանը: Մինչ շարժվող երթևեկության մեջ, ամենից առաջ մեծ արագության դեպքում, ճանապարհային նշանները պետք է ընկալվեն շատ կարճ ժամանակում, դադարի վիճակում գտնվող երթևեկության մասնակիցը կարող է նաև մեքե-

նան կանգնեցնելուց հետո պարզել, օրինակ, կայանումն արգելող նշանի առկայությունը կամ դրա բովանդակությունը:<sup>12</sup>

Գերմանիայի Դաշնային վարչական դատարանը մի գործով պետք է պարզեր, թե արդյոք (դադարի վիճակում գտնվող երթևեկության մեջ) երթևեկության մասնակիցները կարող են ունենալ ոչ միայն *շուրջբոլորը նայելու* (*Umschau*), այլ գուցե նաև «ստուգելու» պարտականություն, որպեսզի հայտնաբերեն ու տեսնեն կոնկրետ փողոցում գործող ճանապարհային նշանները (*Nachschau*):<sup>13</sup> Առիթը կայանումն արգելող նշանն էր, որը մեքենայի կանգնած տեղից (որն ավելի ուշ տարհանվել էր) չէր երևում: Բայց եթե վարորդը մեքենան կայանելուց հետո փողոցի երկարությամբ մի քիչ քայլեր, ապա կկարողանար տեսնել նշանը: Դաշնային վարչական դատարանը որոշում է, որ ընդհանուր հոգածության պարտականությունը (§ 1 I StVO) թեև երթևեկության մասնակցից պահանջում է մեքենան կայանելուց հետո «սովորական կերպով շուրջբոլորը նայել», բայց դրանից բացի փողոցում ճանապարհային նշանների առկայությունն ստուգելու ընդհանուր պարտականությունը չափից շատ կընդարձակի հոգածության պարտականությունը: Հակառակը, վարչական մարմինն ինքը պիտի հոգ տանի ճանապարհային նշանը տեսանելիության սկզբունքի մասշտաբներին համապատասխան ընկալելի դարձնելու մասին: Երթևեկության մասնակիցը փողոցում ճանապարհային նշանների առկայությունն ստուգելու պարտականություն ունի միայն, եթե դեպքի կոնկրետ հանգամանքները դրա համար առանձնահատուկ առիթ են տալիս: Դա այդպես է, օրինակ, եթե ճանապարհային նշանը կարող է փակված լինել հատկապես բարձր մեքենաներով, կամ եթե մթության կամ եղանակային պայմանների պատճառով տեսանելիությունն այնքան վատ է, որ երթևեկության մասնակիցը պարտավոր է մտածել, որ դրա պատճառով հնարավոր է չտեսնել ճանապարհային նշանը: Դատարանի այս որոշումն արժանի է հավանության երթևեկության մասնակցի ու վարչա-

<sup>10</sup> BVerwGE 102, 316 (318); BVerwGE 130, 383 Rn. 16; BVerwGE 154, 365 Rn. 16, 26; Milker, Jura 2017, 271 (275).

<sup>11</sup> Պատկերավոր BVerwGE 130, 383 Rn. 10 ff.

<sup>12</sup> Մանրամասն տես BVerwGE 154, 365 Rn. 17 ff.); տես նաև VGH Mannheim, NJW 2010, 1898 (1899).

<sup>13</sup> BVerwGE 154, 365 Rn. 21 ff.; Hebel, JA 2016, 957; Milker, Jura 2017, 271 (275).

կան մարմնի պատասխանատվության ոլորտներն արդարացիորեն սահմանազատելու տեսանկյունից:<sup>14</sup> Բայց եթե հետևողականորեն առաջ ենք տանում հրապարակային իրազեկման և դրա «համապարած ներգործության» մասին պատկերացումը, ապա փողոցում նշանների առկայությունն ստուգելու պարտականության մասին հարցն ընդհանրապես չի ծագում, որովհետև ճանապարհային նշանն արդեն ուժի մեջ մտած կլինի՝ նախքան երթևեկության մասնակիցը կհայտնվի դրա գործողության ոլորտում:<sup>15</sup>

### 5. Ճանապարհային նշանի անճանաչելիությունը. այսպես կոչված ներքին իրավական ուժի վերացումը

Տեսանելիության սկզբունքի լույսի ներքո ի վերջո խնդրահարույց են այն դեպքերը, որոնցում թեև ճանապարհային նշանների մասին սահմանված կարգով իրազեկվել է, բայց դրանք ավելի ուշ անճանաչելի են դարձել եղանակային պայմանների կամ երրորդ անձանց գործողությունների հետևանքով: Գործում են ճանապարհային նշանում ամփոփված պահանջներն ու արգելքները նաև այն ժամանակ, երբ նշանը ձյունածածկ կամ սառցակալած է, փակվել է կայանված բարձր մեքենայով կամ ապօրինաբար ապամոնտաժվել է երրորդ անձանց կողմից: Այստեղ պետք է, նախ, արձանագրել, որ այդպիսի ազդեցությունների դեպքում ճանապարհային նշանի գործողությունը չի դադարեցվում ՃաներթԿազմԿարգի իմաստով: Դա տեղի է ունենում ճանապարհի լիազոր մարմնի համապատասխան որոշմամբ, որի մասին երթևեկության մասնակիցներն իրազեկվում են նշանի ապամոնտաժման միջոցով (ՃաներթԿազմԿարգի 24-րդ կետի 4-րդ պարբ.) (այսպես կոչված *actus contrarius*):<sup>16</sup> Այնուամենայնիվ, անճանաչելի ճանապարհային նշանը չի կարող պարտադիր լինել: Դա հիմնավորվում է նրա-

նով, որ ճանապարհային նշանը գործում է *վերացնող պայմանով* (տես ՔաղՕ 293-րդ հոդ. 2-րդ մասը). նրա գործողությունը դադարում է, երբ այն այլևս տեսանելի չէ: Այս հետևության հիմքը վարչական ակտի արտաքին և ներքին իրավական ուժի տարբերակումն է: **Արտաքին իրավական ուժը** վերաբերում է վարչական ակտի իրավական գոյությանը. այն ծագում է դրա մասին իրազեկելու պահից: **Ներքին իրավական ուժը** վերաբերում է վարչական ակտում ամրագրված կարգավորման պարտադիրությանը: Որպես կանոն այն համընկնում է արտաքին իրավական ուժի հետ, բայց կարող է ծագել նաև մեկ ուրիշ պահի:<sup>17</sup> Եթե ճանապարհային նշանը դարձել է անճանաչելի, ապա նրա ներքին իրավական ուժի համար վրա է հասնում վերացնող պայմանը, և դադարում է նրա պարտադիրությունը: Արտաքին իրավական ուժը դրանով չի շոշափվում: Դա նշանակում է, որ ճանապարհային նշանը չպիտի նորից ընդունվի, և վարչական բողոք կամ հայց ներկայացնելու ժամկետները չեն սկսում կրկին հոսել, երբ ճանապարհային նշանը նորից է տեղադրվում կամ կրկին տեսանելի է դառնում:<sup>18</sup>

### Մաս 2. Իրավական պաշտպանությունը ճանապարհային նշաններից

Հոդվածի այս երկրորդ մասը լուսաբանում է ճանապարհային նշաններից պաշտպանվելու հնարավորություններն ու այդ ընթացքում վարչական դատավարությանում ծագող խնդիրները:

### V. Ճանապարհային նշանների վիճարկումը

#### 1. Տիպիկ պրոբլեմները

Ճանապարհային նշանների հետ կապված իրավական պաշտպանության հարցերն ամենից առաջ հանդիպում են վիճարկման իրավիճակներում:<sup>19</sup> Եթե երթևեկության մասնակից-

<sup>14</sup> Hebler, JA 2016, 957 (959).

<sup>15</sup> Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 9. Aufl. 2018, § 35 Rn. 334; Kümpfer, JuS 2017, 731 (736).

<sup>16</sup> Տես Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 9. Aufl. 2018, § 35 Rn. 335; Kopp/Ramsauer, VwVfG, 17. Aufl. 2016, § 35 Rn. 172: ՎարչՀիմՕ 63-րդ և 66-րդ հոդվածները կիրառելի չեն ճանապարհային նշանների նկատմամբ, որովհետև դրանք կապված են առանձնահատուկ վտանգների հետ, և դրանց վերացումը պետք է ցանկացած ժամանակ հնարավոր լինի:

<sup>17</sup> Վարչական ակտի ներքին ու արտաքին իրավական ուժի տարբերակման մասին տես Detterbeck, AllgVerwR, 19. Aufl. 2021, Rn. 546 ff.; Kopp/Ramsauer, VwVfG, 17. Aufl. 2016, § 43 Rn. 5 ff.

<sup>18</sup> Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 336.

<sup>19</sup> Տես, օրինակ, Jochum/Thiele, JuS 2010, 518; Heckel, JuS 2011, 167, Unger/Koemm, JuS 2012, 449; Koehl, JuS 2010, 155, և նույն ինքը, JuS 2012, 63; Kintz, JuS 2011, 1022.



ները կամ կոնկրետ փողոցում ապրողները չեն ցանկանում հանդուրժել ճանապարհային նշանում ամփոփված պահանջները կամ արգելքները, ապա նրանք հայցում են վարչական ակտի վերացում (տես վերևում III. կետը), այնպես որ թույլատրելի են վիճարկման վարչական բողոքը (ՎարչՀիմՕ 69-րդ հոդ.) և/կամ վիճարկման հայցը (ՎարչԴՕ 66-րդ հոդ.): Կարող են հանդիպել նաև պարտավորեցման իրավիճակներ (ՎարչԴՕ 67-րդ հոդ.), երբ փողոցում ապրողները պահանջում են ընդունել երթևեկության սահմանափակումներ՝ աղմուկից ու արտանետումներից պաշտպանվելու համար<sup>20</sup> (տես նաև ՃաներթԿազմԿարգի 19-րդ կետը՝ «քաղաքացիների առաջարկությունների հիման վրա»): Քանի որ ճանապարհային նշանում պարունակվող վարչական ակտն ընդունվում է արդեն ճանապարհի լիազոր մարմնի որոշմամբ (տես վերևում III.5. կետը), ուստի վիճարկման վարչական բողոքը կարող է ներկայացվել վարչական ակտն ընդունած վարչական մարմին (ՎարչՀիմՕ 70-րդ հոդ. 2-րդ մասի «ա» կետ): Վարչական բողոքը կարող է ներկայացվել նաև ակտն ընդունած մարմնի վերադաս վարչական մարմին (ՎարչՀիմՕ 70-րդ հոդ. 2-րդ մասի «բ» կետ): Վիճարկման հայցի դեպքում պատասխանող կողմը վարչական ակտն ընդունած վարչական մարմինն է (ՎարչԴՕ 16-րդ հոդ.):

Վարչական բողոքի կամ վիճարկման հայցի **թույլատրելիությունն** ստուգելիս՝ որպես կանոն պետք է մանրամասն ստուգել բողոք կամ հայց ներկայացնելու ժամկետների պահպանվածությունը (ՎարչՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետ, ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ). այստեղ կրկին առաջ են գալիս ճանապարհային նշանների մասին իրազեկման վերաբերյալ արդեն քննարկված հարցերը: Բացի այդ, կարող է լուրջ հիմնավորման կարիք ունենալ բողոք կամ հայց ներկայացնողի իրավունքների խախտման հնարավորությունը (ՎարչՀիմՕ 69-րդ հոդ., ՎարչԴՕ 3-րդ հոդ. 1-

ին մաս): Երկու խնդիրները ցայտուն կերպով ցույց են տալիս հետևյալը.

**Օրինակ**<sup>21</sup> *Ս-ն* ուսման նպատակով տեղափոխվում է մեկ այլ քաղաք: Մերթընդմերթ նա վերադառնում է իր հայրենի քաղաք ծնողներին ու հին ընկերներին այցելելու նպատակով: Հայրենի քաղաքում նա երթևեկում է հեծանվով: 2015 թ. օգոստոսի 11-ին հեծանվային արահետի վրա, որը գտնվում է *Ս-ի* կողմից իր այցելությունների ժամանակ օգտագործվող ավտոմայրուղու մոտ, տեղադրվում է թիվ 4.4.1 ճանապարհային նշանը (հեծանվային արահետն օգտագործելու պարտականություն): *Ս-ն* այդ նշանի մոտով առաջին անգամ անցնում է 2020 թ. հուլիսի 30-ին: Նա հեծանվային արահետն օգտագործելու պարտականությունը համարում է ոչ իրավաչափ, որովհետև այն չունի անհրաժեշտ լայնություն ու, բացի դրանից, գտնվում է շատ վատ վիճակում: Այնուամենայնիվ, *Ս-ն* սկզբում ոչինչ չի ձեռնարկում: 2021 թ. մայիսի 5-ին նա կրկին անցնում է հեծանվային արահետով և ուզում է այժմ արդեն վիճարկել արահետն օգտագործելու պարտականությունը: Թույլատրելի է *Ս-ի* վարչական բողոքը կամ վիճարկման հայցը:

**2. Իրավունքի խախտման հնարավորությունը**

Իրավունքի պաշտպանության երկու միջոցների թույլատրելիության նախապայման է, որ *Ս-ն* կարողանա պնդել հեծանվային արահետն օգտագործելու պարտականության միջոցով իր իրավունքների **հնարավոր** խախտումը (ՎարչՀիմՕ 69-րդ հոդ., ՎարչԴՕ 3-րդ հոդ. 1-ին մաս):<sup>22</sup>

Վարչական ակտի վիճարկման դեպքում մեծ մասամբ կիրառվում է այսպես կոչված **հասցեատիրոջ տեսությունը**, ըստ որի, միջամտող վարչական ակտի հասցեատերը միշտ կարող է պնդել իր իրավունքի խախտման հնարավորությունը:<sup>23</sup> Բայց ճանապարհային նշանները հաճախ որակվում են իբրև այսպես կոչված **իրային վարչական ակտեր** (*dingliche Verwal-*

<sup>20</sup> Rebler, NZV 2006, 113 (114, 117f.); Beucamp, JA 2008, 612 (614).  
<sup>21</sup> Օրինակն ըստ Գերմանիայի Դաշնային վարչական դատարանի BVerwG, NJW 2004, 698 և BVerwGE 138, 21 որոշումների:  
<sup>22</sup> Հնարավորության տեսության մասին տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 51, 408:  
<sup>23</sup> Հասցեատիրոջ տեսության մասին տես Hufen, VerwProzR, 2021, § 14 Rn. 60; Württenberger, VerwProzR, 2011, Rn. 280f.:

tungsakte), որովհետև դրանք վերաբերում են հանրության կողմից մի գույքի (փողոցի) օգտագործմանը:<sup>24</sup> Այդ պատճառով մասամբ ենթադրվում է, թե այդ տեսակի վարչական ակտերն **անհասցեատեր** են, ուստի երթևեկության մասնակցի հայցն ընդդեմ ճանապարհային նշանի ոչ հասցեատիրոջ կամ երրորդ անձի հայց է:<sup>25</sup> Երրորդ անձանց վարչական բողոքներն ու հայցերը նրանց իրավունքների խախտման հնարավորության տեսանկյունից ունեն ավելի լուրջ հիմնավորման կարիք,<sup>26</sup> որովհետև երրորդ անձինք կարող են վիճարկել միայն օրենքի այնպիսի նորմերի խախտումը, որոնք ուղղված են նաև երրորդ անձանց շահերի պաշտպանությանը (*drittschützende Normen*): Օրենքի նորմի բնույթը (ուղղված է այն նաև երրորդ անձանց շահերի պաշտպանությանը) որոշվում է այսպես կոչված **պաշտպանիչ նորմի տեսության** հիման վրա:<sup>27</sup> Այնուամենայնիվ, արդեն իսկ կասկածելի է թվում, թե արդյոք ճանապարհային նշանների դեպքում ընդհանրապես կարելի է խոսել անհասցեատեր վարչական ակտերի մասին, որովհետև գոնե հրամայող վարչական ակտերը (ու դրանով իսկ՝ հանրային գույքի օգտագործման կարգավորումները) միշտ ուղղված են դրանց պահպանմանը ու այդպիսով՝ նաև անձանց:<sup>28</sup>

Ամեն դեպքում *U-ն*՝ իբրև երթևեկության մասնակից, կարող է պնդել առնվազն իր ազատ գործելու հիմնական իրավունքի (Սահմ. 39-րդ հոդ. 1-ին նախ.) խախտման հնարավորությունը: Այդ իրավունքը հասկացվում է իբրև ընդհանուր ազատության իրավունք<sup>29</sup> ու ներառում է նաև անձի մասնակցությունը ճանապարհային երթևեկությանը: Ըստ այդմ՝ երթևեկ-

կության յուրաքանչյուր մասնակից կարող է պաշտպանվել երթևեկության սահմանափակումներից ու արգելքներից՝ վկայակոչելով դրանցով իր ազատ գործելու հիմնական իրավունքի հնարավոր խախտումը:<sup>30</sup> Այդ պատճառով մեր օրինակում *U-ն* ունի վարչական բողոք կամ վիճարկման հայց ներկայացնելու իրավունք ՎարչԴՕ 3-րդ հոդ. 1-ին մասի իմաստով:

### 3. Վարչական բողոք և վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը

Վիճարկման վարչական բողոքը և վիճարկման հայցը թույլատրելի են միայն ՎարչՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետով և ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետում: Ճանապարհային նշանների առնչությամբ երբեմն կարծիք է արտահայտվում, որ դրանք կարող են վիճարկվել առանց ժամանակային սահմանափակման, այսինքն՝ անգամ տարիներ անց. դրանք չեն ստանում ձևական օրինական ուժ, այն է՝ անվիճարկելի չեն դառնում:<sup>31</sup> Դա բխում է նրանից, որ ճանապարհային նշանները չեն ստանում նաև նյութական օրինական ուժ,<sup>32</sup> որովհետև երթևեկությունը կարգավորելիս անհրաժեշտ ճկունությունը բացառում է դրա վերջնական պարտադիրությունը:<sup>33</sup> Բայց այս մոտեցումը համոզիչ չէ, որովհետև նյութական օրինական ուժն ու վիճարկելիությունը պետք է գնահատվեն միմյանցից անկախ, ինչպես դա ցույց է տալիս իրազեկման (ՎարչՀիմՕ 59-րդ հոդ.), անվավեր ճանաչելու (ՎարչՀիմՕ 63-րդ հոդ.) և վարչական բողոք ու հայց ներկայացնելու ժամկետների (ՎարչՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետ, ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ) տարբերակումը: Որ ճանապարհի լիազոր մարմինը

<sup>24</sup> Տես, օրինակ, Manssen, DVBI 1997, 633 (634); Rebler, NZV 2006, 113; Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 259.

<sup>25</sup> Այդպես են կարծում, օրինակ, Manssen, NZV 1992, 465 (467); նույն ինքը, DVBI 1997, 633 (634); նաև Hufen, VerwProzR, 2021, § 14 Rn. 60: Հասցեատիրոջ տեսության կիրառման օգտին Rebler, NZV 2006, 113 (114); Koehl, JuS 2012, 63 (66).

<sup>26</sup> Württenberger, VerwProzR, 2011, Rn. 282 ff., 291 ff.

<sup>27</sup> Պաշտպանիչ նորմի տեսության մասին տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 54:

<sup>28</sup> Դա շեշտում է Schoch, Jura 2012, 26 (29); տես նաև Rebler, NZV 2006, 113.

<sup>29</sup> Տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 151:

<sup>30</sup> Beaucamp, JA 2008, 612 (614); Unger/Koemm, JuS 2012, 449 (452f.).

<sup>31</sup> Rebler, NZV 2006, 113 (114); Steiner in Steiner, BesVerwR, 2006, Kap. IV Rn. 169.

<sup>32</sup> Վարչական ակտի նյութական օրինական ուժի հասկացության մասին տես Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 10 Rn. 17 ff., որոնք տարբերակում են ընդունված կարգավորմամբ կաշկանդված լինելը (դրա մասին իրազեկելու պահից, § 43 I VwVfG) և անվավեր ճանաչելու սահմանափակ հնարավորությունը (§§ 48 ff. VwVfG սահմաններում):

<sup>33</sup> Manssen, NZV 1992, 465 (467f.); Rebler, NZV 2006, 113 (114).

պիտի կարողանա ցանկացած ժամանակ, կախված իրավիճակից, ընդունել շեղվող կարգավորում, չի նշանակում, թե վարչական մարմնի որոշումը պետք է վիճարկելի լինի առանց ժամանակային սահմանափակման: Այդ պատճառով ոչ մի հիմք չկա հարցականի տակ դնելու ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետի և ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի գործողությունը ճանապարհային նշանների վիճարկման համար:

Ըստ ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետի՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Ըստ ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի՝ վիճարկման հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում: Քանի որ վարչական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց մասին իրազեկելու պահից (ՎարչահմՕ 60-րդ հոդ.), ուստի ճանապարհային նշանում ամփոփված կարգավորման մասին իրազեկումը (դրա հրապարակումը) որոշիչ նշանակություն ունի նաև վարչական բողոք կամ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետների հոսքի համար: ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետով նախատեսված ժամկետի սկիզբը, սակայն, կախված է վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետի մասին պատշաճ նշումից (ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «դ» կետ): Քանի որ ճանապարհային նշանները (կամ ճանապարհի լիազոր մարմնի գրավոր որոշումները) չեն պարունակում դրանց բողոքարկման ժամկետի մասին նշում, ուստի գործում է ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «դ» կետով սահմանված **մեկամսյա ժամկետը**: Այս նորմն անալոգիայով կիրառելի է վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի նկատմամբ, քանի որ առկա են անալոգիայի նախապայմանները:<sup>34</sup> Ճանապարհային նշանների մասին իրազեկումը կատարվում է հրապարակման եղանակով՝ հասցեատերերին անմիջականորեն տեսանելի ձևով հասանելի դարձնելու միջոցով (ՎարչահմՕ 59-րդ հոդ. 7-րդ մաս) (տես վերևում **IV.2.** կետը): Հրա-

պարակման եղանակով իրազեկման «համատարած ներգործության» պատճառով վարչական բողոք ու վիճարկման հայց ներկայացնելու մեկամսյա ժամկետը (ՎարչահմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «դ» կետ և համապատասխանաբար անալոգիայով) պիտի որ միասնական կերպով, այսինքն՝ կոնկրետ շահագրգռվածությունից անկախ, սկսի հոսել յուրաքանչյուրի համար ու նույն կերպ յուրաքանչյուրի համար միասնական կերպով ավարտվի:<sup>35</sup> Դա կնշանակի, որ ճանապարհային նշանները դրանց տեղադրումից մեկ տարի հետո այլևս չեն կարողանա վիճարկվել որևէ անձի կողմից:

Մեր օրինակում նաև *Ս-ն* այլևս չի կարողանա ժամանակին վարչական բողոք կամ վիճարկման հայց ներկայացնել՝ անկախ նրանից, թե նա երբ է առաջին կամ վերջին անգամ տեսել ճանապարհային նշանը:

Բայց այսպիսի հետևությունն անհամատեղելի կլինի արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի հետ (Սահմ. 61-րդ հոդ. 1-ին մաս): Կունենանք իրավունքների պաշտպանության հակասահմանադրական դեֆիցիտ, եթե վիճարկման ժամկետը յուրաքանչյուրի համար սկսի հոսել ճանապարհային նշանը տեղադրելու պահից, որովհետև երթևեկության այն մասնակիցը, որը միայն այդ ժամկետի ավարտից հետո է հանդիպում ճանապարհային նշանին, չի կարողանա այլևս դիմել իր իրավունքների պաշտպանության, իսկ դրանից առաջ նա կրկին իրավունքների պաշտպանության հնարավորություն չի ունենա անհատական շահագրգռվածության բացակայության պատճառով (ՎարչԴՕ 3-րդ հոդ. 1-ին մաս). քանի որ նա ճանապարհային նշանին դեռ չի հանդիպել, ուստի ի սկզբանե բացառվում է դրանով նրա որևէ իրավունքի խախտման հնարավորությունը: Այդ պատճառով Սահմ. 61-րդ հոդ. 1-ին մասի երաշխիքի հետ կոնֆլիկտից խուսափելու համար բացառության կարգով ճանապարհային նշանի վիճարկման ժամկետը **չպետք է կապել վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահի հետ**, այլ երթևեկության յուրաքանչյուր առանձին մասնակցի համար

<sup>34</sup> Անալոգիայի նախապայմանների մասին տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 369-372:

<sup>35</sup> Նման հետևություն է արել Մաննհայմի Բարձրագույն վարչական դատարանը (BeckRS 2009, 32247) Դաշնային վարչական դատարանի BVerwGE 102, 316 որոշումից:

ճանապարհային նշանի վիճարկման ժամկետի հոսքը պետք է հաշվել այն պահից, երբ նա առաջին անգամ հանդիպում է այդ նշանին:<sup>36</sup>

Մեր օրինակում *Ս-ն*, ըստ այդմ, դեռ կկարողանար ներկայացնել վարչական բողոք կամ վիճարկման հայց, երբ նա 2016 թ. հուլիսի 30-ին առաջին անգամ անցնում էր ճանապարհային նշանի մոտով:

Այս մոտեցման դեմ կարելի է փաստարկել, որ ՎարչՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «ա» կետը և ՎարչԴՕ 72-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետը վարչական բողոք և վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը միանշանակորեն կապում են վարչական ակտի ուժի մեջ մտնելու հետ, և որ իրավական պետության սկզբունքից բխող իրավական անվտանգությունը կվտանգվի, երբ թույլատրելի լինի ճանապարհային նշանը վիճարկել անգամ տասնամյակներ անց զուտ այն պատճառով, որ երթևեկության մի մասնակից միայն հիմա է առաջին անգամ տեսնում այդ նշանը:<sup>37</sup> Բացի այդ, ճանապարհային նշանների անվիճարկելիության դեպքում հնարավորություն կա վարչական մարմնին դիմում ներկայացնել վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու համար, ըստ ՎարչՀիմՕ 51-րդ հոդ. հոդվածի, և վարչական մարմնի մերժման դեպքում ներկայացնել պարտավորեցման հայց, ըստ ՎարչԴՕ 67-րդ հոդվածի, այնպես որ իրավական պաշտպանությունից զրկված չէ նաև նա, ով երթևեկության կարգավորման գործողության տակ է ընկնում դրա ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց:<sup>38</sup> Բայց այս փաստարկները բավարար չեն: ՎարչՀիմՕ 51-րդ հոդվածի առանձնահատուկ նախապայմանների պատճառով վարչական վարույթը վերսկսելու հնարավորությունը չի երաշխավորում արդյունավետ իրավական պաշտպանություն Սահմ. 61-րդ հոդ. 1-ին մասով պահանջվող չափով:

Վերևում ներկայացված և ինձ համար նախընտրելի մոտեցմանը հետևելու դեպքում պետք է ուշադրություն դարձնել, որ ճանապարհային նշանի վիճարկման ժամկետը երթևեկության

յուրաքանչյուր առանձին մասնակցի համար սկսում է հոսել միայն մի անգամ և ոչ թե համապատասխանաբար նորից, երբ նա հերթական անգամ հանդիպում է այդ նշանին: Ճանապարհային նշանները պետք է տևական ժամանակով կարգավորեն կոնկրետ վայրի երթևեկությունը: Այդ պատճառով դրանցում ամփոփված պահանջներն ու արգելքները շարունակում են գործել երթևեկության առանձին մասնակցի համար, քանի դեռ ուժի մեջ են դրանք տեղադրելու մասին որոշումները, ու քանի դեռ ճանապարհային նշանները գտնվում են փողոցում: Եթե երթևեկության մասնակիցը նորից է անցնում ճանապարհային նշանի մոտով, ապա դա նրա համար ունի «միայն հիշեցնող գործառույթ»:<sup>39</sup>

Մեր օրինակում, ըստ այդմ, *Ս-ի* համար ՎարչՀիմՕ 71-րդ հոդ. 1-ին մասի «դ» կետի մեկամյա ժամկետն սկսել է հոսել 2020 թ. հուլիսի 30-ին միայն մի անգամ և ոչ թե նորից 2021 թ. մայիսի 5-ին, այնպես որ նա հիմա այլևս չի կարող ժամանակին վիճարկել հեծանվային արահետն օգտագործելու պարտականությունը: Վիճարկման ժամկետի նոր հոսքը հնարավոր է այն դեպքում, երբ փոփոխվում է ճանապարհի լիազոր մարմնի որոշումը, և դրա հետևանքով տեղի է ունենում նոր իրազեկում հրապարակման եղանակով:

#### 4. Ճանապարհային նշանների դեմ ներկայացված վարչական բողոքի կամ վիճարկման հայցի հիմնավորվածությունը

Վարչական բողոքի կամ վիճարկման հայցի հիմնավորվածության շրջանակում պետք է քննարկման առարկա դարձնել, մասնավորապես, ճանապարհային նշանում ամփոփված կարգավորման իրավաչափությունը (տես ՎարչՀիմՕ 75-րդ հոդ. 2-րդ մասը և ՎարչԴՕ 124-րդ հոդ. 2-րդ մասը): Վիճարկման հայցի շրջանակում վարչական ակտի իրավաչափությունն սկզբունքորեն գնահատվում է **ակտի ընդունման պահի դրությամբ** գործող օրենքների հիման վրա (ՎարչԴՕ 124-րդ հոդ. 2-րդ մաս), այսինքն՝ որոշիչ է սկզբնական վարչական ակտի

<sup>36</sup> BVerwGE 138, 21 Rn. 14, 16.

<sup>37</sup> Մանրամասն քննադատություն տես Ehlers, JZ 2011, 155 (157); տես նաև Milker, Jura 2017, 271 (278):

<sup>38</sup> Stelkens, NJW 2010, 1184 (1186); Ehlers, JZ 2011, 155 (157); Milker, Jura 2017, 271 (278).

<sup>39</sup> BVerwGE 138, 21 Rn. 18.

կամ վարչական բողոքի հիման վրա ընդունված ակտի մասին իրազեկելու պահը: Բայց պետք է ուշադրություն դարձնել, որ ճանապարհային նշանում ամփոփված կարգավորումները տևող վարչական ակտեր են, որովհետև դրանք չեն սպառվում մեկանգամյա պահանջով կամ արգելքով, այլ տևականորեն կարգավորում են երթևեկության մի իրավիճակ:<sup>40</sup> Տևող վարչական ակտերը փաստական կամ իրավական դրության փոփոխման դեպքում կարող են դառնալ ոչ իրավաչափ, ուստի, շեղվելով ՎարչԴՕ 124-րդ հոդ. 2-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, դրանց իրավաչափությունը պետք է գնահատվի (վերադաս) վարչական մարմնի կողմից ճանապարհային նշանի դեմ բերված **վարչական բողոքի հիման վրա վարչական ակտ ընդունելու** կամ վարչական դատարանի կողմից վարչական հայցի վերաբերյալ **վճիռ կայացնելու պահի դրությամբ** գործող օրենքների հիման վրա:

Ճանապարհային նշանի իրավաչափության գնահատման ելակետն է կազմում ՃաներթԿազմԿարգի **19-րդ կետում** ամրագրված **լիազորման իրավական հիմքը**, որը ճանապարհային նշաններ տեղադրելու մասին որոշում ընդունելը պայմանավորում է ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության, ճանապարհների եղանակային և այլ հետազոտությունների, ճանապարհային երթևեկության պայմանների և վիճակի ուսումնասիրության արդյունքներով, ինչպես նաև ճանապարհաշինարարական, կոմունալ ծառայությունների, ճանապարհային ուստիկանության մարմինների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և քաղաքացիների առաջարկություններով:

**Ձևական իրավաչափության** ստուգումը, նախ, վերաբերում է վարչական մարմնի **լիազորությանը** (ՃաներթԿազմԿարգի 6-րդ կետ, տես վերևում **II.3.**): Ճանապարհային նշան տեղադրելու մասին որոշում ընդունելիս բացառության կարգով **լսումներ** չեն անցկացվում, ըստ ՎարչՀիմՕ 38-րդ հոդ. 3-րդ մասի «բ» կետի, որովհետև ճանապարհային նշանն այլ ձևի վարչական ակտ է՝ համաձայն ՎարչՀիմՕ 54-րդ

հոդ. 3-րդ մասի: Վարչական ակտի **հիմնավորման** անհրաժեշտությունը նույնպես վերանում է ՎարչՀիմՕ 57-րդ հոդ. 2-րդ մասի «գ» կետի 1-ին տարբերակի հիման վրա: Քանի դեռ ճանապարհի լիազոր մարմնի որոշումները ներդրվում են ճանապարհային նշանների միջոցով, որոշման **ձևի** հարցում խնդիրներ չեն ծագում:

**Նյութական իրավաչափությունն** ստուգելիս պետք է պարզել լիազորման հիմքի փաստակազմի բոլոր հատկանիշների առկայությունը: Այստեղ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՃաներթԿազմԿարգի 20-րդ և 21-րդ կետերի պահանջների պահպանմանը: 24-րդ կետի դեպքում ճանապարհի լիազոր մարմինը պարտավոր է անընդհատ վերահսկողության տակ պահել ժամանակավոր ճանապարհային նշաններ տեղադրելու մասին իր որոշումները, որպեսզի հատուկ պայմանների (արտակարգ իրավիճակի, տարերային աղետի, վթարի և այլն) վերացման դեպքում դրանք անհապաղ ապամոնտաժի, որովհետև ժամանակավոր տեղադրված ճանապարհային նշանները դառնում են ոչ իրավաչափ դրանց տեղադրման պատճառները վերանալուց հետո:

Լիազորման հիմքի (ՃաներթԿազմԿարգի 19-րդ կետի) իրավական հետևանքը **հայեցողական որոշում** է: Վարչական բողոքի դեպքում բողոքը քննող վարչական մարմինն իրավունք ունի վարչական ակտի իրավաչափությունից բացի ստուգելու նաև դրա **նպատակահարմարությունը** (ՎարչՀիմՕ 75-րդ հոդ. 2-րդ մաս): Վարչական դատարանը, հակառակը, վիճարկման հայցի շրջանակում սահմանափակված է վարչական ակտի միայն **իրավաչափության** ստուգմամբ և իրավունք չունի ստուգելու դրա նպատակահարմարությունը: Հայեցողական որոշումների դեպքում վարչական դատարանն իրավունք ունի ստուգելու միայն, թե արդյոք վարչական մարմինն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս թույլ է տվել հայեցողական սխալներ (ՎարչԴՕ 125-րդ հոդ. 5-րդ մաս):<sup>41</sup>

<sup>40</sup> BVerwGE 59, 221 (226); BVerwGE 92, 32 (34); BVerwGE 97, 214 (220); տես նաև վերևում III.1. կետը:  
<sup>41</sup> Հայեցողական սխալների և վարչական դատարանի սահմանափակ վերահսկողության մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 331-334:

**ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿՐԿՆԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԸՆՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ**

Բողոքարկումն իրենից ենթադրում է վարչական ակտի իրավաչափության նկատմամբ համապատասխան սուբյեկտների կողմից իրականացվող հետազա վերահսկողության միջոց, որպիսի պայմաններում հենց վարչական ակտը վարչական վերահսկողության օբյեկտն է:

Ի տարբերություն նախնական վարչական վերահսկողության՝ հետազա վարչական վերահսկողությունն իրականացվում է վարչական ակտի ընդունումից հետո: Վերահսկողություն իրականացնող սուբյեկտների շրջանակը ևս տարբեր է: Եթե նախնական վերահսկողությունն իրականացվում է գործը քննող վարչական մարմնի կողմից, ապա հետազա վերահսկողությունը կարող է իրականացվել վարչական ակտը կայացրած վարչական մարմնի, այդ վարչական մարմնի վերադաս վարչական մարմնի և դատական ատյանների կողմից:

Վերոգրյալով է կարևորվում բողոքարկման ինստիտուտը՝ որպես վարչական իրավահամակարգի կարևոր տարր, քանզի համապատասխան բողոքի առկայությունը պարտավորեցնում է դրա հասցեատեր հանդիսացող սուբյեկտին, իհարկե, եթե վերջինս օժտված է նման իրավասությամբ, իրականացնել հետազա վարչական վերահսկողություն, որի արդյունքում վերանայվում է համապատասխան վարչական ակտը:

Ըստ իրավագետներ Լ. Ա. Նիկոլանի և Ա. Կ. Սոլովյովի՝ անհատական իրավական ակտերի կամ գործողությունների վերաբերյալ վեճերը քննելիս պետք է պարզվի իշխանության սուբյեկտի անհատական ակտի կամ գործողություն (անգործություն) օրինականությունը (որոշակիության) և հիմնավորվածությունը:<sup>1</sup>

Ըստ իրավագետ Ա. Թ. Բոնների՝ իրավունքի վերաբերյալ վեճերի քննարկման ընթացքում վարչական դատարանը ստուգում է մարմինների գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը՝ իրականացնելով վերահսկողություն:<sup>2</sup>

Վերոգրյալի հաշվառմամբ մեր գնահատմամբ վարչական ակտի բողոքարկման հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ.

Վարչական ակտի դեմ բողոքը հասցեագրված խնդրանք է տուժող կամ շահագրգիռ անձ հանդիսացող սուբյեկտի կողմից՝ ուղղված վարչական ակտի իրավաչափության նկատմամբ վերահսկողական լծակներ ունեցող սուբյեկտին, որով վերջինս պահանջում է վարչական միջոցներ ձեռնարկել վարչական ակտն անվավեր ճանաչելու, փոփոխելու կամ նույնիսկ նոր վարչական ակտ կայացնելուն, երբ վերջինիս դիմումը մերժվել է վարչական մարմնի կողմից կամ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունել է միջամտող ազդեցություն ունեցող վարչական ակտ:

Վարչական կարգով վարչական ակտի բողոքարկումը փորձ է վեճը լուծել վարչական մակարդակով, այսինքն՝ խնդրանքի հասցեատերը վարչական մարմինն է կամ դրա վերադաս վարչական մարմինը:

Որպես կանոն՝ վարչական և դատական կարգով բողոքարկումները իրենց բնույթով անկախ են մեկը մյուսից, և դրանցից մեկի իրացումը չի խոչընդոտում մյուսի իրացմանը: Վարչական ակտի հասցեատերը կարող է ազատորեն ընտրել վարչական ակտի բողոքարկման երկու ձևերից յուրաքանչյուրը, որը բխում է տնօրինչականության սկզբունքի տրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>1</sup> Сѣн Николаева Л. А., Соловьева А. К. Административная юстиция и административное судопроизводство. СПб.: Юрид. центр «Пресс», 2004.. С 129.

<sup>2</sup> Сѣн Боннер А. Т. Неисковые производства в гражданском процессе: учеб. пособие. М.: Проспект, 2011.. С 124.

մաբանությունից, սակայն կան երկրներ որոնց օրենսդրական համակարգը պարունակում է իրական պահանջ առ այն, որ մինչև դատական կարգով վարչական ակտի բողոքարկումը, անձը պետք է սպառի բոլոր վարչական միջոցները, այսինքն վերջինս նախքան դատարան դիմելը պետք է նախ վարչական կարգով բողոքարկի կայացված վարչական ակտը:

Այսպիսով՝ վարչական ակտի բողոքարկումը՝ որպես վարչական ակտի իրավաչափության նկատմամբ հետագա վարչական վերահսկողության միջոց, ուղղված է վարչական ակտի իրավաչափության հաստատմանը կամ հերքմանը՝ այդ վարչական ակտի դեմ գանգատարկելու միջոցով: Վարչական ակտի դեմ ներկայացվող բողոքը՝ որպես վարչական իրավունքի առանձին ինստիտուտ, ունի միայն իրեն բնորոշ գործառնություններ:

Վարչական ակտի բողոքարկման գործառնությունների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում այսպես կոչված վարչական ակտի կրկնակի ուսումնասիրման գործառնությունը:

Նշված գործառնության էությունն այն է, որ վարչական ակտի բողոքարկումն ըստ էության ուղղված է ևս մեկ անգամ վարչական վարույթի նյութերի հետազոտման և դրա հիման վրա համապատասխան վարչական ակտ կայացնելուն, դրանով իսկ նպաստելով նախկինում կատարված հնարավոր սխալը բացահայտելուն և դրա հետագա կրկնությունը բացառելուն:

Վարչական ակտի վարչական կարգով բողոքարկումը բողոքարկման ինստիտուտի առավել հաճախ կիրառվող մեխանիզմ է, սակայն վարչական մարմնի լիազորություններն առավել սահմանափակ են վարչական ակտի իրավաչափության նկատմամբ իրականացվող հետագա վերահսկողության բնագավառում, քան դատական մարմիններինը: Դա պայմանավորված է մի շարք առանցքային հանգամանքներով, որոնք միասին ձևավորում են վարչական վերահսկողության այդ տեսակի բնութագիրը:

Այդ երկու միմյանց հետ սերտ փոխկապակցված ինստիտուտների առանցքային գործիքը, որով պետք է իրականացվի վարչական ակտի իրավաչափության ստուգումը, դա գործի ի պաշտոնե քննության օրենսդրական պար-

տավորեցումն է:

Նշված հարցի ուսումնասիրության համար առանցքային դերակատարում ունի հետևյալ իրավական հարցի պարզումը. արդյո՞ք վարչական կարգով վարչական ակտը բողոքարկելու իրավահարաբերության ծագումից հետո վարչական մարմինը բողոքը քննում է դրանում նշված հիմնավորումների շրջանակում, թե՞ պարտավոր է վեր հանել վարչական ակտի անվավերության հնարավոր բոլոր հիմքերը, անկախ նրանից բողոքաբերը բողոքի հիմքում դրել է այդ հիմքը, թե՞ ոչ:

«Ճ գործող իրավական համակարգում՝ ի տարբերություն վարչական կարգով բողոքարկման ինստիտուտի ընթացակարգերի՝ դատական կարգով վարչական ակտի բողոքարկման ընթացակարգերն առավել հստակ են և ունեն օրենսդրական կարգավորում: Նմանօրինակ կարգավորման օրենսդրական ամրագրումից անմասն չեն մնացել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, Գերմանական Դաշնային Հանրապետության օրենսդրությունը, Ավստրիական Հանրապետության օրենսդրությունը և այլ երկրների օրենսդրություններ:

Ի տարբերություն վարչական ակտի իրավաչափության նկատմամբ իրականացվող նախնական վերահսկողության՝ որի ժամանակ վարչական մարմինը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, վարչական ակտի կայացման համար անհրաժեշտ նյութերը ձեռք բերելու ուղղությամբ, որոնց բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության արդյունքում վերջինիս մոտ ձևավորվում է այս կամ այն տեսակի վարչական ակտը կայացնելու իրավական համոզմունքը, հետագա վերահսկողության ժամանակ վարչական մարմինը նման լիազորությամբ օժտված չէ և կաշկանդված է միայն վարչական բողոքով նշված հիմնավորումների շրջանակներում բողոքը քննելու իրավասությամբ:

Ասվածի տրամաբանությունը կարելի է դիտարկել որպես երկու հակադիր բևեռներ, որի մի կողմում վարչական մարմինն է, որն արդեն իսկ մեկ անգամ ընդունել է համապատասխան վարչական ակտ՝ հետապնդելով հանրային շահ, իսկ մյուս կողմում, անձ, ով համաձայն չլինելով վարչական ակտի իրավաչափության հետ՝ ներկայացնում է վարչական բողոք:

Թեև բևեռները հակադիր են, բայց այնուամենայնիվ դրանք չեն գտնվում հավասար մրցակցային պայմաններում, քանի որ վարչական մարմինը հանրային ապարատի մաս է, օժտված պետական լծակներով, որը լինելով կաշկանդված անձի իրավունքներով՝ հետապնդում է հանրային շահ՝ որպես պաշտոնատար անձ:

Նման պայմաններում՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննելիս պետք է կաշկանդված լինի ոչ միայն անձի իրավունքներով, այլ նաև անկախ հանրային շահից վարչական ակտի անվավերությանն ուղղված ցանկացած փաստ բացահայտելու պարտականությամբ անկախ դրա մասին վարչական բողոքում վկայակոչված չլինելուց:

ՀՀ ներպետական օրենսդրության մեջ ասվածը կաշկանդված չէ նաև բողոքարման ինստիտուտը կարգավորող իրավական ակտում սահմանված այն նորմով, ըստ որի բողոքի քննարկման նկատմամբ կիրառվում են վարչական վարույթի վերաբերյալ սահմանված կանոնները:

Այս կանոնն առնվազն վիճելի է այն համատեքստում, որ տվյալ նորմի սահմանումը վերաբերվում է բողոքի քննարկման նկատմամբ նույն վարչական վարույթի իրականացման նկատմամբ կիրառվող իրավանորմերի տեղայնացմանը, այլ ոչ վարչական ակտի անվավերության հնարավոր բոլոր տարրերը սեփական նախաձեռնությամբ բացահայտելու:

Այսինքն՝ եթե նույնիսկ համապատասխան օրենքը հղում է կատարում ընդհանուր կանոնին, ըստ որի վարչական մարմինը պետք է իրականացնի գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննարկում, ապա դա կարելի ընկալել, որպես վարչական բողոքի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննարկում, որի արդյունքում վարչական մարմինը պարտավոր է վեր հանել այդ թվում բողոքաբերի օգտին առկա հանգամանքները:

Իսկ եթե վարչական մարմինն ունենա օրենսդրական պարտականություն, անկախ վարչական բողոքի բովանդակությունից վարչական ակտն ամբողջ ծավալով վերանայելու վերաբերյալ, ապա կունենանք անձի իրավունքների երաշխավորման առավել բարձր աստիճան, վարչական ակտի բողոքարկման ինստիտու-

տի համակարգում, և այդ ինստիտուտն առավել կնպաստի բողոքարկման ինստիտուտի առջև դրված կարևորագույն խնդրի լուծմանը, այն է՝ պարզել վարչական ակտի համապատասխանելիությունն օրենսդրությանը:

Նշվածի համատեքստում արձանագրում ենք, որ վարչական բողոքը քննելիս վարչական մարմինը պետք է պարտավոր լինի վարչական բողոքի հիման վրա ի պաշտոնե գործն ամբողջությամբ վերանայել ամբողջ ծավալով՝ բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ ուսումնասիրության ենթարկելով բողոքում մատնանշված հիմնավորումները, վեր հանելով մատնանշված հնարավոր թերությունները, ինչպես նաև քննության առարկա դարձնել դրանք վարչական ակտի անվավերությանը ծառայեցնելու իրավական հնարավորությունը:

Հետագա վերահսկողության իրականացման համար վարչական մարմինն նման պարտավորությամբ չկաշկանդելու ոչ միայն չի բխում վարչական մարմնի և անձի միջև առաջ եկող իրավահարաբերությունների շրջանակներում անձանց իրավունքների երաշխավորման հայեցակարգից, այլև հակասում է օրինականության սկզբունքի տրամաբանությանը, քանզի վարչական մարմինները իրավասու են իրականացնել միայն այնպիսի գործողություններ որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Վերոգրյալի համատեքստում խնդրահարույց է նաև այն փաստական հանգամանքը, որ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ևս կարող է անվավեր ճանաչել վարչական ակտը, եթե իմացել է վարչական ակտի անվավերության հիմքի առկայության մասին: Սակայն արդյո՞ք վարչական մարմինը կարող է զուգակցել վարչական բողոքը քննարկելու և սեփական նախաձեռնությամբ վարչական ակտը վերացնելու օրենսդրական ինստիտուտները, որի արդյունքում վարչական բողոքի սահմաններից դուրս գալով վարչական մարմինը կարող է բողոքարկման վարույթը եզրափակել այս կամ այն վարչական ակտի ընդունմամբ՝ մի հիմնավորմամբ, որը չի մատնանշվել բողոքով:

Խնդրի կարևորությունը գործնականում բխում է այն հայեցակարգից, որ վարչական մարմինները թեկուզև կաշկանդված լինելով գործող օրենսդրական կարգավորումներն ի



շահ անձի մեկնաբանելու (մարդու իրավունքների գերակայությամբ պայմանավորված) ձևաչափով, անտեսում են այդ փաստական հանգամանքը և վարչական բողոքները քննում են միայն վարչական բողոքում նշված հիմնավորումների համատեքստում:

Վիճարկվող վարչական ակտի իրավաչափության հարցը պարզելու համար վարչական մարմինը պարտավոր է ի պաշտոնե անմիջականորեն գնահատել այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված և գործում եղած ապացույցները, ապա դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ լուծել բողոքը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը՝ կայացնելով համապատասխան վարչական ակտ:

Ընդ որում, վարչական ակտի բողոքարկման պայմաններում վարչական ակտը իրավաչափ լինելու ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը, սակայն դա չի կաշկանդում շահագրգիռ անձին ներկայացնել վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ իր փաստարկները և ապացույցները:

Վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ վարչական գործողությունների իրականացման վարչական մարմնի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզմունքի հանգեցում վերջինիս պարտականությամբ և պետք է բխի օրինականության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործն ի պաշտոնե քննելու ինստիտուտին, արձանագրել է, որ փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պար-

զելուն, այլ խոսքով՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն (տես, ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):<sup>3</sup>

Վերոգրյալ դատողությունների համատեքստում հարկե է արձանագրել նաև, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում վարչական մարմնի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում վարչական մարմինը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում վերջինս պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները կրել ինքն իր կողմից ապացուցման ենթակա հանգամանքի մասով:

ԳԴՀ «Վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ գլուխը կանոնակարգում է վարչական ակտի դեմ վարչական բողոքի ինստիտուտը:

ԳԴՀ «Վարչական վարույթի մասին» օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտերի դեմ վարչական բողոք ներկայացնելու դեպքում կիրառվում են վարչական դատավարության օրենսգիրքը և դրա կատարման համար տրված իրավական դրույթները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Իր հերթին ԳԴՀ Վարչական դատավարության օրենսգիրքը կանոնակարգում է գործն ի պաշտոնե քննելու իրավական ինստիտուտը, որը և կիրառվում է ոչ միայն ԳԴՀ վարչական դատարան հայց ներկայացնելու այլև վարչական բողոքի քննարկման ժամանակ:

Ֆրանսիական Հանրապետությունում վարչական ակտի բողոքարկման ինստիտուտների շուրջ ծավալվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են ՖՀ վարչական արդարադատության օրենսգրքով, որը էականորեն տարբերվում է հայկական, գերմանական, իսպանական օրենսդրական մոդելներից և օ-

<sup>3</sup> Տես ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը:

րենսդրական մոտեցումներից: (Օրինակ՝ Ֆրանսիական օրենսդրությունը վարչական մարմին է դիտում նաև իրավաբանական անձանց, որոնք կարող են օրենքի ուժով այս կամ այն անհատական իրավական ակտ կայացնել):

ՖՀ-ում վարչական ակտի իրավաչափության նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացվում է ակտը կայացրած մարմինների և կանտոնային տիրբունաի կողմից, որն ըստ էության մասնագիտացված դատարանի գործառույթ է կատարում ՀՀ վարչական դատարանի նման:

Ի տարբերություն հայկական կամ գերմանական մոդելների՝ ՖՀ օրենսդրությունը թեև նախեսում է վարչական ակտը վերանայելու խնդրանքով այն կայացրած մարմնին դիմելու իրավունք, սակայն այնուամենայնիվ, այդ իրավունքը կարող է իրացվել միայն որոշակի փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վարչական ակտի դեմ բողոքը կարող է ներկայացվել միայն հետևյալ դեպքերում՝

- ա) եթե այդ ժամանակից ի վեր լուծման հիմքում ընկած իրավիճակը զգալիորեն փոխվել է,
- բ) կամ եթե դիմումատուն վկայակոչում է այն կարևոր փաստերը կամ ապացույցները, որոնց մասին նա չէր կարող իմանալ առաջին որոշումը կայացնելիս, կամ որը նա չէր կարող կամ հիմք չունենալ այդ ժամանակ օգտագործելու համար,
- գ) կամ եթե առաջին որոշման կայացման

վրա ազդել է հանցագործությունը կամ զանցանքը:

Այսպես՝ այն դեպքում, երբ գերմանական մոդելը առավել ակտիվ ստուգման գործառույթը դնում է վարչական վերահսկողություն իրականացնող սուբյեկտի վրա նրան պարտադրելով գործն քննել ի պաշտոնե անկախ դրա համար կոնկրետ հիմքի առկայությունից կամ բացակայությունից, ապա Ֆրանսիական մոդելում վարչական հետագա վերահսկողությունը իրականացվում է միայն այն դեպքում, երբ բողոքաբերը հաստատում է վերոգրյալ հիմքերից որևէ մեկի առկայությունը:

Վերոգրյալ իրավական մոտեցումներն, ըստ մեր գնահատման, թեկուզև հաջողված են, սակայն էության մեջ ունեն նաև իրենց թերությունները, ուստի այդ մոտեցումներից յուրաքանչյուրից հարկ է քաղել դրական կողմերը՝ մեկ ընդհանրական հաջողված մոդել ստանալու և այն հայաստանյան իրականությանը տեղայնացնելու համար:

Վերոգրյալ խնդիրներից և իրավական կազուսներից խուսափելու համար, ամփոփելով սույն հոդվածում նկարագրված խնդիրները՝ հարկ ենք համարում արածանագրել, որ անհրաժեշտ է օրենսդրական համապատասխան ամրագրում կատարել, առ այն, որ վարչական մարմինը վարչական բողոքի առկայության դեպքում, վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով՝ չսահմանափակվելով միայն վարչական բողոքում նշված հիմնավորումներով:



## ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՓՆԱՅԱՏԱԿԱՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021Թ. ՍԱՐՏԻ 26-Ի N ՍԴՈ - 1586 ՈՐՈՇՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Սկիզբը՝ 128-րդ համարում*

Հարց. մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ գործում էին Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները: Պատասխանը մեկն է, ոչ՝ չեն գործել, եթե գործեին՝ տեղի չէր ունենա այդ սպանդը:

Այս հարցի հետ կապված կարևոր է նաև այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք մարտի 1-ի օրը բոլոր պաշտոնատար անձինք, այդ թվում՝ երկրի նախագահը գործել են Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխան, մասնավորապես բռնի են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և օրենքներով: Վերջինիս պարզաբանումն անհրաժեշտ է սահմանադրական կարգ և սահմանադրական պետություն հասկացությունների բովանդակությունն ընկալելու համար: Պետք է հիշել, որ պետությունը սահմանադրական է, երբ այդ պետությունում ապահովված է պետության ենթակայությունը իրավունքին<sup>1</sup> և որ «սահմանադրական կարգ» հասկացությունն ավելի լայն հասկացության՝ սահմանադրականության բաղկացուցիչ մաս է: Այստեղից հետևություն՝ Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգն առկա է, երբ առկա է սահմանադրականությունը, այսինքն՝ իրավունքի գերակայությունը, իրավական պետությունը:

Պատահական չէ, որ իրավագիտության մեջ Սահմանադրական կարգ հասկացությունն ընկալվում է երկու ասպեկտով. փաստացի և իրավական: Եթե փաստացի ասելով նկատի է ունեցվում սահմանադրական փաստացի հարաբերությունների համակարգ, որը ծագում է

ժողովրդի իշխանության կազմավորման և մարդու ազատությունների և իրավունքների ապահովման ժամանակ, ապա երկրորդի դեպքում՝ այն սահմանադրական նորմ սկզբունքների համակարգ է, որով ամրագրվում և կարգավորվում են հասարակական - քաղաքական կարգում ռեալ գոյություն ունեցող հասարակական հարաբերություններ:<sup>2</sup>

Ստացվում է՝ սահմանադրության ընդունումով ինքը՝ սահմանադիրը՝ ժողովուրդը, փաստացի սահմանադրական կարգին (իր իդեալին) տալիս է սահմանադրական իրավական ձև, այլ կերպ ասած՝ ամրագրում է իր բնական իրավունքը և վերջինիս կենսագործման մեխանիզմը: Իր բնական իրավունքների կենսագործումը Հայաստանի Հանրապետության ժողովուրդը տեսնում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանադրական կարգ ունեցող պետությունում: Հարկ է նշել, որ սահմանադրության առկայությունը չի նշանակում, որ առկա է սահմանադրական կարգը և սահմանադրականությունը: Սահմանադրականությունը և վերջինիս մասը կազմող սահմանադրական կարգը առկա կլինի, եթե ձևավորված լինեն սահմանադրականացված հասարակական հարաբերություններ, այլ կերպ ասած՝ երբ Սահմանադրությամբ սահմանված հասարակական հարաբերությունները և ձևավորված իրական հարաբերությունները համընկնում են, այսինքն՝ գոյություն ունի իրական, այլ ոչ թե կեղծ սահմանադրություն և համարժեք սահմանադրական կարգ: Իրական սահմանադրական կարգի ձևավորման ապահովմանն էլ ուղղված են ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը, որը և Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվեց հակասահմանադրական:

<sup>1</sup> Տե՛ս Կутафин О. Е. Российский конституционализм. Изд. Норма М. 2008 стр. 186.

<sup>2</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь, Под.ред. заслуженного деятеля науки РФ Док.юр.наук, Проф.А.В.Малько, М. Проспект 2018, стр. 185-186.

Վերջինիս հետ կապված կարևոր է ևս մեկ հանգամանքի պարզաբանում, այն է՝ կարծիքի անհրաժեշտություն 300.1 հոդվածի ընդունման համար:

Իհարկե՝ այո, Հայաստանի Հանրապետությունում տեղի էր ունեցել հոկտեմբերի 27, որի ժամանակ, ես կասեի՝ ոչնչացվեց պետականության գաղափարը, արժեհամակազր և ամենակարևորը՝ տեղի ունեցածն առ այսօր մնացել է չբացահայտված, մարտի 1 և ուրիշ հայտնի և հանրությանը անհայտ հանցավոր արարքներ, օրինակ, ինքնիշխանության (սուվերենության) տնտեսական հիմք-երաշխիքի վաճառք օտար պետություններին:

2009 թվականին՝ մարտի 1-ի դեպքերից ուղիղ մեկ տարի հետո, 2008թ. գործող իշխանության կողմից ընդունվեց 300.1 հոդվածը, որն իմ կարծիքով ուներ կանխարգելիչ նպատակ, որը շուրջ 10 տարի անց, այդ հոդվածը ընդունողների կողմից պահանջվեց ճանաչել հակասահմանադրական:

Հարց է ծագում. ինչ է դուք այն ժամանակ չէիք հասկանում, որ ձեր ընդունած նորմը, ինչպես դուք եք ասում, հակասահմանադրական է, թե՛ այն այսօր է դարձել այդպիսին, որով հետև այդպես է պետք: Այս դեպքում ինչպես մեկնաբանել սահմանադրական կարգի բովանդակությունը կազմող ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Հարց. արդյո՞ք մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ բոլոր պաշտոնատար անձինք գործել են իրենց լիազորությունների շրջանակում, եթե այո, ապա արդյո՞ք գործել են օրենքներին և Սահմանադրությանը համապատասխան:

Այս հարցերի պատասխանը կարող է տալ միայն դատարանը, բայց ինչպիսին էլ որ այն լինի, էական չէ, քանի որ սահմանադրական այդ նորմը այդ օրը չի գործել, գործելու դեպքում մարտի 1 չէր լինի:

«Սահմանադրական կարգ» հասկացությունն ընկալելու համար էական նշանակություն ունի ինքնիշխան պետության կատեգորիայի պարզաբանումը, հատկապես վերջինիս տնտեսական հիմքի պաշտպանության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածից հետևում է, որ ինքնիշխանությունը վերագրված է պետությանը, այն է՝ պետությունը գերակա է իր տերիտորիայում և անկախ միջազգային հարաբերություններում<sup>3</sup> իրեն պատկանող պետական իշխանությունը իրացնելիս:

Սուվերենությունը ինքնիշխանությունը իշխանության գերակայությունն ու անկախությունն է<sup>4</sup>, ինչը նշանակում է, որ պետությունն իրավունք ունի, իր շահերի պաշտպանությունից ելնելով, պաշտպանելով միջազգային իրավական նորմերի պահանջները, սահմանադրական կարգի պաշտպանության նպատակով ընդունել իրավական նորմեր, որոնցով կսահմանվի նաև նոր հանցակազմեր, որոնց առկայությունը այլ պետություններում պարտադիր չէ:

Այս տեսանկյունից անհասկանալի է Վենետիկի հանձնաժողովի այն արտահայտությունը, թե եվրոպական պետություններում «Սահմանադրական կարգի» դեմ ուղղված վերտառությամբ հանցակազմ չկա:

Ուզում եմ հասկանալ՝ ինչ կապ կա քննարկվող հարցի և նման հարցադրման միջև, հատկապես այն դեպքում, երբ նույն հանձնաժողովը նշում է, որ կան սահմանադրական կարգ հասկացության տարրերի դեմ ուղղված հանցագործություններ-հանցակազմեր:

Հայաստանի Հանրապետությունը, որպես ինքնիշխան պետություն, ինքն է որոշում իր հասարակական, սահմանադրական կարգի պաշտպանության ձևերն ու մեթոդները, առավել ևս, երբ այդ ձևերն ու մեթոդները չեն հակասում Սահմանադրությանը և միջազգային իրավունքի նորմերին, ուղղված են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությանը:

Ինքնիշխանությունը միաժամանակ չի նշանակում, որ պետությունը, գործող իշխանությունը, պաշտոնատար անձինք իրենց իշխանությունը պաշտպանելու համար իրավունք ունեն ընտ-

<sup>3</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь под. ред. А. В. Малько стр. 52.

<sup>4</sup> Տե՛ս Барихин А.Б. Юридический энциклопедический словарь, М. Книжный мир, 2005, стр. 610.

րելու ցանկացած ձև և մեթոդ: Հենց դրա համար է քրեական օրենսգրքով նախատեսված 300.1 հոդվածը՝ ուղղված Սահմանադրության 1-ին հոդվածի իրացման, կենսագործման ապահովմանը, որը և պետության պարտականությունն է:

Իզուր չէր, որ երկրի նախագահը մինչև պաշտոնի ստանձնելը տալիս էր հետևյալ երդումը. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները (ընդգծումը Ճ.Զ.), ապահովել հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի»:

Դա սովորական երդում չէ, դա պարտականությունների ստանձնում է, որոնց չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը պատասխանատվության հիմք է, ինչը չիրականացվեց ո՛չ հոկտեմբերի 27-ի, ո՛չ էլ մարտի 1-ի դեպքերից, սպանդից հետո: Այս ամենը մարդու իրավունքների և ազատությունների «պաշտպանության լավագույն» օրինակներ են:

Ինքնիշխանությունն ունի իր տնտեսական, քաղաքական և իրավական հիմքերը:

**Իրավական** - պետք նկատի է ունենալ հռչակագիրը, Սահմանադրությունը, օրենսդրությունը, միջազգային իրավունքով ճանաչված սկզբունքները, որոնցով ամրագրված են պետությունների հավասարությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը:

**Քաղաքական** - նկատի է ունեցվում կայուն ձևավորված պետության գոյությունը և բավարար չափով իշխանության քաղաքական կազմակերպության առկայությունը:

**Տնտեսական** - նկատի է ունեցվում պետության տարածքի՝ իր բոլոր տնտեսական, մշակութային և այլ արժեքների տնօրինումը:

Ինքնիշխանության առավել կարևոր երաշխիքը նրա հզոր և կայուն տնտեսական հիմքի առկայությունն է: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությամբ իրեն ինքնիշխան հայտարարելը և միջազ-

գային հանրության կողմից վերջինիս ճանաչելը բավարար չէ դե ֆակտո ինքնիշխան լինելու համար: Անհրաժեշտ է ունենալ սեփական կայուն զարգացած և զարգացող տնտեսություն՝ սեփականության բոլոր ձևերով: Միայն այս դեպքում է հնարավոր պահպանել ինքնիշխանությունը՝ սահմանադրական կարգը: Վերջինս չի պահպանվի տնտեսական հիմքը այլ պետություններին վաճառելու դեպքում, ինչն արվել է Հայաստանի Հանրապետությունում «գույք պարտքի դիմաց» գործարքով, ընդերքի վաճառումով և այլն:

Հենց նման գործողություններով է տապալվում սահմանադրական կարգը, ինչի վերականգնման էին ուղղված մարտի 1-ի դեպքերը, ինչի արդյունքում իշխանության կողմից ոտնահարվեցին մարդու իրավունքներն ու ազատությունները, գնդակահարվեց 10 անմեղ մարդ, ինչի պատճառը սահմանադրական կարգի հիմունքներից մեկի՝ մարդու բարձրագույն արժեք ճանաչելու և պետության կողմից պաշտպանելու պարտականության չկատարելն էր:

Շարադրանքը հիմք է տալիս ասելու, որ «Սահմանադրական կարգ» հասկացությունը որպես սահմանադրաիրավական կատեգորիա, ներկայացնում է հարաբերությունների մի համակարգ, որը ձևավորվում է ժողովրդի լեգիտիմորեն սահմանադրեցված և ամրագրված սահմանադրական կարգի հիմունքների սահմանման և ամրագրման ժամանակ:

- Ըստ այդմ՝ սահմանադրական կարգը.
- միասնական կատեգորիա է և ունի իր տարրերը,
  - սահմանադրական կարգն առկա է, երբ առկա են Սահմանադրության բովանդակությանը համարժեք Սահմանադրական կարգի տարրերը,
  - սահմանադրական կարգի ցանկացած տարրի դեմ ուղղված ոտնձգություն ոտնձգություն է Սահմանադրական կարգի դեմ և համարվում է ինքնուրույն հանցագործություն,
  - սահմանադրական կարգը միայն լեգիտիմ իշխանության<sup>5</sup> որոշակի կառուցվածք է:

<sup>5</sup> Միայն լեգիտիմ իշխանության առկայության դեպքում է հնարավոր սահմանադրականության, ինչպես նաև սահմանադրական կարգի առկայությունը, քանի որ սահմանադրական կարգը սահմանադրականության մասն է կազմում:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Սահմանադրական կարգը լեգիտիմ իշխանության որոշակի կառուցվածք է, իսկ ինքնիշխանությունը (սուվերենությունը) իշխանության անկախությունն ու գերակայությունն է, կստացվի որ վերջինիս միջոցով է ապահովվում սահմանադրական կարգի, սահմանադրականության, սահմանադրական պետության ձևավորումը:

Դժվար չէ անել հետևյալ պարզ, բոլորի համար ընկալելի և հասկանալի եզրակացությունը՝ ինքնիշխանության, որպես սահմանադրական կարգի հիմունքներից, տարրերից մեկի դեմ ուղղված ցանկացած հանցավոր արարք ուղղված է պետության հիմնական օրենքում ժողովրդի կողմից սահմանված սահմանադրական կարգի դեմ: Ինքնիշխանության դեմ ուղղված հանցավոր արարքների օբյեկտներ կարող են լինել ինքնիշխանության տնտեսական, քաղաքական, իրավական հիմքերը, որոնց ձևավորումը և պաշտպանումը պետության սրբազան պարտականությունն է: Այսպես կարելի է մեկնաբանել սահմանադրական կարգի հիմունքներից յուրաքանչյուրը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1 հոդվածով նախատեսված «Սահմանադրական կարգ» հասկացությունն իր բովանդակությամբ շատ ավելի նեղ է, քան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին գլխում նախատեսված Սահմանադրական կարգի հիմունքներն են: Սահմանադրական կարգն իր մեջ ընդգրկում է նաև հարաբերություններ՝ կապված ընտրական իրավունքի և ընտրական համակարգի, տնտեսական կարգի և սեփականության ձևերի արտաքին և ներքին քաղաքականության ձևերի, զինված ուժերի՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, տարածքային ամբողջականությունը, անվտանգությունը, սահմանների անձեռնմխելիությունն ապահովող ինստիտուտները և այլն սահմանելիս:

Հարց է ծագում՝ սահմանադրական կարգի բովանդակության նեղացումը կարող է դիտ-

վել որպես պատժի մեղմացում, ինչը կարող էր նորմին հետադարձ ուժ տալու հիմք լինել:

Կարծում եմ, որ 300.1 հոդվածը ընդունողներին դա չէր կարող հետաքրքրել, նրանց նպատակը Սահմանադրական կարգ հասկացության բովանդակության աղավաղելն է եղել, ինչն արվել է 300.1 հոդվածի հիպոթեզի և դիսպոզիցիայի ըստ իրենց՝ անորոշ շարադրելու միջոցով, որն ինչ-որ չափով ստացվել է, այն էլ սահմանադրական կարգի հիմունքների նեղացման տեսանկյունից, ինչը չի կարող էական դեր խաղալ հանցակազմի որակման կամ սահմանադրական կարգի հասկացությունն ընկալելու համար, առավել ևս այն դեպքում, երբ ինչպես 2005, այնպես էլ 2015թ. Սահմանադրություններում պահպանվել են 300.1 հոդվածում սահմանված Սահմանադրական կարգ հասկացության հիմունքների շրջանակը և բովանդակությունը<sup>6</sup>, մասնավորապես պահպանվել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության լինելն ամրագրող հիմունքները, իշխանության պատկանելիությունը ժողովրդին և նրա կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերը և իրականացնողներին ընտրելու իրավունքը, մարդուն և նրա արժանապատվությունը բարձրագույն արժեք ճանաչելը և պաշտպանելը պետության կողմից, իշխանությունների տարանջատման սկզբունքը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից միայն այնպիսի գործողությունների կատարման պարտականությունը, որոնք լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով (ՀՀ Սահմ. 5-րդ հոդված 2 մաս) (նոր Սահմանադրությամբ օրինականության սկզբունքը 6-րդ հոդված) և այլն, իսկ թե որ թվականի Սահմանադրությամբ պետք է ղեկավարվել, պատասխանը մեկն է՝ 2008թ. մարտի 1-ին գործող Սահմանադրությամբ: Այս պարագայում Սահմանադրական դատարանի պարտականությունն էր՝ պարզել, 2008թ. մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը գործում էր դե յուրե, թե դե ֆակտո: Հայտնի է, որ

<sup>6</sup> Դժվար չէ համեմատել 2005 և 2015թ. Սահմանադրությունների և Սահմանադրական կարգի հիմունքներ գլխի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ հոդվածները 2005թ. Սահմանադրության և 2015թ. Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ հոդվածների հետ, տեսնելու համար, որ բովանդակային տեսանկյունից էական փոփոխություններ չեն ունեցել:

սահմանադրությունները լինում են իրական և կեղծ: Կեղծ են բոլոր այն Սահմանադրությունները, որոնց նորմերի բովանդակությունը և ձևավորված հասարակական հարաբերությունները չեն համընկնում, ինչը Սահմանադրության, սահմանադրական նորմերի չգործելու, չաշխատելու, չկենսագործելու արդյունքն է: Այլ կերպ ասած՝ 2008թ. մարտի 1-ին մենք ունեցել ենք կեղծ Սահմանադրություն: Եթե վերջինը մենք ընդունում ենք որպես իրական, ուրեմն մնացած բոլոր հարցադրումները դառնում են անիմաստ, քանի որ մենք վավերացնում ենք ամենածանր հանցագործությունը՝ երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության դեմ ուղղված հանցագործության առկայությունը, և, եթե այն չի ընդունվում Սահմանադրական դատարանի կողմից, ինչը և արվեց, ուրեմն Սահմանադրական դատարանի կողմից լեգիտիմացվում է մարտի 1-ը, ինչը հայ պետականության գաղափարի հերթական մերժումն է:

Շարադրանքը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1 հոդվածում օգտագործած Սահմանադրական կարգ (Սահմանադրության 1-5-րդ և 6-րդ հոդվածի 1-ին մաս) հասկացության մեջ անհասկանալի ոչինչ չկա, անհասկանալի է այն, որ Սահմանադրական դատարանը քննարկում էր ոչ թե 300.1 հոդվածի համապատասխանությունը Սահմանադրությանը ընդհանրապես, որպես Սահմանադրական դատարանի հիմնական գործառույթ՝ սահմանադրականությունն ապահովելու դիրքերից, այլ այն կապվում է Քոչարյանի գործոնի հետ, այն էլ այն դեպքում, երբ անկախ նրանից, թե Սահմանադրական դատարանն ինչպիսի որոշում կկայացնե՞ր, միևնույնն է՝ այն կապ չէր ունենա Քոչարյանի հետ այն պատճառով, որ այն չէր կարող հերքել մարտի 1-ի դեպքերի տեղի ունենալը, և որ 300.1 հոդվածն ընդունվել էր 2009թ., իսկ մարտի 1-ը տեղի էր ունեցել 2008թ-ին, ինչը նշանակում է, որ 300.1 հոդվածը հետադարձ ուժ ունենալ չէր կարող, ինչի մասին լավատեղյակ է ցանկացած միջին իրավական գի-

տելիքներ ունեցող մարդ, իսկ մասնագետը շատ լավ գիտի, որ իրավական նորմը հետադարձ ուժ է ստանում հիմնականում երկու դեպքում, երբ նորմով մեղմացվում է պատիժը և պատժաչափը, և, երբ նորմ ընդունողը նորմին տալիս է հետադարձ ուժ: Այս պարագայում բացակայում էին երկուսն էլ: Այդ դեպքում հարց է ծագում՝ ինչո՞ւ ենք մեղադրում մի հոդվածով, որը չունի հետադարձ ուժ, որով մեղադրել չի կարելի, այն էլ այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կար 300 հոդված, որով նախատեսված հանցակազմն ուղղված է այն հիմունքների դեմ, որոնցով, ինչպես իրավացիորեն նշում է դոկտոր, պրոֆեսոր Ա. Գաբուզյանը ամրագրված են պետական իշխանության կազմավորման և գործունեության սկզբունքներ,<sup>7</sup> այն ինչ սահմանված է 300.1 հոդվածի հիպոթեզում:

Ինչպես նշվեց վերևում, սահմանադրական կարգը ոչ այլ ինչ է, քան լեգիտիմ<sup>8</sup> իշխանության որոշակի կառուցվածք, որի դեմ ուղղված հանցավոր արարքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում 300.1 հոդվածով ամրագրված է որպես «Սահմանադրական կարգը տապալելը»:

Դժվար չէ նկատել, որ 300 և 300.1 հոդվածները միտում ունեն պատժել բոլոր նրանց, ովքեր կկատարեն սահմանադրական կարգի հիմունքների դեմ ուղղված պատժելի արարք: Երկուսի դեպքում էլ օբյեկտը սահմանադրական կարգն է, նպատակը՝ վերջինիս տապալումը, ինչը կարող է կատարվել տարբեր ձևերով, մասնավորապես ժողովրդին իր իշխանությունը ազատ ընտրությունների կամ հանրաքվեների միջոցով իրականացնելու հնարավորությունից զրկելով, մարդու իրավունքների և ազատությունների իրականացումն արգելելով և այլն:

Կարելի է մտածել-ենթադրել, որ 300 հոդվածով չմեղադրելն ունեցել է որոշակի նպատակ.

ա) այդպես է արվել, որ հետագայում տեղի ունենար այն, ինչ տեղի ունեցավ,

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. հատուկ մաս, խմբագրությամբ ի.գ.դ., պրոֆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ա. Ղազիսյանի, Երևան, ԵՊՀ իրատարակչություն, 2009թ. էջ 790:

<sup>8</sup> Ուսումնասիրվող ժամանակահատվածում բացակայում էր լեգիտիմ պետական իշխանությունը: Այս մասին է վկայում Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումը:

բ) մեղադրողները (քննչական մարմինները, դատախազները) չէին տիրապետում իրավունքի վերը նշված դրույթներին, ինչը բացառվում է,

գ) ինչո՞ւ Սահմանադրական դատարանը չընտրեց ավելի պարզ ճանապարհը, այլ գնաց բարդ և խորդուբորդ ճանապարհով:

Կարծում եմ, որ պատասխանը միանշանակ լինել չի կարող: Հուսանք, որ ժամանակը կնպաստի պատասխաններ տալուն: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ իրավակիրառ գործունեության ժամանակ միշտ էլ հնարավոր է նորմի ոչ ճիշտ մեկնաբանման պատճառով առկա լինի ոչ համարժեք նորմի ընտրություն և կիրառում: Նման թերությունների ճշգրտումը համապատասխան մարմինների պարտականությունն է: Նշանակում է՝ Սահմանադրական դատարանի ընդունած որոշումը չի գրկում այդ մարմիններին վերադրակելու կատարված հանցակազմը:

Քրեական իրավական նորմում (քր. հոդվածում) սահմանադրության նորմ կամ նորմեր մատնանշելը չի նշանակում, որ քրեական նորմի հիպոթեզում պետք է մեկնաբանվի սահմանադրական նորմը: Վերջինս որպես նորմ սկզբունք մեկնաբանվում և իրացվում է իրավակիրառ գործունեության դեպքում: Քրեական նորմում՝ 300.1 հոդվածի պարագայում, օրենսդիրը նկատի ունի, որ սահմանադրական կարգի տապալումն առկա է, երբ Սահմանադրու-

թյան 1-5-րդ և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չեն կատարվում, այլ կերպ ասած՝ նորմերը չեն կենսագործվում, չեն գործում, չեն կարգավորվում, աշխատում, դադարել են գործելուց իրավական համակարգում:

Պետք է նշել, որ Սահմանադրությունն իրավական համակարգի միջուկն է, հիմքն է, որի նորմերը, որպես նորմ սկզբունքներ, իրենց իրացումն են ստանում մյուս բոլոր նորմերի բովանդակությունում: Ամբողջ իրավական համակարգը ձևավորվում է այդ նորմերի հիման վրա և նրանց համապատասխան: Եթե սահմանադրական նորմը չի գործում, ուրեմն խարխիլվում է ամբողջ իրավական համակարգը: Երբ ասում ենք, որ առկա է 300.1 հոդվածով նախատեսված հանցակազմ, ուրեմն պետք է հասկանալ ոչ միայն որպես Սահմանադրության դեմ ուղղված հանցագործության, այլ նաև ամբողջ իրավական համակարգի:

Շարադրանքը հիմք է տալիս անելու հետևյալ հարցադրումը. արդյո՞ք Սահմանադրական դատարանի կայացրած որոշումը նպաստեց 2008թ. մարտի 1-ին խախտված, ոտնահարված, արժեզրկված հարաբերությունների, մարդու՝ որպես բարձրագույն արժեքի արժանապատվության և ամենակարևորը՝ պետության և (հասարակության) ժողովրդի արժեզրկված հեղինակության վերականգնմանը, թե՞ դրանով լեգիտիմացվեց մարտի 1-ին կատարվածը:

Պատասխանը թողնում ենք ընթերցողին:





**ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի

**ՕՐԵՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՈՆԻ ԹՎՓՈՒՐ  
ՄՆԱԼՈՒ ԴԵՊՐՈՒՄ**

Հանրապետության նախագահի կարգավիճակը ամրագրված է ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 123-րդ հոդվածով, ըստ որի՝ Հանրապետության նախագահը, իր կարգավիճակից ելնելով, հետևում է նաև Սահմանադրության պահպանմանը: Մեջբերված հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել Հանրապետության նախագահի հետևյալ հիմնական փոխկապակցված գործառույթները՝ պետության գլխի և Սահմանադրության երաշխավորի: Այս երկու գործառույթները բնորոշում են Հանրապետության նախագահի կարգավիճակի սահմանադրաիրավական էությունը, իսկ վերջինս, ըստ էության, համահունչ է խորհրդարանական կառավարման ձևի պետություններում Նախագահի ինստիտուտին վերապահվող սահմանադրաիրավական դերին և նշանակությանը:

Հանրապետության նախագահի կարգավիճակը սահմանելիս շեշտը դրվում է հենց Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի վրա, և, ըստ էության, պետք է սահմանվեն այդ գործառույթը պատշաճ իրականացնելու համապատասխան կառուցակարգեր և ընթացակարգեր: Սույն աշխատանքի շրջանակում նախ նպատակահարմար ենք համարում անդրադառնալ Հանրապետության նախագահի կարգավիճակի՝ սահմանադրականության երաշխավորի բաղադրիչին, և փաստել, որ այն հիմնականում իրացվում է Սահմանադրության պահպանմանը հետևելով: Կարծում ենք՝ հիմքեր կան, որ առանձնացվի Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացման առնվազն երկու հիմնական ուղղություն՝ ա) օրենքների և ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականու-

թյան նկատմամբ սահմանադրաիրավական վերահսկողություն, որն իրականացվում է նշված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշման նպատակով Սահմանադրական դատարանի մեջբերված հոդվածի, և բ) հանրային իշխանության մարմինների, ինչպես նաև լայն առումով քաղաքական համակարգի գործունեությունում անհրաժեշտ իրավակարգի և իրավական մշակույթի ձևավորմանը նպաստելը: Օրենքների և այլ իրավական ակտերի՝ Ազգային ժողովի որոշումների, Կառավարության և վարչապետի որոշումների և այլ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության որոշման հարցում Հանրապետության նախագահի ակտիվ դերակատարումը խիստ կարևոր է սահմանադրական կարգի գործուն պահպանությունն ապահովելու համար. դրա շնորհիվ մեծանում է երկրի իրավական համակարգը հակասահմանադրական նորմերից հնարավորինս զերծ պահելու հավանականությունը<sup>1</sup>: Լինելով արտադատական մարմին՝ Հանրապետության նախագահը իրավասու չէ վերջնական որոշում կայացնել սահմանադրականության հարցերի վերաբերյալ: Նրա առաքելությունն այն է, որ առնվազն այդ խնդիրները սահմանված կարգով դառնան Սահմանադրական դատարանի քննարկման նյութ: Ինչպես երևում է վերոգրյալից, սահմանադրականության պահպանման գործում Նախագահը փաստորեն կատարում է նաև կանխարգելիչ գործառույթ:

Ինչ վերաբերում է քաղաքական համակարգի գործունեության մեջ անհրաժեշտ իրավակարգի և իրավական մշակույթի ձևավորմանը, ապա կարծում ենք, որ Հանրապետության նախագահը այս համատեքստում ևս իրացնում է սահմանադրական նորմերի պաշտ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>1</sup> Տե՛ս <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf>

պանի համընդհանուր և միջնորդավորված գործառույթ:

Կարևոր է նշել այն, որ Սահմանադրության պահպանմանը հետևելու Հանրապետության նախագահի գործառույթը չի հանգում միայն Սահմանադրության նորմերի ձևական պահպանմանը: Այս համատեքստում ընդգրկելով միայն պոզիտիվ և համապարտադիր վարքագծի կանոն ամրագրող նորմը պաշտպանելու առաքելությունը՝ մենք, թերևս, սահմանափակում ենք Սահմանադրության պահպանման իմաստն ու շրջանակը՝ գործնականում անտեսելով սահմանադրականության պահպանման ու զարգացման գաղափարը:

Սահմանադրության 5-րդ գլուխը նվիրված է Հանրապետության նախագահի ինստիտուտին, որի հենց առաջին՝ այն է 123-րդ հոդվածը ամրագրում է նախագահի կարգավիճակը և գործառույթները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինչպես արդեն նկատեցինք, Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրակացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով: Այդ լիազորություններից մեկն էլ ամրագրված է Սահմանադրության 129-րդ հոդվածով՝ համաձայն որի Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

Սույն հոդվածում նպատակահարմար ենք գտել անդրադառնալ այնպիսի իրավիճակների, որոնք նախատեսված չեն վերը նշված նոր-

մով: Իրականության մեջ կարող ենք բախվել այնպիսի իրավիճակների, ինչպիսիք են Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը, հրաժարականը, լիազորությունների կատարման անհնարիներությունը: Համաձայն 144-րդ հոդվածի՝ Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարիներության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը: Նախ հարկ ենք համարում նշել այն, որ մեր ներպետական իրավակարգավորումներում ունենք իրավական այնպիսի խնդիր, ինչպիսին նորմատիվ իրավական ակտի ընդունման սոցիալական հետևանքների սպառիչ ու համալիր կանխատեսման բացակայությունն է: Նորմատիվ իրավական ակտի ընդունման հետևանքների կանխատեսման գործընթացը պետք է սկսվի արդեն իսկ նորմատեղծ գործընթացի պլանավորումից: Կանխատեսումն իր հերթին ենթադրում է խնդրի օրենսդրական լուծման այլընտրանքային տարբերակների վերլուծություն և հիմնավորում է յուրաքանչյուր տարբերակի հավանական արդյունավետությունը: Կանխատեսման՝ որպես օրինաստեղծ գործընթացի պարտադիր տարրի ներդրումը, իհարկե, որոշակիորեն կդանդաղեցնի օրենքների ընդունման գործընթացը, բացի այդ, այն նաև ծախսատար է, սակայն այս դեպքում խնայողությունը տեղին չէ, քանի որ առանց լուրջ կանխատեսման, հապճեպ ընդունված իրավական ակտերը կարող են հանգեցնել շատ ավելի լուրջ կորուստների և իրավակարգավորման անարդյունավետության:

Կանխատեսումների բացակայության հիմնական պատճառն այն է, որ ներկայումս իրավագիտության մեջ շեշտը հիմնականում դրվում է իրավիճակային օրենսդրության կատարելագործման և զարգացման վրա՝ անտեսելով իրավական ռազմավարության խնդիրները<sup>2</sup>: Ուստի, տեղին է շեշտել Պյոտր Կապիցայի այն

<sup>2</sup> Տե՛ս օրինակ, **Гаврилов О. А.** О некоторых аспектах правотворческой стратегии, **Поленина С. В.** Стратегия правотворчества и социального прогнозирования. Москва, 1993, **Колдаева Н. П.**, О долгосрочном планировании развития законодательства // Советское государство и право. 1979. N 6; **Поленина С.В.**, Законотворчество в Российской Федерации. - Москва, 1996:

խոսքերը, որ միայն ապագայի մասին հստակ պատկերացում ունենալու դեպքում կարող ենք ճիշտ ուղղորդել մեր աշխատանքը ներկայումս<sup>3</sup>: Այս հանգամանքների ընդգծումը հետապնդում էր հստակ նպատակ. այն է ցույց տալ նախքան օրինագծի ստորագրվելը առկա իրավական խնդիրների առկայությունը:

Վերոնշյալ հանգամանքից բացի, հարկ է ընդգծել ևս մեկ կարևոր հարցադրում, որին սպառնիչ պատասխանելու համար առաջին հերթին անդրադառնանք «իրավաստեղծ մարմնի կամք» և «պետական կամք» եզրույթների բովանդակության բացահայտմանը, փոխադարձ կապին, նորմատիվ իրավական ակտի՝ իրավական մարմնի կամքից պետական մարմնի կամքի աստիճան բարձրանալուն: Իրավաստեղծ մարմնի կամքը դեռևս պետական կամքի արտահայտությունն է: Երբեմն կարող է անցնել բավականին երկար ժամանակ, և առաջանալ նոր իրավաբանական փաստերի անհրաժեշտություն, որպեսզի իրավաստեղծ մարմնի կամքը պետական կամքի արտահայտության հատկանիշ դառնա:<sup>4</sup> Իրավական ակտը համապարտադիրության հատկանիշի կրող դառնալու և այդ հատկանիշը տվյալ նորմատիվ ակտի գործողության տիրույթում գտնվող իրավասուբյեկտների վրա տարածելու համար պետք է առանձնացվի իրավաստեղծ մարմնի կամքից, չմնա լոկ մեկ պետական մարմնի ցանկության արտահայտություն, այլ կրի իրավական օրենք լինելու տիտղոսը: Այդ է պատճառը, որ որպես ընդհանուր օրինաչափություն այն ստորագրվում է Սահմանադրության պահպանման գործառույթը որդեգրած պետական մարմնի՝ այն է պետության նախագահի կողմից, որն էլ իր հերթին կամ ստորագրում է օրենքը՝ այն համարելով սահմանադրական նորմերին, դրանցով առաջադրված իրավական պահանջներին համապատասխան, կամ ուղարկում է Սահմանադրական դատարան՝ իրացնելով միաժամանակ թե՛ իր լիազորությունը, որը նախատեսված է 129-րդ հոդվածով, թե՛ պարտականությունը՝ սահմանադրության պահպանման գործառույթի տեսքով:

Չնայած մի շարք ներքաղաքական խնդիրների՝ պետք է արձանագրենք նաև այն, որ Հանրապետության նախագահի պաշտոնավարման ընթացքում օբյեկտիվորեն ավելի հավանական է Սահմանադրական դատարան դիմելու լիազորության իրացումը: Համաձայն 124-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հանրապետության նախագահին իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ: Հենց այս հանգամանքն էլ պայմանավորում է վերջինիս անաչառությունն ու անկողմնակալությունը: Ինչպես իրավագիտորեն նշում են սահմանադրագետներ Իոզեֆ Իզենզեեն և Գուստավ Ռոբերտ Կիրխոֆը, Նախագահի մոտ (խորհրդարանական հանրապետություններում) քաղաքական նշանակալից իշխանության բացակայությունն ինչ-որ առումով նրա ուժի հիմքն է, որը դրսևորվում է հասարակության քաղաքականության վրա հոգևոր ներգործությամբ: Նախագահը միավորում է այն, ինչը միավորում է բոլորին: Այդպիսով՝ նա կարծես մարմնավորում է սահմանադրության ոգին<sup>5</sup>: Այն պարագայում, երբ այլընտրանքային լուծումներից մեկը ընտրելու պարտականությունը դրված է Ազգային ժողովի նախագահի վրա, մենք խախտում ենք իրավաստեղծ մարմնի կամքի և պետական կամքի միջև առկա նուրբ հավասարակշռությունը: Ստացվում է, որ իրավաստեղծը արտահայտում է իր կամքը և «իր ձեռքով» այն դարձնում այդպիսին՝ նաև հանրության առնչությամբ: Բացի այդ, դիմելով Սահմանադրական դատարան՝ Ազգային ժողովի նախագահը իր ողջ քաղաքական ուժի «աչքում» կկորցնի կամ կարող է կորցնել իր հեղինակությունը և վստահությունը: Այս պարագայում կունենանք մի իրավիճակ, երբ Ազգային ժողովի նախագահը կդառնա քաղաքական մեծամասնության կամքը արտահայտող, ինչը, առաջին հերթին, չունի օրենսդրական ամրագրում և չի տեղավորվում ողջամտության սահմաններում, բացի այդ, այն կհանգեցնի օրենքների՝ Սահմանադրական դատարանում զտման գործընթաց անցնելու և իրավունքի ոգուն հա-

<sup>3</sup> Տե՛ս Лихтенштейн Е. С. Слово о науке, Москва, 1976. Кн. 1, ст. 108.  
<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Степанян В. В. Механизм выражения интересов в социалистическом праве // «Советское государство и право», 1982, № 5, ст. 54-55.  
<sup>5</sup> Տե՛ս Й. Изензее, П. Кирхофф «Государственное право Германии», Москва, 1994, ст. 238.

մապատասխանելու հնարավորության իսպառ բացակայությանը: Խորհրդարանական երկրի համար խորհրդարանի նախագահի այդպիսի գործելաոճը կարող է ազդել խորհրդարանի հեղինակության վրա:

Այսպիսով՝ կարծում ենք՝ Ազգային ժողովի նախագահի կողմից օրենքի ստորագրումը տվյալ դեպքում հոդված 129-ի 1-ին մասի իրավանորմը կդարձնի ոչ թե այլընտրանքային, այլ բացարձակ որոշակի՝ գործնականում այլընտրանքի գաղափարը պահպանելով լոկ չկենսագործվող, պոզիտիվ ամրագրման հարթության վրա:

Իհարկե, կարող ենք նաև նշել, որ նման դեպքերում կարելի է ապավինել Հանրապետության նախագահի հետագա վերահսկողությանը՝ արդեն իսկ ընդունված օրենքի՝ Սահմանադրության համապատասխանության որոշման հարցի լուծման համար: Հանրապետության նախագահը դիմում է Սահմանադրական դատարան արդեն իսկ ընդունված օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար՝ այդպիսով իրականացնելով հետագա վերահսկողություն: Հենց այս տարբերակի առկայությունն էլ պայմանավորում է ներկայումս Ազգային ժողովի նախագահին այդպիսի իրավազորություն վերապահելու տրամաբանությունը, ինչը, սակայն, կարծում ենք՝ բավարար չափով հիմնավորված չէ:

Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահի պաշտոնակության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո անցկացվում է Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն: Արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո տասներորդ օրը: Ստացվում է, որ արտահերթ ընտրության միջոցով ընտրված նախագահը ամենաշուտը կսկսի պաշտոնավարել նախագահի պաշտոնը թափուր մնալուց 35 օր անց: Այս ժամանակահատվածը մեր կողմից քննարկման առարկա դարձրած հարցի համար իսկապես երկար է:

Ավելին՝ չի բացառվում, որ այդ շրջանում ընդունվեն մեծաքանակ օրենքներ, հետևաբար կարծում ենք, որ այդպիսի խնդրի առկայությունը ևս հրատապ է դարձնում առաջարկի ընդունումը: Ուստի հնարավոր է՝ ունենանք մի իրավիճակ, երբ իրավանորմի գործողության տիրույթում արդեն իսկ առկա կլինեն անձինք, ովքեր կտուժեն օրենքի հակասահմանադրականության պատճառով, իսկ գործնականում պարզապես կմնա առաջ քաշելու այն միտքը, որ Հանրապետության նախագահի կողմից հետագա վերահսկողության ինստիտուտի պարագայում կկարողանանք բացահայտել վնասի առկայությունն ու անձին տալ համարժեք փոխհատուցում:

Ինչո՞ւ որդեգրել հիշյալ տարբերակով առաջադրված խնդիրը լուծելու մոտեցումը, եթե իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքը կարելի է կանխել ավելի վաղ, և պարզապես օրենսդրական մակարդակով ամրագրել նախագահի պաշտոնակության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան ընթացքում ընդունված օրենքների՝ ՄԴ ուղարկվելու օբյեկտիվ պայմանը, այդպիսով ընդհանուր օրինաչափությունից արձանագրելով բացառություն, առաջին հերթին հօգուտ իրավական և սոցիալական պետության: Հակառակ դեպքում մենք ապավինում ենք իրավական կարգավորման կառուցակարգի միայն վերջին՝ սոցիալ-իրավական վերահսկողության փուլում հնարավոր թերության արձանագրմանն ու շտկելու փորձերին: Մինչդեռ, ինչպես գիտենք, իրավունքի կարգավորման կառուցակարգը անցնում է 5 հիմնական փուլ՝ իրավունքի ձևավորման փուլ, իրավաստեղծագործության փուլ, իրավական տեղեկութավորման փուլ, իրավունքի կենսագործման և սոցիալ-իրավական վերահսկողության փուլ<sup>6</sup>: Իրավական կարգավորման կառուցակարգի առաջին երկու փուլերում՝ իրավունքի ձևավորման և իրավաստեղծագործության, տեղի է ունենում իրավական կարգավորման կառուցակարգի նորմատիվ հենքի ձևավորում: Իսկ երրորդ՝ իրավական տեղեկութավորման փուլում, տեղի է ունենում ընդունված նորմատիվ իրավական ակտի հրապարակու-

<sup>6</sup> Տե՛ս Վաղարշյան Ա. «Պետության և իրավունքի տեսություն-2», Երևան: Հեղինակային հրատարակություն, 2017, էջ 368:

մը: Հենց այս երկու փուլերի միջև ընկած ժամանակահատվածում էլ պետք է լուծել օրենքի հակասահմանադրականության հարցը: Այսինքն՝ այն դեպքերում, երբ ունենանք հակասահմանադրականության հիմնավոր կասկած, ապավինենք ոչ թե վերահսկողության ժամանակ խնդրի լուծմանը, այլ առավել վաղ կանխենք խնդիրը, ինչպես նշվեց վերոգրյալում՝ այդպիսով նվազագույնի հասցնելով ոչ իրավական օրենքների մուտքը հայրենական իրավական համակարգ, որի հետևանքները ոչ միշտ են նվազ վնասներ հասցնում: Բացի այդ, նախագահի կողմից հետագա վերահսկողության իրականացումը իրավական վերահսկողության արտահայտման ձևերից մեկն է: Առհասարակ սոցիալ-իրավական վերահսկողության նպատակը իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման միջոցով գործող նորմերի կատարման ապահովումն է, այսինքն՝ այստեղ հիմնականում առաջնորդվում ենք նորմի սահմանադրականության համոզմունքով և խնդիրը փնտրում իրավախախտի արարքների մեջ: Սակայն հետագա վերահսկողության դեպքում, ինչպես գիտենք, խնդրի պատճառը երբեմն

հենց օրենքն է: Բնականաբար, առավել արդյունավետ կլինի նախնական վերահսկողության միջոցով օրենսդրական խնդրի բացահայտումն ու լուծումը, որի համար, ինչպես նշեցինք, նախաձեռնող սուբյեկտի կարգավիճակով պետք է հանդես գա պետության գլուխը՝ Հանրապետության նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ օրենքը իրավունքի ուժով ուղարկվի Սահմանադրական դատարան:

Վերը բերված խնդրահարույց հանգամանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության դեպքում նախքան օրենքի ստորագրումը իրավունքի ուժով այն ուղարկել Սահմանադրական դատարան, որպեսզի «Սահմանադրության պահպանի» բացակայության ընթացքում ապահովվի Սահմանադրության պահպանման առաքելությունը:

Հավելենք, որ այսպիսի իրավական կարգավորումը կգսպի նաև Ազգային ժողովի կողմից Հանրապետության նախագահի բացակայության շրջանում մեծաքանակ օրենքներ ընդունելու հնարավոր գրավչությունը:



## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐՆԵՐԸ

**I. Հանցագործության համար դատապարտված անձանց ընտրական իրավունքի սահմանափակման միջազգային իրավական հիմքերը և չափանիշները:** Հանցագործության համար դատապարտված անձանց ընտրելու իրավունքից զրկելը դատավճռի ամենաձանր երկրորդային հետևանքներից է՝ և հանցագործության դատապարտվելու հիմքով անձի «քաղաքացիական մահվան»՝ դատապարտված անձին, առնվազն պատիժը կրելու ընթացքում, քաղաքացիական և քաղաքական մի շարք հիմնարար իրավունքներից զրկելու և/կամ դրանք սահմանափակելու դրսևորում:

Դատապարտյալներին ընտրական իրավունքից զրկելու կողմնակիցները նշում են, որ հանցագործություն կատարած մարդիկ խախտում են հասարակական պայմանագիրը՝ դրանով իսկ հանձնելով նաև քաղաքացիական հասարակությանը մասնակցության իրենց իրավունքը: Որոշ հեղինակներ նշում են, որ հանցագործության կատարմամբ անձը ցույց է տալիս հասարակության կառավարման հարցում իր ոչ արժանի լինելը, և որպես հետևանք՝ դատապարտյալները չպետք է քաղաքական որոշումների կայացման հարցում ունենան ձայնի իրավունք<sup>2</sup>: Հակառակ տեսակետի կողմնակիցները նշում են, որ դատապարտյալներին ընտ-

րական իրավունքից զրկելը սահմանափակում և խախտում է ընտրական իրավունքի համընդհանուր և հիմնարար սկզբունքները<sup>3</sup>, և այն կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև քաղաքացիական և համայնքային մասնակցության վրա ընդհանրապես<sup>4</sup>: Ընդդիմախոսները նաև նշում են, որ դատապարտյալներին ընտրելու իրավունքից զրկելը կարող է լավ քաղաքական հնարավորություն ստեղծել՝ իշխող ուժին հակադիր տեսակետ ունեցող անձանց թիրախավորելու և ընտրական գործընթացից չեզոքացնելու համար:

Առանց խտրականության ընտրելու իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, որի 21-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր երկրի կառավարմանը ուղղակի կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իրավունք: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը ևս երաշխավորում է քվեարկելու և ընտրվելու իրավունք<sup>5</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ միջազգային իրավական հիմնարար փաստաթղթերը ազատազրկման դատապարտված անձանց ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ առանձնահատուկ դրույթներ չեն պարունա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>1</sup> Տե՛ս Siegel, Jonah A. (January 1, 2011). “Felon Disenfranchisement and the Fight for Universal Suffrage”. *Social Work*. 56 (1): էջեր 89–91, հղումը՝ <https://academic.oup.com/sw/article-abstract/56/1/89/1857153?redirectedFrom=fulltext>, 27.02.2022թ. դրությամբ:  
<sup>2</sup> Տե՛ս Eli L. Levine, Does the Social Contract Justify Felony Disenfranchisement?, 1 *Wash. U. Jur. Rev.* 193 (2009), հղումը՝ [https://openscholarship.wustl.edu/law\\_jurisprudence/vol1/iss1/5](https://openscholarship.wustl.edu/law_jurisprudence/vol1/iss1/5), 27.02.2022թ. դրությամբ:  
<sup>3</sup> Տե՛ս “LOSING THE VOTE: The Impact of Felony Disenfranchisement Laws in the United States”, Human Rights Watch and the Sentencing Project. October 1998.  
<sup>4</sup> Տե՛ս Bowers, Melanie M; Preuhs, Robert R (September 2009). “Collateral Consequences of a Collateral Penalty: The Negative Effect of Felon Disenfranchisement Laws on the Political Participation of Nonfelons”. *Social Science Quarterly*. 90 (3), էջեր 722–743, հղումը՝ <https://www.jstor.org/stable/42940613>, 27.02.2022թ. դրությամբ:  
<sup>5</sup> Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի դեկտեմբերի 10-ի դաշնագրի 25-րդ հոդվածը:

կում, դրանց ընդհանուր տրամաբանությունից ակնհայտ է, որ հանցագործության համար դատապարտված անձանց համար պետք է պահպանվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ճանաչված՝ մարդու հիմնարար բոլոր իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ հիմնարար փաստաթղթերով սահմանված իրավունքները՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք գերակշռորեն անհրաժեշտ են և թելադրված են անձին ազատությունից զրկելու հանգամանքով<sup>6</sup>: ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ ընտրելու իրավունքը բացարձակ իրավունք է, սակայն այս իրավունքի սահմանափակումները պետք է լինեն ողջամիտ և օբյեկտիվ, իսկ իրավունքից զրկելու ժամկետը պետք է համաչափ լինի հանցանքին և դրա համար նշանակված պատժին<sup>7</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը<sup>8</sup> մի շարք գործերով արձանագրել է, որ ընտրական իրավունքի «ակտիվ» հայեցակետը ենթակա է որոշ սահմանափակումների: Այստեղ, ինչպես թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին վերաբերվող ցանկացած այլ ոլորտում, անդամ պետություններն օգտվում են սեփական հայեցողության լուսանցքից, որը տարբեր է՝ կախված համատեքստից: Այնուամենայնիվ, պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը չի կարող բերել նրան, որ որոշ անձանց կամ խմբերին արգելվի մասնակցել երկրի քաղաքական կյանքին, մասնավորապես, օրենսդիր իշխանության անդամների նշանակման միջոցով<sup>9</sup>:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ անազատության մեջ գտնվող անձինք ընդհանուր առմամբ շարունակում են օգտվել Կոնվենցիայով երաշխավորված բոլոր հիմնարար իրավունքներից և ազատություններից՝ բացառությամբ

ազատության իրավունքից, և սովորական կալանքը միանշանակ ընդգրկվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման ոլորտի շրջանակներում: Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքները բացառություն չեն կազմում: Հետևաբար, խոսքն այն մասին չէ, որ կալանավորված անձը զրկվի Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքներից, պարզապես այն հանգամանքի բերումով, որ դատավճռի հիման վրա անազատության մեջ է: Ասվածը չի բացառում այնպիսի միջոցների նախաձեռնումը, որոնք կոչված կլինեն պաշտպանել հասարակությունը Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների վերացմանն ուղղված գործողություններից<sup>10</sup>:

ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ, այնուամենայնիվ, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի բացառում ընտրական իրավունքների սահմանափակումներ մի անձի նկատմամբ, ով, օրինակ, թույլ է տվել լուրջ չարաշահումներ հանրային ծառայություն իրականացնելիս, կամ ում վարքագիծը սպառնացել է խարխլել օրինականությունը կամ ժողովրդավարության հիմքերը: Այդուհանդերձ, չի կարելի թեթևամտորեն կիրարկել այս խիստ միջոցը, որը ենթադրում է քվեարկելու իրավունքից զրկում: Մյուս կողմից՝ համամասնության սկզբունքը պահանջում է, որ տեսանելի և բավարար կապ լինի պատժամիջոցի, վարքագծի և խնդրո առարկա անձի իրավիճակի միջև<sup>11</sup>: Ուստի ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ ազատագրված անձին իր քաղաքական իրավունքներից զրկելը կարող է համապատասխանել այնպիսի իրավաչափ նպատակների, ինչպիսիք են՝ հանցագործության կանխարգելումը, հանրային պատասխանատվության խթանումը, օրենքի գերակայության պահպանումը, ինչպես նաև ժողովրդավարության ճիշտ իրացումն ու պահպանումը: Այնուամեն

<sup>6</sup> Տե՛ս UN General Assembly, Basic Principles for the Treatment of Prisoners: resolution / adopted by the General Assembly, 28 March 1991, A/RES/45/111, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/BasicPrinciplesTreatmentOfPrisoners.aspx> :

<sup>7</sup> Տե՛ս UN Human Rights Committee, General Comment No.25: The right to participate in public affairs, voting rights and the right of equal access to public service (Art. 25), 12/07/1996, CCPR/C/21/Rev.1/Add.7.

<sup>8</sup> Այսուհետ՝ ՄԻԵԴ:

<sup>9</sup> Տե՛ս Ազգն ընդդեմ Կիպրոսի գործով ՄԻԵԴ-ի վճռի 28-րդ և Տանասեն ընդդեմ Մոլդովայի գործով վճռի 158-րդ պարբերությունները:

<sup>10</sup> Տե՛ս Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի վճռի 69-րդ պարբերությունը:

<sup>11</sup> Տե՛ս Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ի վճռի 71-րդ պարբերությունը:

նայնիվ, նման միջոցը չի կարող դրվել ինքնաբերաբար՝ անտեսելով համամասնության պահանջները:

Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ը գտել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում այն հիմնավորմամբ, որ քվեարկելու արգելքը կիրառվել էր ինքնաբերական և ընդհանուր եղանակով ազատագրկման տեսքով պատիժ կրող ցանկացած անձի նկատմամբ: Նշված արգելքը տարածվում էր կալանքի տակ գտնվող 48 000 անձանց վրա, ինչը մեծ թիվ էր և վերաբերում էր ազատագրկման հետ կապված բոլոր տեսակի պատիժներին՝ մեկօրյա ազատագրկումից մինչև ցմահ ազատագրկում, ինչպես նաև տարածվում էր զանցանքների վրա՝ համեմատաբար աննշան զանցանքներից մինչև ավելի ծանր արարքներ: Ավելին՝ որևէ ուղղակի կապ չէր հաստատվել անձի կողմից կատարված գործողությունների և քվեարկելու իրավունքից նրան զրկելու միջև:

Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում Սոյլերն ընդդեմ Թուրքիայի գործով, որտեղ ազատագրկման դատապարտված անձանց քվեարկելու իրավունքի վրա դրված սահմանափակումներն ունեցել են ավելի նշանակալի հետևանքներ, քանի որ կիրառվել են նույնիսկ այն անձանց նկատմամբ, ովքեր չէին կրում ազատագրկման իրենց պատիժը:

Փոխարենը՝ Սկոպլյան ընդդեմ Իտալիայի գործով Դատարանը քննության է առել քվեարկելու իրավունքի արգելքը, որը կիրառվել է միայն որոշակի հստակ սահմանված հանցագործությունների համար դատապարտված կամ ազատագրկման տեսքով պատիժ կրող անձանց նկատմամբ, երբ սահմանված պատժի տևողությունը գերազանցել է օրենքով ամրագրված շեմը, և քվեարկելու անժամկետ արգելք կրող դատապարտված անձանց համար տվյալ համակարգով նախատեսվել է այդ իրավունքի վերականգնման հնարավորություն: Ուստի, ՄԻԵԴ-ը գտել է, որ Իտալիայում ընդունված համակարգը չի դրսևորել ավելորդ խստության հատկանիշներ, և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում չի արձանագրել:

Այսպիսով՝ մարդու իրավունքների վերա-

բերյալ միջազգային հիմնարար փաստաթղթերում ընտրական իրավունքի սահմանափակման վերաբերյալ հիմնադրույթների, ՄԱԿ-ի իրավասու մարմինների կողմից այդ դրույթներին տրված մեկնաբանության և ՄԻԵԴ դիրքորոշումների համատեքստում կարելի է հանգել ազատագրկման դատապարտված անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ հետևյալ ընդհանուր եզրահանգումներին:

1. Հանցագործության համար դատապարտված անձանց համար պետք է պահպանվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ճանաչված՝ մարդու հիմնարար բոլոր իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ հիմնարար փաստաթղթերով սահմանված իրավունքները՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք գերակշռորեն անհրաժեշտ են և թելադրված են անձին ազատությունից զրկելու հանգամանքով:

2. Ընտրելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն այս իրավունքի սահմանափակումները պետք է լինեն ողջամիտ և օբյեկտիվ, իսկ իրավունքից զրկելու ժամկետը պետք է համաչափ լինի հանցանքին և դրա համար նշանակված պատժին:

3. Սահմանափակումներ նախատեսելիս պետությունները պետք է առաջնահերթ համարեն նման սահմանափակումների անհրաժեշտության հիմնավորումը և ձեռնարկեն միայն այնպիսի միջոցներ, որոնք հետապնդվող իրավաչափ նպատակի հետ ողջամիտ հավասարակշռություն են ապահովում՝ երաշխավորելու համար կոնվենցիայով երաշխավորված իրավունքների շարունակական և արդյունավետ պաշտպանությունը: Որևէ դեպքում չպետք է կիրառվի սահմանափակման այնպիսի միջոց, որը կարող է խաթարել կոնվենցիայիով երաշխավորված իրավունքի բուն էությունը:

4. Այն դեպքում, երբ ընտրական իրավունքի սահմանափակման հիմքը հանցագործության համար դատապարտված լինելն է, սահմանափակման ժամանակահատվածը պետք է ուղիղ համեմատական լինի պատժին և հանցագործությանը:

5. Համամասնության սկզբունքը պահանջում է, որ տեսանելի և բավարար կապ լինի



պատժամիջոցի, վարքագծի և անձի կարգավիճակի միջև:

6. Կիրառվող սահմանափակման իրավաչափությունն ուղղակիորեն կապված է նաև ներպետական օրենսդրությամբ սահմանափակված իրավունքի վաղաժամկետ վերականգնման իրավական հնարավորության առկայության հետ:

**II. ՀՀ ընտրական օրենսդրությամբ դատապարտյալների ընտրական իրավունքի վերաբերյալ դրույթների էվոլյուցիան և գործող սահմանափակումների համատեղելիությունը միջազգային-իրավական չափանիշների հետ:** 1995 թվականին ընդունված Սահմանադրության 27-րդ հոդվածով, դրա հիման վրա ընդունված Հայաստանի Հանրապետության 1999 թվականի Ընտրական օրենսգրքի<sup>12</sup> 2-րդ հոդվածի 5-րդ մասով, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 30-րդ հոդվածով և 2011 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի<sup>13</sup> 2-րդ հոդվածի 3-րդ մասով ևս սահմանափակվում էր դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասը, սակայն, սահմանում է, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: 2016 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք սահմանադրական օրենքը ևս Սահմանադրությունում կատարված փոփոխություններին համահունչ ամրագրեց ընտրելու իրավունքից ազատազրկման դատապարտված լինելու հիմքով զրկվող անձանց առավել նեղ շրջանակ՝ 2-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրելով. «Ընտ-

րելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Վկայակոչված նորմերի վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ 1995 թվականի Սահմանադրությամբ ի սկզբանե ամրագրվել էր հանցագործության համար դատապարտման հիմքով ընտրական իրավունքից զրկվող անձանց բավականին լայն շրջանակ՝ սահմանափակումը տարածելով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող բոլոր քաղաքացիների վրա: 1999 թվականի ընտրական օրենսգրքն արտացոլեց այս դրույթը: 2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները անփոփոխ թողեցին դատապարտված անձանց ընտրական իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթը, ինչպիսի պայմաններում 2011 թվականի ընտրական օրենսգրքը ևս ամրագրեց սահմանափակման առավել լայն շրջանակ: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում հանցագործության համար դատապարտված լինելու հիմքով ընտրելու իրավունքից զրկվող քաղաքացիների շրջանակն էականորեն փոփոխվեց, և այժմ.

1. ընտրելու իրավունքից զրկվում են **միայն դիտավորությամբ կատարված հանցագործության համար** դատապարտված անձինք.
2. դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձինք ընտրելու իրավունքից զրկվում են **միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության հիմքով** դատապարտված լինելու դեպքում.
3. դիտավորությամբ կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձինք ընտրելու իրավունքից զրկվում են **ինչպես ազատազրկման, այնպես էլ, տեսականորեն, նրանց նկատմամբ պատժի այլ տեսակների**

<sup>12</sup> Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք, ընդունված 05.02.1999թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1999.02.18/2(68):  
<sup>13</sup> Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք, ընդունված 26.05.2011թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.06.16/36(839) Հոդ. 852:

**նշանակման դեպքում՝ պայմանով, որ փաստացի շարունակում են կրել պատիժը:**

Աշխատանքի նախորդ հատվածներում հիշատակված ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումների և մյուս հիմնարար սկզբունքների համատեքստում ակնհայտ է, որ 1995 թվականից մինչ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում գործած՝ ազատագրկման դատապարտված անձանց ընտրական իրավունքի համընդհանուր սահմանափակման վերաբերյալ իրավակարգավորումները Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումների համատեքստում մի շարք առումներով խիստ խնդրահարույց էին: Մասնավորապես, դատապարտյալների ընտրական իրավունքի ինքնաբերաբար սահմանափակումը՝ առանց հաշվի առնելու կատարված հանցանքի բնույթը, անձանց մեղքի բնույթը, պատժի չափը և մի շարք այլ էական հանգամանքներ, անհամատեղելի էր սահմանափակմամբ հետապնդվող նպատակների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթադրաբար նաև հենց այս նկատառումներով 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով էականորեն վերանայվեցին դատապարտյալների ընտրական իրավունքի սահմանափակման չափանիշները, սույն աշխատության շրջանակներում քննարկման առարկա են միայն դատապարտյալների ընտրելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ ներկայումս գործող սահմանափակումները՝ վերը հիշատակված չափանիշների տեսանկյունից:

**Առաջին.** Սահմանափակումների իրավաչափության հարցում նախևառաջ քննարկման ենթակա է այն հանգամանքը, թե արդյոք ընտրական իրավունքի գործող սահմանափակումն այնպիսի սահմանափակում է, որը գերակշռորեն անհրաժեշտ է և թելադրված է անձին ազատությունից զրկելու հանգամանքով:

Ինչպես արդեն նշել ենք, 2015 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում դատապարտյալների ընտրելու իրավունքի սահմանափակումը տարած-

վում է ոչ միայն ազատագրկման դատապարտված, այլև պատժի այլ տեսակների դատապարտված անձանց նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան իրավանորմների վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ դիտավորությանբ կատարված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձանց նկատմամբ ազատագրկումից բացի պատժի այլ տեսակ նշանակելու իրավական հնարավորության աստիճանը շատ ցածր է, այնուամենայնիվ, միջազգայնորեն ընդունված և իրենց ամրագրումը ստացած չափանիշների համատեքստում պարզ է դառնում, որ դատապարտյալների ընտրական իրավունքի սահմանափակումները համաչափ են համարվում առավելապես միայն ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվելու դեպքում: Պատժի այլ տեսակների նշանակման դեպքում նման սահմանափակման կիրառումը, ելնելով այն հանգամանքից, որ պատժի այլ տեսակի նշանակումը վկայում է անձի արարքի առավել ցածր վտանգավորության մասին և հանգեցնում անձի հիմնարար իրավունքների անհամեմատ առավել ցածր սահմանափակման, կարծում ենք, այս համատեքստում ոչ իրավաչափ է: Ուստի կարծում ենք, որ առավել իրավաչափ և նպատակահարմար կլիներ Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթներում ընտրական իրավունքի սահմանափակումը տարածել միայն ազատագրկման դատապարտված համապատասխան անձանց նկատմամբ:

**Երկրորդ.** քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյոք դատապարտյալների ընտրելու իրավունքի սահմանափակումները ողջամիտ և օբյեկտիվ են, իսկ իրավունքից զրկելու ժամկետը՝ համաչափ հանցանքին և դրա համար նշանակված պատժին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումն անձի կողմից վկայում է հասարակական կարգի նկատմամբ վերջինիս առավել բարձր անհանդուրժողականության և հասարակական համակեցության կանոնների նկատմամբ առավել բարձր անհարգալից վերաբերմունքի մասին, ընտրական իրավունքի սահմանափակումը միայն ծանր կամ առանձ-

նապես ծանր հանցագործություն կատարած անձանց համար կիրառելի համարելն ինքնին կարող է այս համատեքստում համաչափ համարվել: Սակայն գործող իրավակարգավորումները խնդրահարույց են սահմանափակման օբյեկտիվության տեսանկյունից: Այս հանգամանքը հիմնավորվում է նախ արդեն հիշատակված՝ սահմանափակումը ոչ միայն ազատագրված, այլև պատժի այլ տեսակների դատապարտված անձանց նկատմամբ կիրառելու հանգամանքով: Երկրորդ՝ նման սահմանափակման հիմքում դրվում է միայն անձի կողմից կատարված արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի չափը, դրա ծանրության աստիճանը՝ առանց հաշվի առնելու կոնկրետ անձի նկատմամբ նշանակված պատժի չափը, կատարված արարքի բնույթը, դրա արդյունքում ենթադրվող օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ որոշ ժամանակով անձին չեզոքացնելու հասարակության կառավարմանը մասնակցելու հնարավորությունից:

**Երրորդ.** ինչպես արդեն հիշատակել ենք, ընտրելու իրավունքի սահմանափակումներ նախատեսելիս՝ պետությունները պետք է առաջնահերթ համարեն նման սահմանափակումների անհրաժեշտության հիմնավորումը և ձեռնարկեն միայն այնպիսի միջոցներ, որոնք հետապնդվող իրավաչափ նպատակի հետ ողջամիտ հավասարակշռություն են ապահովում՝ երաշխավորելու համար կոնվենցիայով երաշխավորված իրավունքների շարունակական և արդյունավետ պաշտպանությունը, և որևէ դեպքում չպետք է կիրառվի սահմանափակման այնպիսի միջոց, որը կարող է խաթարել կոնվենցիայիով երաշխավորված իրավունքի բուն էությունը: Ուստի քննարկման ենթակա է գործող իրավակարգավորումների արդյունքում հետապնդվող նպատակի հետ ողջամիտ հավասարակշռության ապահովման հարցը:

Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ դատապարտյալների ընտրական իրավունքի սահմանափակման նպատակն ինքնին իրավաչափ է, և, ընդհանուր առմամբ, իրավաչափ է նաև նպատակին հասնելու համար գործադրվող միջոցը: Այնուամենայնիվ, դատապարտյալների ընտրական իրավունքին միջամտությունը որոշակի դեպքերում

չափավոր համարվել և իրավաչափ նպատակի հետ ողջամիտ հավասարակշռություն ապահովել չի կարող, քանի որ սահմանափակման կիրառման հիմքում դրված է այնպիսի ընդհանուր չափանիշ՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված լինելը և պատիժը կրելը, որը թույլ չի տալիս ընտրական իրավունքի սահմանափակումը յուրաքանչյուր դեպքում կապել կոնկրետ անձի, կոնկրետ արարքի, նրա նկատմամբ կիրառված կոնկրետ պատժատեսակի ու պատժաչափի հետ: Այլ կերպ ասած՝ գործող իրավակարգավորումների պայմաններում ՄԻԵԴ դիրքորոշումների համատեքստում այդ սահմանափակման, վարքագծի, հանցանք կատարած անձի միջև տեսանելի և բավարար կապ առկա չէ, և սահմանափակումը, ըստ էության, կիրառվում է ինքնաբերաբար՝ անտեսելով համամասնության պահանջները: Նման իրավիճակը կարող է հանգեցնել հիմնարար իրավունքի էության խաթարման՝ հատկապես այն դեպքերում, երբ այն հանցագործությունը, որի համար դատապարտվել է անձը, իր էությամբ առկա չունի ընտրական իրավունքի սկզբունքների և հասարակության կառավարման անձի մասնակցության հետ:

**Չորրորդ.** քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյոք սահմանափակման ժամանակահատվածն ուղիղ համեմատական է պատժին և հանցագործությանը, և թե արդյոք առկա է տեսանելի և բավարար կապ պատժամիջոցի, վարքագծի և դատապարտված անձի իրավիճակի միջև:

ՀՀ-ում գործող ուսումնասիրվող իրավակարգավորումները խնդրահարույց են նաև այս չափանիշի տեսանկյունից, քանի որ, ինչպես վերն արդեն նշել ենք, գործող իրավակարգավորումների պայմաններում ընտրելու իրավունքից զրկելը կատարված կոնկրետ հանցագործության, անձի նկատմամբ նշանակված պատժի, պատժի կրման ընթացքում անձի վարքագծի հետ կապի մեջ չեն դրվում, և սահմանափակման միջոցի կիրառման հիմքում դրվում է ոչ թե անձի կատարած արարքի բնույթը, այն օբյեկտները, որոնց դեմ ուղղված է եղել անձի կողմից կատարված հանցագործությունը և այլ էական հանգամանքներ, այլ պարզապես ՀՀ քրեական օրենսգրքով որդեգրված՝ արարքնե-

րի վտանգավորության որոշման թվաբանական մոտեցումը: Նման իրավակարգավորումը ՄԻԵԴ-ի դիրքորոշումների համատեքստում կարող է համարվել սահմանափակման ինքնաբերաբար, ինքնաշխատ կիրառում, ինչը իրավաչափ համարվել և ողջամիտ հավասարակշռություն ապահովել չի կարող:

**Հինգերորդ.** գործով իրավակարգավորումների իրավաչափությունը հարկ է քննարկել նաև ներպետական օրենսդրությամբ սահմանափակված իրավունքի վաղաժամկետ վերականգնման իրավական հնարավորության առկայության համատեքստում:

Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով ամրագրված կարգավորումները հնարավորություն չեն ընձեռում պատժի կրման ընթացքում, ելնելով դատապարտյալի վարքագծից և/կամ այլ էական հանգամանքներից, որպես խրախուսանքի միջոց վերականգնելու վերջինիս ընտրելու իրավունքը: Մինչդեռ ներպետական օրենսդրությունը, դատապարտյալների վերասոցիալականացումն ապահովելու նպատակով, ամրագրում է հասարակությանը վերջիններիս քայլ առ քայլ վերաինտեգրումն ապահովելու նպատակով մի շարք այլ իրավական միջոցներ: Դեռ ավելին՝ ՄԻԵԴ-ի հիշատակված դիրքորոշումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ դատարանը գործող սահմանափակումների իրավաչափության գնահատման հարցում էական է համարել իրավունքի վերականգնման իրավական հնարավորության առկայությունը, ինչը հիմք է հանդիսացել, ի թիվս այլ հանգամանքների, մի դեպքում՝ սահմանափակման իրավաչափության, իսկ մյուս դեպքում՝ սահմանափակման ոչ իրավաչափության փաստման համար: Հետևաբար, հանցագործության համար դատապարտված անձանց ընտրական իրավունքի սահմանափակման ներկայիս կարգավորումները ոչ իրավաչափ են նաև ընտրելու իրավունքի վաղաժամկետ վերականգնումը բացառելու տեսանկյունից:

Այսպիսով՝ դատապարտյալներին ընտրական իրավունքից զրկումը, չնայած այն հանգամանքին, որ կարող է որոշակի դեպքերում լինել հիմնավորված և հետապնդել ինքնին իրավաչափ նպատակ, կարող է նաև ազատագրման և դատապարտյալների վերասոցիալականացման համակարգում ունենալ հակառակ ազդեցություն և անհամատեղելի լինել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով և ՄԱԿ-ի՝ Նեյտոն Մանդելայի կանոններով ամրագրված՝ պատժի կարևորագույն երկու նպատակներին՝ հանցանք կատարած անձանց վերասոցիալականացմանը և կրկնահանցագործության բացառմանը:

ՄԱԿ-ի վերանայված՝ Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն կանոնները սահմանում են, որ ազատագրված նպատակները կարող են իրագործված համարվել միայն այն դեպքում, երբ այնքանով, որքանով հնարավոր է, ապահովվում է դատապարտյալների վերաինտեգրացումը հասարակության մեջ, որպեսզի ապահովվի նրանց հետագա իրավահպատակ վարքագիծը<sup>14</sup>: Այս կանոնները նաև ամրագրում են, որ բանտային ռեժիմը պարտավոր է նվազեցնել բանտային կյանքի և ազատության մեջ կյանքի միջև տարբերությունը՝ նպատակ ունենալով ավելացնել ազատագրված դատապարտվածների պատասխանատվությունը, և որ ազատագրված դատապարտված անձի նկատմամբ վերաբերմունքի հիմքում պետք է լինի ոչ թե հասարակությունից նրանց անջատումը, բացառումը, այլ հասարակությանը նրանց առավելագույն կերպով մոտեցնելը<sup>15</sup>:

Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումները, չնայած վերջին տարիներին ենթարկվել են էական փոփոխությունների և մի շարք չափանիշներով համապատասխանեցվել մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար փաստաթղթերի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական

<sup>14</sup> Տե՛ս UN General Assembly, United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules): resolution / adopted by the General Assembly, 8 January 2016, A/RES/70/175, հղումը՝ <https://www.penalreform.org/resource/standard-minimumrules-treatment-prisoners-smr>, 27.02.2022թ. դրությամբ:

<sup>15</sup> Տե՛ս UN General Assembly, United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), resolution / adopted by the General Assembly, 8 January 2016, A/RES/70/175, կանոններ 5 և 88,1, հղումը՝ <https://www.penalreform.org/resource/standard-minimumrules-treatment-prisoners-smr>, 27.02.2022թ. դրությամբ:

դիրքորոշումներին, այնուամենայնիվ, մի խումբ ասպեկտներով դեռևս խիստ խնդրահարույց և ոչ իրավաչափ են, ուստի կարծում ենք, որ գործող կարգավորումների վերանայումը սույն աշխատության մեջ կանխորոշված սկզբունքների և վերհանված խնդիրների համատեքստում, ժամանակի պահանջներով թելադրված և օբյեկտիվ հիմք ունեցող անհրաժեշտություն է:

*Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Սահմանադրության 48-րդ և Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածներով ամրագրված՝ դիտարկության մեջ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված և պարիժը կրող անձանց ընտրելու իրավունքի անվերապահ սահմանափակման վերաբերյալ իրավակարգավորումները միջազգայնորեն ընդունված չափանիշների արդյունքում խնդրահարույց են՝ սահմանափակումը ոչ միայն ազատագրված, այլև այլ պարիժներ փաստացի կրող անձանց նկատմամբ փարածելու, այն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված բոլոր անձանց նկատմամբ փարածելու (առանց հաշվի առնելու կատարված հանցանքի բնույթը, նշանակված պարիժը, անձի վարքագիծը), դատապարտյալի ընտրական իրավունքի վաղաժամկետ վերականգնման հնարավորության բացակայության տեսանյունից: Ուստի այս համարեքստում առաջարկում ենք.*

**1. Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով ընտրելու իրավունքի սահմանափակում նախատեսել միայն ազատագրված**

**դատապարտված և պարիժը կրող անձանց նկատմամբ.**

**2. Հանցագործության համար դատապարտված անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման կիրառման հիմք դիտել անձի կողմից կատարված կոնկրետ արարքի բնույթը՝ սահմանափակումը կիրառելով ոչ թե ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարած բոլոր անձանց նկատմամբ անվերապահորեն, այլ միայն այնպիսի անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այնպիսի արարքների համար, որոնց կատարումն ինքնին, արարքների բնույթից ելնելով, խոսում է ընտրություններին անձի մասնակցությունը սահմանափակելու՝ ողջամտորեն ենթադրվող և օբյեկտիվ բնույթ ունեցող անհրաժեշտության մասին: Նման հանցագործություններ կարող են լինել ՀՀ քրեական օրենսգրքի 28-րդ գլխով նախատեսված՝ Սահմանադրական կարգի հիմունքների և պետական անվտանգության դեմ ուղղված, 29-րդ գլխով նախատեսված՝ պետական ծառայության դեմ ուղղված, 19-րդ գլխով նախատեսված՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունները.**

**3. ՀՀ ընտրական օրենսդրությամբ նախատեսել պարտի կրման ընթացքում դատապարտյալի ընտրական իրավունքի վերականգնման իրավական հնարավորություն՝ ելնելով վերջինիս վարքագծից և նրա վերաօգիստականացման ապահովման նպատակներից ու անհրաժեշտությունից:**



**ԷԴԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ**

Քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը և պետությունը, որը տնօրինում է ամենից որակով տեղեկյալին, մեծ ծավալով և արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար: Տեղեկացված լինելը մեծ կարևորություն ու նշանակություն ունի մարդու կյանքում<sup>1</sup>: Հենց այս կարևորությամբ է պայմանավորված մարդու իրավունքների համակարգում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի մեծ նշանակությունը:

Տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի էության բացահայտման ճանապարհին անհրաժեշտ է ներկայացնել մարդու հիմնական իրավունքների համակարգում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ունեցած տեղն ու դերը: Վերջինիս բացահայտման համար տեսական մոտեցումներում արտահայտված դիրքորոշումներից զատ կանդրադառնանք նաև ՀՀ Սահմանադրության որդեգրած մոտեցմանը:

Տեսական մոտեցումներում<sup>2</sup> տեղեկատվության ազատության հիմնական մեկնաբանումը համընդհանուր է. այն հանդիսանում է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու մարդու իրավունքը, որը սերտորեն կապված, հաճախ նաև ներառված է արտահայտվելու ազատության մեջ: Սույն հետազոտությամբ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել տեղեկատվության ազատության և արտահայտվելու ազատության հարաբերակցությունը,

որը հնարավորություն կտա բացահայտել տեղեկատվության ազատության իրավունքի տեղը, դերն ու նշանակությունը:

Ինչպես նշում է Պ. Հալբերգը, արտահայտվելու ազատությունն ու տեղեկատվության ազատությունը կարող են դիտվել որպես մետադադրամի երկու կողմեր, որոնք այնքան են փոխկապակցված, որ մեկը (տեղեկատվության ազատությունը) մյուսի (արտահայտվելու ազատության) համարժեքն է<sup>3</sup>, իսկ Թ. Մրզանըզը, բնութագրելով արտահայտվելու ազատության ու տեղեկատվության ազատության հարաբերակցությունը, նշում է, որ այն հարակից ու բարդ է, տրամաբանական ու պարադոքսալ: Տեղեկատվությունը արտահայտվելու հիմքն է և կարող է դիտվել որպես արտահայտման նախադրյալ: Արտահայտվելու ազատության առավել տարածված հիմնավորումներում տեղեկատվության ազատությունը ներառված է արտահայտվելու ազատության մեջ<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, տեղեկատվության ազատության իրավունքը թեև հստակորեն չի ներկայացվում որպես առանձին իրավունք, այնուամենայնիվ առանձնահատուկ ընդգծվում է դրա ու արտահայտվելու ազատության սերտ հարաբերակցությունը:

Քննարկման առարկայի վերաբերյալ նորմատիվային մարդակում կրած բնութագրին անդրադառնալիս կներկայացնենք ՀՀ Սահմանադրությունը, որի «Կարծիքի արտահայտման ազատությունը» վերտառությամբ 42-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *Յուրաքանչյուր որ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրա-*

<sup>1</sup> «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 307:

<sup>2</sup> Օրինակ Ս.Ա. Ավակյանի, Ի.Ա. Լեդյախի, Վ.Մ. Բոյերի, Զ.Աբրեմենի, Ռ. Սաբանի, Մ. Բովենսի, Գ. Հարությունյանի և այլնի ներկայացված մոտեցումները:

<sup>3</sup> “Freedom of speech and information in global perspective”, Pekka Hallberg, Janne Virkkunen, Rule of Law Finland–Rolfi, Springer Nature, Helsinki, Finland, 2017, էջեր՝ 18, 23: <https://bit.ly/3hkPu4D>.

<sup>4</sup> “The United Nations and Freedom of Expression and Information”, Tarlach McGonagle, Yvonne Donders, Cambridge University Press, Cambridge CB2 8BS, United Kingdom, 2015, էջ 29: <https://bit.ly/3HqzxoA>.

վունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պեղական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պեղական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Ինչպես նկատում ենք՝ սահմանադրի որդեգրած մոտեցումը տարբերվում է թեորիական տեսակետից, քանի որ առաջինս տեղեկատվության ազատությունը ներառում է կարծիքի արտահայտման ազատության մեջ, իսկ երկրորդը՝ արտահայտվելու ազատության մեջ: Առաջին հայացքից նշվածները խիստ տարբերություններ չունեն և կարող են ընկալվել որպես նույնական, սակայն արժանի ենք համարում ավելի մանրամասն անդրադառնալ դրանց տարբերություններին՝ ընդհանրապես, և տեղեկատվության ազատության իրավունքի ունեցած տեղի ու դերի բացահայտմանը՝ մասնավորապես:

ՀՀ մայր օրենքի օրենսդրի կողմից քննարկվող նորմին տրված ձևակերպումից ստացվում է, որ կարծիքի արտահայտման ազատությունն իր մեջ միաժամանակ ներառում է *սեփական կարծիք ունենալու ազատությունը, տեղեկատվության ազատությունը և գաղափարների ազատությունը*: Կարևոր ենք համարում նախ անդրադառնալ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության վերոթվարկյալ բաղադրիչներին, ինչպես նաև դրանց ու տեղեկատվության ազատության հարաբերակցությանը: Վերջինիս հնարավորություն կտա տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը դիտարկել նաև որպես մարդու առանձին իրավունք:

Այսպես՝ սեփական կարծիք ունենալու ազատությունը կամ ուղղակի կարծիքի ազատությունը (freedom of opinion) մարդու իրավունքների ոլորտում անկյունքարային հանդիսացող մի շարք միջազգային պայմանագրերով ճանաչված է որպես առանձին իրավունք, որը, նախ և առաջ, զատվում է արտահայտվելու ազատությունից (freedom of expression): Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (այսուհետ նաև՝ Հռչակագիր)

19-րդ հոդվածի ձևակերպումները՝ *Յուրաքանչյուր ոք ունի «համոզմունքի ազատության իրավունք», «արտահայտելու ազատության իրավունք», «այս իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պեղական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»* ներկայացվում են առանձին իրավունքներ: Առաջինը հանդես է գալիս որպես կարծիքի ազատության իրավունք (freedom of opinion), երկրորդը՝ արտահայտման ազատության իրավունք (freedom of expression), իսկ երրորդը՝ մաս-մաս ներառվում է առաջինի և երկրորդի մեջ. համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը՝ որպես կարծիքի ազատության իրավունքի մաս, իսկ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ որպես արտահայտելու ազատության իրավունքի մաս:

Այս առանձնացումն ավելի հստակ է արտահայտված ՄԱԿ-ի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (1966թ.) (այսուհետ նաև՝ ՔՔԻՄ դաշնագիր) 19-րդ հոդվածում, որի առաջին կետը երաշխավորում է կարծիքի ազատությունը (freedom of opinion), համաձայն որի՝ *Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին*: Ինչ վերաբերում է արտահայտվելու ազատությանը, ապա այն ներկայացված է նույն հոդվածի առանձին՝ երկրորդ կետում՝ *Յուրաքանչյուր մարդ ունի արտահայտվելու ազատություն. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պեղական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը* (freedom of expression):

Կարծիքի ազատությունը և արտահայտվելու ազատությունը հանդիսանում են անհրաժեշտ պայմաններ անձի լիարժեք զարգացման համար: Դրանք էական նշանակություն ունեն ցանկացած հասարակության համար<sup>5</sup>: ՄԱԿ-ի՝

<sup>5</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի որոշումներ. Benhadj v. Algeria, No. 1173/2003, 20.07.2007թ., Tae-Hoon Park v. Republic of Korea, No. 628/1995, 05.07.1995թ.:

Մարդու իրավունքների խորհուրդը, ներկայացնելով ՔՔԻՄ դաշնագրի 19-րդ հոդվածի պաշտոնական մեկնաբանություն<sup>6</sup> (այսուհետ նաև՝ Մեկնաբանություն), հստակ առանձնացնում է կարծիքի ազատությունն ու արտահայտվելու ազատությունը՝ միաժամանակ ընդգծելով դրանց սերտ կապվածությունը:

ՔՔԻՄ դաշնագրի 19-րդ հոդվածի առաջին մասը պահանջում է առանց միջամտության պաշտպանել կարծիք ունենալու իրավունքը (կարծիքի ազատություն / freedom of opinion): Այս իրավունքը, ըստ դաշնագրի, որևէ կերպ սահմանափակման ենթակա չէ: Կարծիքի ազատությունը ներառում է ցանկացած ժամանակ կարծիքը փոխելու ազատությունը: Կարծիքի ազատությունն իր բնույթով տարբերվում է արտահայտվելու ազատությունից: Առաջինը մասնավոր հարց է, որը գտնվում է մտավոր ոլորտում, իսկ երկրորդը՝ հանրային ոլորտում դրսևորվող հարց է: Կարծիքի ազատությունը նաև խիստ կապված է մտքի ազատության հետ, որոնց միջև առկա տարբերությունը ոչ միշտ է ակնհայտ<sup>7</sup>: Մեկնաբաններից մեկն ասում է, որ «մտքի» և «կարծիքի» միջև հստակ սահմաններ չկան. երկուսն էլ ներքին են: «Միտքը» գործընթաց է, մինչդեռ «կարծիք»-ը գործընթացի արդյունք է: «Միտքը» կարող է ավելի մոտ լինել կրոնին կամ այլ համոզմունքներին, «կարծիքները»՝ քաղաքական համոզմունքներին<sup>8</sup>:

ՔՔԻՄ դաշնագրի 19-րդ հոդվածի երկրորդ մասը պահանջում է երաշխավորել արտահայտվելու ազատությունը (freedom of expression), որը ներառում է անկախ սահմաններից ցանկացած տեսակի տեղեկության փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Արտահայտվելու ազատությունն ապահովում է կարծիքների փոխանակման ու զարգացման գործընթացը: Դաշնագրի 19-րդ հոդվածի երկրորդ մասն ապահովում է նաև պետական մարմին-

ներից տեղեկատվության հասանելիության իրավունքը<sup>9</sup>:

Կարևոր ենք համարում անդրադառնալ Եվրոպական կոնվենցիայի մոտեցմանը, որի 10-րդ հոդվածը նշում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը»: Ստացվում է, որ Եվրոպական կոնվենցիան թեկուզև կարծիքի ազատությունը (սեփական կարծիք ունենալու ազատությունը) ներկայացնում է որպես արտահայտվելու ազատության մաս, այնուամենայնիվ, ներկայացնում և ճանաչում է որպես առանձին իրավունք: Ա.Վ. Պալամարչուկը, մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, նշում է, որ այդ հոդվածով փորձ է արվում տարբերակել մարդու կարծիքի ազատ արտահայտման ազատությունը տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատությունից<sup>10</sup>: Հետաքրքիր է, որ կարծիքի ու արտահայտվելու ազատությունները 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունում ներկայացված էին որպես առանձին իրավունքներ (24-րդ հոդված):

Վերոգրյալը ցույց է տալիս, որ կարծիքի ազատությունը (սեփական կարծիք ունենալու իրավունք) ճանաչված է որպես մարդու առանձին ու կարևոր իրավունք: Թեև որոշ դեպքերում այն առանձնացվում է արտահայտվելու ազատությունից, որոշ դեպքում՝ ներառվում, այնուամենայնիվ փաստ է, որ կարծիքի ազատությունը անձի ինքնությունն ու մեծ արժեք ունեցող իրավունքն է, որը սերտ կապված է արտահայտվելու ազատության հետ:

Հաջորդիվ, ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության մյուս բաղադրիչը՝ տեղեկատվության ազատությանը, միանշանակ, ճանաչված է մարդու իրավունքները երաշխավորող միջազգա-

<sup>6</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 34 «Ընդհանուր մեկնաբանություն», Հոդված 19, «Կարծիքի և արտահայտվելու ազատություն», Ժնև, 2011, կետ 11, 12, 18: <https://bit.ly/3KmD0Xg>.

<sup>7</sup> The Right to Freedom of Opinion, Expression and Information, The Judicial Application of Human Rights Law (National, Regional and International Jurisprudence), Jayawickrama, Nihal, University of Florida, 2017թ., էջ 12: <https://bit.ly/3fM97If>.

<sup>8</sup> Karl Josef Partsch, 'Freedom of Conscience and Expression, and Political Freedoms', in Louis Henkin (ed.), The International Bill of Rights (New York: Columbia University Press, 1983), 209, p 217.

<sup>9</sup> Մեկնաբանության 11-րդ, 12-րդ, 18-րդ կետեր:

<sup>10</sup> «Свобода информации и законность: теория и практика», А.В. Паламарчук, Монография, Генеральная прокуратура Российской Федерации, 2013, М., ст. 12: <https://bit.ly/3tyBo5a>.



յին պայմանագրերով՝ որպես տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք, որը հիմնականում ներառվում է արտահայտվելու ազատության մեջ: Հիրավի ցանկացած տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը ամբողջությամբ ներառվում է արտահայտվելու ազատության մեջ, սակայն ոչ ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության մեջ: Խնդիրն այստեղ արտահայտվելու ազատության և կարծիքի արտահայտման ազատության տարբերությունների միջև է: Եթե առաջինս ընդհանուր է և թույլ է տալիս ազատորեն փնտրել, ստանալ և տարածել ցանկացած տեսակի տեղեկություն, ապա երկրորդի դեպքում տեղեկության տեսակը սահմանափակված է: Կարծիքի արտահայտման ազատությունը ենթադրում է միայն կարծիք հանդիսացող տեղեկությունների (*որևէ բանի կամ որևէ մեկի գնահատականը՝ վերաբերմունքը ևն արտահայտող դատողություն, եզրակացություն*<sup>11</sup>) փնտրման, ստացման ու տարածման իրավունքը: Նման պարագայում կարծիք չհանդիսացող ցանկացած այլ տեղեկության արտահայտման ազատությունը վտանգվում է, որը, միանշանակ, չի բխում միջազգայնորեն ճանաչված մարդու հիմնական իրավունքների էությունից: Արդյունքում ստացվում է, որ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության «տեղեկատվության ազատության» բաղադրիչը չի տեղավորվում կարծիքի արտահայտման ազատության մեջ, քանի որ կարծիքի արտահայտման ազատության ներքո նեղացվում է նշված իրավունքի բուն էությունն ու խաթարվում դրա պաշտպանությունը:

Ինչ վերաբերվում է գաղափարների ազատությանը, ապա կարևոր ենք համարում արձանագրել Սահմանադրության ձևակերպված կարծիքի արտահայտման ազատության մեջ ներառվող երկու բաղադրիչների՝ տեղեկատվության ազատության և գաղափարների ա-

զատության տարանջատումը, որի հիմքում կմատնանշենք «կարծիքի արտահայտման ազատությունը ներառում է տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը» բնորոշման «տեղեկություն» և «գաղափար» հասկացությունների նշանակությունը: Գաղափարը իրականության մասին մարդու գիտակցության մեջ արտացոլող հասկացություն է, ինչպես նաև համոզմունք, հայեցակետ և կարծիք<sup>12</sup>, մինչդեռ տեղեկությունը հանդիսանում է լուրը, տվյալը, փաստը<sup>13</sup>: Նշվածները հստակ ուրվագծում են գաղափարի և տեղեկության տարբերությունները, ըստ որի էլ կարող եք փաստել, որ գաղափարի ազատությունն ամբողջությամբ կարող է ներառվել Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության մեջ, քանի որ գաղափարը կրում է նաև «կարծիք» իմաստը: Մինչդեռ տեղեկատվության ազատությունն ավելի լայն է, ընգրկում է գաղափար-կարծիք չհանդիսացող ցանկացած տեղեկության (լուր, տվյալ, փաստ) փնտրման, ստացման ու տարածման իրավունքը:

Ի հավելումն ու հաստատումն վերոնշյալի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ), լրագրողների իրավունքների լուսի ներքո մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի «տեղեկություն» և «գաղափար» հասկացությունների տարբերությունները, նշում է՝ տեղեկություն տարածելու լրագրողի ազատությունը պաշտպանում է համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ տեղեկություն տարածելու լրագրողի իրավունքը, եթե լրագրողը գործում է բարեխղճորեն, ճշգրիտ, փաստացի հիմքերի վրա ու տրամադրում է «վստահելի ու ճշգրիտ» տեղեկություն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա<sup>14</sup>: Ինչ վերաբերվում է կարծիք (գաղափար) հայտնելու լրագրողի ազատությանը՝ Եվրոպական դատարանը այն, ի

<sup>11</sup> «Արդի հայերենի բացատրական բառարան», Է.Բ. Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Հատոր 1, Երևան, 1976, էջ 705:

<sup>12</sup> «Արդի հայերենի բացատրական բառարան», Է.Բ. Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Հատոր 1, Երևան, 1976, էջ 215:

<sup>13</sup> «Արդի հայերենի բացատրական բառարան», Է.Բ. Աղայան: «Հայաստան» Հրատարակչություն, Հատոր 2, Երևան, 1976, էջ 1432:

<sup>14</sup> Եվրոպական դատարանի վճիռ. Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 5433/02, 14.12.2006թ.:

տարբերություն տեղեկության (լուր, տվյալ, փաստ) տարածման, համարում է գնահատողական դատողության, որի ճշմարտացիությունը ենթակա չէ ապացուցման<sup>15</sup>:

Ամփոփելով Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության բաղադրիչների ուսումնասիրությունը, այն ներկայացնելով հետազոտության բուն նպատակի լույսի ներքո՝ անհրաժեշտ է ընդգծել, որ եթե կարծիքի ազատությունն ու գաղափարների ազատությունը կարող են հանդիսանալ ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության մաս, ապա տեղեկատվության ազատությունը չի կարող, քանի որ այն (նաև) կարծիք չհանդիսացող տեղեկությունների փնտրման, ստացման ու տարածման իրավունքն է:

Սահմանադիրը, կարծես, միաձուլել է արտահայտվելու ազատությունն ու կարծիքի ազատությունը՝ արդյունքում ստանալով միաձուլված նոր իրավունք՝ կարծիքի արտահայտման ազատություն: Հետաքրքիր է, որ մարդու իրավունքների ոլորտում թե՛ միջազգային պայմանագրերի շրջանակում, թե՛ ներպետական իրավական ակտերի շրջանակում ճանաչված ու ընդունված չէ անձի կարծիքի արտահայտման ազատությունը որպես առանձին իրավունք: Նշվածները երաշխավորում ու ճանաչում են հենց արտահայտվելու ազատությունը, որի մեջ էլ ներառում են տեղեկատվության ազատությունը:

Ուսումնասիրելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հայերեն պաշտոնական տարբերակի 19-րդ հոդվածը՝ առաջին հայացքից կթվա, թե ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը համանման և ամբողջությամբ համապատասխան է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորագույն նշանակություն ունեցող այս միջազգային փաստաթղթին, քանի որ Հռչակագրի 19-րդ հոդվածը և տեղեկատվության ազատությունը ներառում է կարծիքի (հոդվածում՝ համոզմունք) ար-

տահայտման ազատության մեջ՝ նշելով. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է (...) իրազեկում որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»: Մինչդեռ, ուսումնասիրելով արդեն Հռչակագրի բնօրինակ տարբերակը՝ պարզվում է, որ Հռչակագրի հայերեն պաշտոնական թարգմանության և Հռչակագրի բնօրինակ տարբերակի միջև այս մասով անհամապատասխանություն կա: Մասնավորապես, ՄԱԿ-ի պաշտոնական կայքում<sup>16</sup> հրապարակված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը սահմանում է՝ Everyone has the right to freedom of opinion and expression; this right includes freedom to seek, receive and impart information (թարգմանություն՝ Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի ազատության<sup>17</sup> և արտահայտվելու ազատության իրավունք, սա ներառում է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը): Ստացվում է, որ Հռչակագրի քննարկվող հոդվածի սխալ թարգմանություն արդյունքում տեղեկատվության ազատությունը ներառվել է կարծիքի (հոդվածում՝ համոզմունք) արտահայտման ազատության մեջ, մինչդեռ Հռչակագրի բնօրինակ տարբերակը տեղեկատվության ազատությունը ներառում է ոչ թե կարծիքի արտահայտման ազատության, այլ արտահայտվելու ազատության մեջ: Նման թերացումներն ու սխալները, գտնում ենք, մեծ ազդեցություն կարող են ունենալ քննարկվող իրավունքի բուն էության բացահայտման ու նշանակության վերհանման համար, քանի որ բացահայտորեն անհամապատասխանում են միջազգայնորեն ճանաչված բնորոշումներին:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ մարդու հիմնական իրավունքների համակարգում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ունեցած դերի ու տեղի վերաբերյալ տեսական մոտեցումներում, միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությունում առկա է տարբերակված մոտե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 129 2022

<sup>15</sup> Եվրոպական դատարանի վճիռներ. Կարմանն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 29372/02, 14.12.2006թ.: Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 23472/03, 21.07.2005թ.:

<sup>16</sup> <https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights>.

<sup>17</sup> Սույն գլխում արդեն իսկ ներկայացվել է պաշտոնական Մեկնաբանությամբ «կարծիքի ազատության»-ը տրված հասկացությունը:

ցումներ: Այն հիմնավորվեց տեղեկատվության ազատության և ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության բաղադրիչների հարաբերակցության, ինչպես նաև տեսական ու միջազգային գործնական մոտեցումների ներկայացմամբ: ՀՀ մայր իրավական ակտի տարբերակված մոտեցման շնորհիվ տեղեկատվության ազատությունը ներառվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ, որով անուղակիորեն նեղացվել ու նվազեցվել է նշված իրավունքի նշանակությունը: Վերջինովս էլ պայմանավորված՝ գտնում ենք, որ խիստ անհրաժեշտություն կա Սահմանադրության 42-րդ հոդվածի կրած ձևակերպումները փոփոխել և համահունչ դարձնել դրանով երաշխավորվող տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի իրական բնույթին՝ վերջինս կամ ներկայացնելով որպես մարդու առանձին իրավունք, կամ ներառել

միայն արտահայտվելու ազատության մեջ: Նշվածն ուղղակի բխում է մարդու իրավունքների պաշտպանության համար անկյունաքարային հանդիսացող միջազգային պայմանագրերից ու երաշխավորվող իրավունքի էությունից:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության մեջ ներառվել է կարծիքի ազատությունը (կարծիք ունենալու ազատությունը), որը, ըստ ՄԱԿ-ի պաշտոնական Մեկնաբանության, սահմանափակման ենթակա իրավունք չէ, մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ կարծիք ունենալու ազատությունը ներառված է սահմանափակվող իրավունքների շարքերում: Գտնում ենք, որ Սահմանադրությամբ կարծիք ունենալու ազատությունը սահմանափակող նորմերն անհիմն են և չեն բխում նշված իրավունքի էությունից:



**ՆՈՐԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ**

Իրավաբանական սահմանադրության ձևը՝ իրավական նյութի կազմակերպման եղանակն է: Սակայն կարևոր է տարբերակել, թե որ սահմանադրության վերաբերյալ է խոսքը, առարկայական- իրավաբանական սահմանադրություն կամ ֆորմալ իրավաբանական սահմանադրություն: Առաջինը ներառում է ոչ միայն սահմանադրական տեքստը: Դրա կազմության մեջ միշտ ներառվում են նաև այլ իրավական ակտեր, որոնք այս կամ այն ծավալով կարգավորում են սահմանադրական կարգավորման օբեկտում ներառվող հարաբերությունները: Նման ակտերի թվին կարող են դասվել սահմանադրական օրենքները (օրինակ՝ Իտալիայում Սիցիլիայի իրավական կարգավիճակի վերաբերյալ):

Ֆորմալ իրավաբանական սահմանադրությունը միայն սահմանադրական տեքստն է, որը պաշտոնապես հռչակվել է հիմնական օրենք (որոշ երկրներում մի քանի հիմնական օրենքներ): Եթե այս դիրքորոշումներից դիտարկվի, օրինակ, ֆրանսիական Սահմանադրությունն, ապա իրավաբանական ֆորմալ սահմանադրությունը 1958թ. Սահմանադրության տեքստն է (հատկապես այս տեքստն է անվանվել սահմանադրություն և ընդունվել՝ ըստ սահմանադրության ընդունման կանոնների), իսկ նյութական սահմանադրություն՝ դրան զուգահեռ գործող 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը և 1946թ. Սահմանադրության նախաբանը, որի վերաբերյալ առկա է հղումներ 1958թ. Սահմանադրության տեքստում: Միևնույն ժամանակ, իրավաբանական սահմանադրության բաժանումը նյութականի և ֆորմալի ոչ միշտ է հնարավոր: Եթե բաղադրիչ հատվածները պաշտոնապես հայտարարվել են սահմանադրության հատվածներ, ապա դրանք ֆորմալ իրավաբանական սահմանադրության հատվածներ են: Եթե դա բացակայում է, ապա բազմաթիվ դեպքերում խոսքը ոչ թե նյութական և ֆորմալ սահմանադրության, այլ հենց սահմանադրության և սահմա-

նադրական իրավունքի կազմության մեջ ներառված այլ ակտերի վերաբերյալ:

Ձևի տեսանկյուններից (երբեմն ասում են՝ կառուցվածքի տեսանկյուններից) տարբերակում են իրավաբանական ֆորմալ սահմանադրության երեք տեսակներ՝ կոնսոլիդացված, չկոնսոլիդացված և կոմբինացված: Առաջինն իրենից ներկայացնում է միասնական փաստաթուղթ, միասնական ակտ (այս փաստաթղթի կազմության մեջ մտնում են նաև սահմանադրության փոփոխությունները անկախ նրանից, ներառված են դրանք տեքստի մեջ, լրացնելով կամ փոփոխելով առանձին հոդվածներ կամ հավելվում են սահմանադրությանը, ինչպես դա միշտ առկա է ԱՄՆ և Հնդկաստանում): Այդպիսիք են, օրինակ, Չինաստանի 1982թ., Ուկրաինայի 1996թ., Շվեյցարիայի 1999թ. Սահմանադրությունները: Ինչպես ասվել է, Եվրոպական Միության կոնսոլիդացված Սահմանադրությունն ունի պայմանագրի (Լիսաբոնի) իրավաբանական ձև: Կոնսոլիդացված սահմանադրությունները մեծամասամբ գերակայում են աշխարհի պետությունների սահմանադրությունների շարքում: Նման սահմանադրությունները տրամադրում են առավել հստակ, համակարգված պատկերացումներ սահմանադրական կառուցվածքի հիմքերի, սահմանադրական կարգավորման օբյեկտի վերաբերյալ: Դրանք հարմար են կիրառության համար, ի տարբերություն սահմանադրությունների, որոնք տարանջատված են՝ ըստ տարբեր ակտերի: Կոնսոլիդացված սահմանադրությունների պահպանումը հեշտ է հսկել: Ժամանակակից սահմանադրության համար նպատակահարմար է կոնսոլիդացված կառուցվածքը, իսկ դրա լրացումները պետք է ներառվեն տեքստում: Այլ դեպքում սովորական քաղաքացու համար բարդ է համեմատել գործող և չեղարկված նորմերը, տարբեր հիմնական օրենքներ, որոնք հաճախ ընդունվել են անցյալում:

Չկոնսոլիդացված սահմանադրությունը կազմված է մի քանի հիմնական (կամ սահմա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 129 2022

նադրական) օրենքներից, որոնք ընդունվել են ըստ հիմնական օրենքների ընդունման գործընթացների և/կամ հռչակվել պետությունների սահմանադրությունների բաղադրիչ հատվածներ: Երկրներ, որտեղ գործում են չկոստիդացված սահմանադրություններ, հաճախակի քիչ են՝ Ավստրիա, Իսրայել, Կանադա, Շվեդիա և այլն: Օրինակ կարող է հանդիսանալ Շվեդիան, որի սահմանադրությունը բաղկացած է երեք օրենքներից՝ 1974թ. Կառավարման ձև, 1810թ. Թագի ժառանգման վերաբերյալ ակտ և 1949թ. Մամուլի ազատության վերաբերյալ ակտ (դրանք բոլորը փոփոխվել են, իսկ Թագի ժառանգման վերաբերյալ ակտի փոփոխությունները ունեցել են արմատական բնույթ և բացարձակ հակառակ արդյունք, քան 1810թ., քանի որ նոր փոփոխությունները հաստատեցին ժառանգորդների՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները): Հատկապես 1867թ. բազմաթիվ օրենքներ ներառվել են Կանադայի չկոնստիդացված սահմանադրության մեջ՝ երկու տասնյակից ավելին: Դրանց շարքում 1982թ. Հիմնական օրենքն՝ առաջինը ընդունված կանադական խորհրդարանի կողմից, այլ ոչ Լոնդոնյան Խորհրդարանում մետրոպոլի հրամանի ձևով: Առավել բարդ է Ավստրիայի չկոնստիդացված Սահմանադրությունը: Այն բաղկացած է ոչ միան սահմանադրական օրենքներից, այլ նաև սովորական օրենքներում ընդգրկված մի շարք սահմանադրական նորմաներից: Ըստ որոշ ավստրիական իրավաբանների հաշվարկների՝ այն ներառում է 500-ից ավելի տարբեր տարրեր<sup>1</sup>: Ճշմարիտ է, տվյալ դեպքում խոսքը ֆորմալ իրավաբանական, այլ ոչ նյութաիրավաբանական սահմանադրության վերաբերյալ է:

Չկոնստիդացված սահմանադրություններ գործում են նաև ներկայումս, սակայն նման մոտեցումը պատկանում է անցյալին: Նոր չկոնստիդացված սահմանադրություններ ծագում են նաև ներկայումս, որոնք սովորաբար կապված են հատուկ պայմանների հետ: Այդպիսին է, օրինակ, Չեխիայի 1992թ. Սահմանադրությունը, որը ստեղծվել է տոտալիտար սոցիա-

լիստական ռեժիմի փլուզման և Չեխոսլովակիայի՝ Չեխիայի և Սլովակիայի երկու պետությունների տրոհման պայմաններում: Այս Սահմանադրությունը բաղկացած է պաշտոնապես Սահմանադրություն կոչվող ակտից, Հիմնական ազատությունների և իրավունքների խարտիայից և մի քանի այլ սահմանադրական օրենքներից: Այս բոլոր ակտերը ընդունվում և փոփոխվում են միանման գործընթացին համապատասխանությամբ:

Չկոնստիդացված սահմանադրության ձևն իրեն ուսումնասիրողին, իսկ հատկապես՝ իր հետ ծանոթացող շարքային քաղաքացուն տրամադրում է անբավարար համակարգված պատկերացումներ երկրի հասարակական և պետական կառուցվածքի հիմքերի վերաբերյալ: Այն անհարմար է կիրառության համար, քան կոնստիդացվածը: Սահմանադրական գործընթացի ընթացքում (օրինակ՝ ըստ սահմանադրական կամ ոչ սահմանադրական հարցի ընդունման վերաբերյալ) անհրաժեշտ է ծախսել առավել շատ ժամանակ և ջանքեր տարբեր ակտերի նորմաների համեմատության և ապացույցների որոնման համար: Գործընթացը դառնում է բարդ և պահանջում մեծ ծախսեր (այդ թվում ֆինանսական):

Կոմբինացված սահմանադրությունն՝ առավել բարդ է կիրառության համար<sup>2</sup>: Այն բաղկացած է մի քանի (հաճախ բազմաթիվ) օրենքներից, որոնք պաշտոնապես հայտարարված չեն հիմնական օրենքներ և ընդունվում, և փոփոխվում են սովորական կարգով, ինչպես մյուս օրենքները: Սահմանադրականի որակով դրանց հաշվառում է միայն ուսմունքը, երբեմն՝ դատարանների, այլ պետական մարմինների գործնականը, չնայած նման ընդունումը չի հանդիսանում պաշտոնական: Նման սահմանադրության կազմում ներառվում են նաև, ինչպես ասվել է, բարձրագույն դատարանների նախադեպերը, սահմանադրական ավանդույթները և իրավական (ըստ իր ծագման գիտական) ուսմունք<sup>3</sup>: Ըստ այն դատողությունների, որոնք շարադրվել են վերևում, կոմբինացված սահմանադրություններն արդյունավետ չեն կիրա-

<sup>1</sup> Sեն Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. В.Е. Чиркин. М., 2014, с. 66-67.

<sup>2</sup> Sեն Хабриева Т.Я. Чиркин В.Е. Теория современной конституции. М., 2005, с. 108.

<sup>3</sup> Sեն Васильев А.А. Правовая доктрина как источник права: вопросы теории и истории м, 2009.

ռության համար և պահանջում են մեծ ջանքեր իրենց կիրառության դեպքում, հատկապես վիճելի դեպքերում: Բացի դրանից, հիմնական օրենքի հասկացության բացակայության հետևանքով սահմանադրական հսկողության հատուկ մարմինները կոմբինացված սահմանադրության գործման պայմաններում չեն ստեղծվում: Համարվում է, որ ներկայումս կոմբինացված սահմանադրություններ աշխարհում միայն երկուսն են՝ Մեծ Բրիտանիա և Նոր Զելանդիա: Ճշմարիտ է, վերջին երկրում XX դարի երկրորդ կեսում ընդունվել է Սահմանադրություն կոչվող օրենք, սակայն այն կարգավորում է սահմանադրության պարտադիր օբյեկտի միայն մի քանի հարցեր, գործում են կարևոր սահմանադրական սովորույթներ, նախադեպեր:

Սահմանադրության կոնսոլիդացվածի, չկոնսոլիդացվածի և կոմբինացվածի բաժանման հետ համընկնում է այլ դասակարգում, գրված և չգրված սահմանադրություններ: Չգրված սահմանադրություն համարվում է Մեծ Բրիտանիայի և Նոր Զելանդիայի սահմանադրությունները: Այս բաժանումը խիստ պայմանական է: Չգրված սահմանադրությունների կազմության մեջ (օրինակ, Մեծ Բրիտանիա) ընդգրկված են շատ կարևոր գրանցված ակտեր, օրենքներ (իսկ որոշ ամերիկյան հեղինակներ հաշվարկում են բրիտանական մոտ 350 օրենքներ, որոնք, ըստ վերջիններիս կարծիքի, ունեն սահմանադրական նշանակություն)<sup>4</sup>, դատարանների գրավոր որոշումները, որոնց հիմնական դրույթները վերածվել են նախադեպերի (ասինքն՝ նորմերի), բրիտանական գիտնականների աշխատություններում արտահայտված իրավական ուսմունքը: Ըստ էության չգրված նման սահմանադրություններն անվանվում են միայն բանավոր սահմանադրական սովորույթների համար, վերջիններիս պահպանությունը կամավոր է և չի ապահովվում դատական հարկադրությամբ (կամ երբ սկզբում անհրաժեշտ է ապացուցել որոշակի սովորության գոյությունը): Այն երկրներում, որտեղ գործում է գրաված սահմանադրություններ, ևս հնարավոր են բանավոր սահմանադրական սովորույթներ, սակայն դրանք կապված են պակաս կարևոր, երբեմն գործընթացային կամ տեխնիկական

հարցերի հետ, սակայն այն մարմինների կամ ոլորտների կարևորության, որտեղ կիրառվում են այդ ավանդույթները, դրանք ձեռք են բերում սահմանադրական նշանակություն:

Գոյություն ունի սահմանադրության, ըստ դրանց ձևերի տեսակյուններից, մի քանի այլ դասակարգումներ: Վերևում արդեն շարադրվել է ճկուն սահմանադրությունների վերաբերյալ, որոնք (կամ դրանց կազմության մեջ ընդգրկվող օրենքները) փոփոխվում են՝ ըստ սովորական օրենքներին բնորոշ գործընթացների: Բոլոր չգրված սահմանադրությունները ճկուն են: Դրանց կազմության մեջ ներառվող օրենքները փոփոխվում են սովորական կարգով, դատական նախադեպը կարող է փոփոխվել բարձրագույն դատարանների որոշմամբ, կարող է ձևավորվել սահմանադրական նոր ավանդույթ, գիտական աշխատանքներում կարող է ձևակերպվել մեծ հեղինակություն ձեռք բերած նոր սահմանադրական ուսմունք:

Ըստ գործողության ժամանակի՝ տարբերակում են ժամանակավոր և մշտական սահմանադրություններ: Ժամանակավոր սահմանադրությունները սովորաբար ընդունվում են երկրի զարգացման անցումային շրջանների պայմաններում: Դրանք ընդունվում են ժամանակավոր մարմնի կամ հռչակվում նախագահի կողմից, սահմանափակվում են պետության բարձրագույն մարմինների կառուցվածքի և լիազորությունների կարգավորմամբ, հաճախ վերնագրում ունի «ժամանակավոր» անվանումը, հաստատվում է դրա գործման ժամկետները, նշվում իրադարձությունները, երբ այն պետք է փոխարինվի (օրինակ՝ խորհրդարանի կամ հիմնադրական ժողովի ընտրություն, որոնք կընդունեն նոր սահմանադրությունը, քաղաքացիական կառավարման անցման շրջանի ավարտում և այլն): Ժամանակավոր սահմանադրություններ ընդունվել են ՀԱՀ 1994 թ., Իրաքում 2004թ: Բազմաթիվ ժամանակավոր սահմանադրություններ հռչակվել են տարբեր շրջաններում Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների նախագահների կողմից:

Մշտական սահմանադրություններն երբեմն վերնագրում ունեն «մշտական» անվանումը (օրինակ՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետու-

<sup>4</sup> Տե՛ս Elliot C. and Quinn F. English Legal System(8 th edn. L.Longman).2007. p 186-187:

թյան 1971թ. Մշտական սահմանադրությունը): Սովորաբար այս բառը կապված է նրա հետ, որ նախքան նման սահմանադրության ընդունումը գործել են մի քանի ժամանակավոր սահմանադրություններ<sup>5</sup>: Սակայն բոլոր ժամանակների և իրավիճակների համար մշտական սահմանադրություններ լինել չեն կարող: Ամենից երկար գործում է ԱՄՆ Սահմանադրությունը, սակայն նաև դա է ենթարկվել էական փոփոխությունների 1787թ. համեմատությամբ 27 փոփոխությունների ընդունման արդյունքում: Բացի դրանից, ԱՄՆ Գերագույն Դատարանի 200-ամյա մեկնաբանության արդյունքում, ինչպես ընդունում են ամերիկյան իրավաբանները, ԱՄՆ ձևավորվել է այլ, «կենդանի» սահմանադրություն:

Գոյություն ունեն սահմանադրության բազմաթիվ այլ դասակարգումներ, այդ թվում նաև ըստ ձևի: Այսպես՝ գրականության մեջ ըստ ընդունման կարգի, տարբերակում են պայմանագրային, շնորհված և հեղափոխական սահմանադրություններ, այլ դիրքորոշումից՝ օրիգինալ և փոխառնված, ֆորմալ նյութական, գաղափարական իմաստներով և այլ սահմանադրություններ:<sup>6</sup>

Ժամանակակից սահմանադրության առավել նպասակահարմար ձև, ըստ մեր տեսանկյան, դա կոնսոլիդացվածն, գրառվածը, մշտականը (ինչը չի նշանակում, որ այն հարատև է), կայուն, հարաբերական կոշտ և համեմատական ճկուն է: Դրա որոշ սկզբունքային դրույթներ (օրինակ, կառավարման հանրապետական ձև, բազմակուսակցություն, տեղական ինքնակառավարում, գաղափարախոսական պլյուրալիզմ), կարող են հոչակվել անփոփոխ, սակայն նման դրույթերը պետք է վերաբերվեն ոչ թե գլուխների և հոդվածների նորմերին, այլ ունենան բովանդակային բնութագրություն: Դրանք չպետք է խոչընդոտեն խմբագրական և ոճային ուղղումներին: Սահմանադրության այլ կարևոր դրույթներ կարող են փոփոխվել, սակայն միայն խորհրդարանի մեծամասնությամբ և համապետական հանրաքվեում հաստատմամբ: Սահմանադրական դրույթների երրորդ խումբը կարող է փոփոխվել խորհրդարանի կողմից (մեծամասնությամբ) առանց հանրաքվեի, չորրորդը՝ խորհրդարանի կողմից պարզեցված կարգով:



<sup>5</sup> Երբեմն սահմանադրություններն ունեն նաև այլ անվանումներ, քաղաքական սահմանադրություն, հիմնական օրենք, սահմանադրական օրենք: Վերջին անվանումը կիրառվում է, եթե սահմանադրությունը բաղկացած է մի քանի ակտերից: «Քաղաքական» սահմանումը կոչված է սահմանազատել սահմանադրությունը կանոնակարգից, քանի որ մի քանի լեզուներում սահմանադրությունը և կանոնակարգը նշվում են միևնույն բառով (constitution): «Հիմնական օրենք» բառակապակցությունը կիրառվում է տարբեր նշանակություններով. որպես հիմնական օրենքներից մեկը (Իսրայել), որպես սահմանադրությանը համարժեք ակտ (1992թ. Սաուդյան Արաբիայի Հիմնական նիզհմ), որպես ակտ, որը փոխարինում է սահմանադրությանը մինչև որոշակի շրջան, սակայն դեռ սահմանադրություն չի: Այսպես է մեկնաբանվել ԳԳՀ Հիմնական օրենքը, որը ընդունվել է երկրի արևմուտքում 1949թ. Գերմանիայի բաժանման շրջանում: Ենթադրվում էր, որ սահմանադրություն բառիս բուն իմաստով կընդունվի, երբ Գերմանիան կվերամիավորվի: Սակայն Գերմանիայի միավորումից հետո ընդունվեց, որ Հիմնական օրենքը հասապատասխանում է անհրաժեշտ պահանջներին, այն փոխարինելու անհրաժեշտություն չկա, իսկ համապատասխան փոփոխությունները պարբերաբար իրականացվում են:

<sup>6</sup> Տե՛ս Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. М., 2014, с. 67-68:

ՀԱՅԿ ՇԱՀՐԱՉՅԱԼ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

## ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից իրավագետները հսկայական աշխատանք կատարեցին այնպիսի ոչ միանշանակ երևույթի ուսումնասիրության գծով, ինչպիսին է սուբյեկտիվ իրավունքը<sup>1</sup>: Եվ տվյալ հարցի հետազոտման ընթացքում մշակված տարատեսակ հայացքները, դիրքորոշումները, հայեցակարգերը ծառայում են որպես այն նյութը, տեսական հիմքը, որը հնարավորություն է տալիս ձևավորել ժամանակակից քննադատական պատկերացումներ սուբյեկտիվ իրավունքի մասին: «Սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի իմաստավորման փորձը՝ հաշվի առնելով ոչ միայն խորհրդային, այլև նախորդ ժամանակաշրջանի իրավագետների աշխատությունները, կարծում ենք, միայն կհարստացնի այդչափ բարդ կազմակերպված երևույթի ընկալումը, ինչպիսին է իրավունքը սուբյեկտիվ իմաստով:

Այսպիսով՝ հարկավոր է եզրակացնել, որ խորհրդային իրավական միտքը դատարկ տեղում չէր կառուցում սուբյեկտիվ իրավունքի իր ընկալումը: Սակայն կարելի է նաև նշել, որ XIX դարի իրավագիտության մեջ գոյություն ունեցած ուսմունքների ողջ բազմազանությունից ոչ բոլորն են գտել իրենց շարունակությունը: Որպես հիմք վերցնելով Հ. Քելզենի և նրա համախոհների կողմից մշակված սուբյեկտիվ իրավունքի նորմատիվիստական ընկալումը՝ մարքսիստական-լենինյան մեթոդաբանության վրա հիմնված իրավունքի տեսությունը մշակել է հիմնախնդրի իր սեփական տեսլականը:

XIX դարի ու խորհրդային ժամանակաշրջաններում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքի վերոնշյալ բնութագիրը պետք էր գլխավոր հարցերից մեկին պատասխանե-

լու համար՝ ինչպիսին է գիտության մեջ գերիշխող մոտեցումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի հարաբերակցության նկատմամբ և որտե՞ղ են տվյալ մոտեցման պատմական արմատները: Տվյալ ենթագլխի շրջանակներում նաև անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սուբյեկտիվ իրավունքի հասկացությանը, դրա հատկանիշներին, կառուցվածքին, սուբյեկտիվ իրավունքի և իրավաբանական պարտավորության հարաբերակցությանը:

Ժամանակակից իրավագիտության մեջ դեպքերի գերակշռող մեծամասնությունում կարելի է հանդիպել խորհրդային ավանդույթի հունի մեջ ձևակերպված՝ սուբյեկտիվ իրավունքի սահմանումները: Օրինակ՝ «Սուբյեկտիվ իրավունքն իրենից ներկայացնում է հնարավոր վարքագծի չափը (ազատության չափը), որը տրամադրված է լիազորված անձին իր շահի բավարարման համար»<sup>2</sup>: Կամ Վ. Ի. Աեուշինի մոտ կարելի է գտնել. «Սուբյեկտիվ իրավունքը՝ իրավունքի նորմում նախատեսված հնարավոր վարքագծի չափ է»<sup>3</sup>: Վ. Ցա. Այուբաշեցը մատնանշում է. «Սուբյեկտիվ իրավունքը իրավասու անձի համար նախատեսված՝ նրա շահերի բավարարման համար հնարավոր վարքագծի չափ է, որն ապահովված է այլ անձանց իրավաբանական պարտավորություններով»<sup>4</sup>:

Արդի ժամանակաշրջանի իրավագիտությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատման հարցում ընթացել է խորհրդային իրավաբանական մտքի ճանապարհով: Այն է՝ մի քանի տասնամյակ առաջ առաջադրված թեզերը. «Սուբյեկտիվ իրավունքը՝ օբյեկտիվ իրավունքով սահմանված սահմաններում հնարավոր վարքագծի չափն է» և «Սուբյեկտիվ իրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 129 2022

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Хохлова Е. М.** Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дисс.... канд. юрид. наук. Саратов, 2008.  
<sup>2</sup> Տե՛ս **Малиновский А. А.** Назначение субъективного права // Правоведение. 2006. № 4. ст. 222-30.  
<sup>3</sup> Տե՛ս Теория государства и права: учеб, пособие для вузов / под ред. **В. Д. Перевалова.** М.: Норма, 2007. ст. 222.  
<sup>4</sup> Տե՛ս Теория государства и права: учеб, пособие для вузов / под ред. **В. Я. Любашеца.** М.: МарТ, 2003. ст. 527.



վունքը ածանցյալ է օբյեկտիվ իրավունքից» պահպանել են իրենց գերիշխող դիրքը մինչ օրս: Ա. Գ. Բերեժնովը բացարձակապես չի գերազանցում, երբ անում է հետևյալ դատողությունը. «Դժվար է չնկատել, որ հայրենական իրավագիտության, դրա տեսամեթոդաբանական հիմքերի կարևոր առանձնահատկություն է դարձել իրավունքի տեսությունում, գիտական իրավագիտության մեջ ընդհանրապես այնպիսի հայացքների, պատկերացումների, համոզմունքների, ուսմունքների գերիշխանությունը, որի սկզբունքային և ընդհանուր գիծն է (ուղղակի կամ անուղղակի, սակայն այս կամ այլ կերպ) պրեգյունացումը, «իրավունքի» առաջացման և գոյության ճանաչումը՝ իբրև որոշակի օբյեկտիվորեն կանխորոշված բովանդակության և իմաստի, իբրև որոշակի օբյեկտիվ էություն»<sup>5</sup>:

Այսպիսով՝ հարկավոր է դիտարկել ժամանակակից իրավագիտության կողմից առաջարկվող սուբյեկտիվ իրավունքի սահմանումը:

Տեսաբանների մեծամասնությունը բացահայտում են հետաքրքրող հասկացությունը «չափի» կատեգորիայի միջոցով: Այդպիսի մոտեցման հիմքում ընկած է 1949 թվականին Ս. Ն. Բրատուսի կողմից առաջարկված՝ սուբյեկտիվ իրավունքի իբրև «անձի հնարավոր վարքագծի չափով ճանաչված ու ապահովված»<sup>6</sup>: Հարցի նկատմամբ այդպիսի հայացքն առաջացրել է առարկություններ Ս. Ֆ. Քեչեկյանի կողմից, ով նշում էր, որ «չափը՝ քանակական հասկացություն է, որը ենթադրում է տարբեր չափերի համաչափությունը: Մինչդեռ օրենքով ապահովված գործողության հնարավորությունները բավականաչափ բազմատեսակ են և լիովին անհամաչափ»<sup>7</sup>: Սակայն տվյալ առարկությունը կարելի է, իր հերթին, վիճարկել հետևյալ հիմքերով: Ինչպես ճիշտ էր նշում Յու. Կ. Տոլս-

տոյը, «հնարավոր վարքագծի չափի մասին խոսում է ոչ թե իրավունքի մեկ սուբյեկտին՝ մյուսի հետ համեմատելու համար, այլ այն սահմանները որոշելու համար, որոնցում լիազորվածը կարող է գործել»<sup>8</sup>:

«Սուբյեկտիվ իրավունք» հասկացության հետագա զարգացումն ընթանում էր դրա բովանդակության պարզաբանման ճանապարհով: Մասնավորապես, Ն. Գ. Ալեքսանդրովն առաջարկել է «չափ» (քանակական չափում) եզրույթի հետ մեկտեղ օգտագործել նաև «տեսակ» բառը (որակական չափում)<sup>9</sup>: Տվյալ կարծիքի վերաբերյալ առարկությունները հիմնվում են այն դրույթի վրա, որ «չափ» եզրույթն արդեն իսկ ենթադրում է ոչ միայն ենթադրյալ վարքագծի քանակական բնութագիրը, այլև դրա տեսակի մատնանշումը<sup>10</sup>: Ընդհանուր առմամբ ժամանակակից գրականության մեջ արտացոլված են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մոտեցումները:

«Սուբյեկտիվ իրավաբանական իրավունքը՝ լիազորվածին պատկանող նրա շահերի բավարարման նպատակներով թույլատրված վարքագծի չափը, որն ապահովված է այլ անձանց իրավաբանական պարտականություններով»<sup>11</sup>:

«Սուբյեկտիվ իրավունքը՝ տվյալ սուբյեկտի իրավունքն է, նրա հնարավոր վարքագծի տեսակն ու չափն է»<sup>12</sup>:

Հասկացության բովանդակության բացահայտումն անհրաժեշտաբար ենթադրում է այնպիսի հատկանշական գծերի մատնանշումը, որոնք թույլ են տալիս տարանջատել այն հարակից կատեգորիաներից: Ժամանակակից իրավագիտությունը մատնանշում է սուբյեկտիվ իրավունքի որոշակի հատկանիշները: Այդ նույն հատկանիշները միաժամանակ կոչվում են նաև սուբյեկտիվ իրավունքի առանձնացող որակների՝ օբյեկտիվ իրավունքի հետ համեմատ: Հար-

<sup>5</sup> Տե՛ս **Бережное А. Г.** К вопросу об «объективном» и «субъективном» в контексте теоретикометодологических проблем правовопонимания // Вести. Моек. гос. Ун-та. Сер. 11. Право. № 4: ст. 3.

<sup>6</sup> Տե՛ս **Братусь С. Н.** О соотношении гражданской правоспособности и субъективных гражданских прав // Советское государство и право. 1949. № 8: ст. 33.

<sup>7</sup> Տե՛ս **Кечекян С. Ф.** Правоотношения в социалистическом обществе. М.: Изд-во АН СССР, 1958: ст. 56.

<sup>8</sup> Տե՛ս **Толстой Ю. К.** К теории правоотношений. Л., 1959: ст. 41.

<sup>9</sup> Տե՛ս **Александров Н. Г.** Законность и правоотношения в советском обществе. М.: Госюриздат, 1955: ст. 110.

<sup>10</sup> Այդպիսի հայացքը հիմնված է չափի՝ իբրև քանակի ու որակի միասնության կատեգորիայի փոխափոխյալական ընկալման վրա:

<sup>11</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Проблемы теории права. В 2 т. Т. 1. Свердловск, 1972: ст. 304.

<sup>12</sup> Տե՛ս **Лазарев В. В.** Общая теория права и государства. М.: Юрист, 1994: ст. 360.

կավոր է դրանք ավելի մանրամասնորեն դիտարկել, քանի որ դա թույլ կտա ավելի խորը հասկանալ մեզ հետաքրքրող հարցի ընկալման հանդեպ ժամանակակից մոտեցումը:

Որպես իրավունքի տեսությունում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատման չափանիշ, որպես կանոն, կոչվում է՝ 1) իրավունքի պատկանելիությունը սուբյեկտին և 2) դրա կախվածությունը տվյալ սուբյեկտից:

Սուբյեկտին պատկանելիությունը հանդիպում է իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշ դեռևս XIX դարի իրավաբանական գրականության մեջ: Այդպես, օրինակ, Ն. Մ. Կորկունովը գրում էր. «Իրավաբանական հարաբերությունները կոչվում են իրավունք սուբյեկտիվ իմաստով, քանի որ իրավունքն ու պարտականությունը կազմում են սուբյեկտի պատկանելիությունը: Առանց սուբյեկտի դրանք գոյություն ունենալ չեն կարողանա... Ընդհակառակը, իրավաբանական նորմերը չեն գտնվում այդպիսի հարաբերության մեջ սուբյեկտի նկատմամբ... և ուստի կոչվում են իրավունք օբյեկտիվ իմաստով»<sup>13</sup>: Սեղմ ձևով սուբյեկտիվ իրավունքի երկու հատկանիշների մասին գաղափարը շատ ճիշտ արտահայտեց Ն. Ի. Մատուզովը. «Սուբյեկտիվը մեր դեպքում ոչ միայն սուբյեկտին պատկանողն է, այլև նրանից կախվածը, իսկ օբյեկտիվը՝ ոչ միայն սուբյեկտին չպատկանողը, այլև նրանից չկախվածը»<sup>14</sup>: Տվյալ դրույթը գրեթե բառացիորեն վերարտադրում են նաև «սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի ժամանակակից հետազոտողները<sup>15</sup>: Այսպիսով՝ սուբյեկտին պատկանելիությունն ու սուբյեկտից կախվածությունը դիտարկվում են իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշներ:

Հարկավոր է դիտարկել տվյալ բնութագրերն ավելի մանրամասնորեն: Սկզբի համար անհրաժեշտ է անցկացնել վերոնշյալ թեզի համեմատությունը քաղաքացիական իրավունքից սեփականության ինստիտուտի հետ: Պատկանելիությունը որոշակի իմաստով համանման է սեփականության իրավունքի առկայությանը, իսկ կախվածությունը՝ իրի գտնվելուն որոշակի

անձի տիրապետության ոլորտում, դրա իրավաբանական ճակատագիր կանխորոշելու հնարավորությանը: Դիտարկելով ավելի առաջ՝ կարելի է նկատել մի հետաքրքիր հանգամանք. ՌԴ-ի քաղաքացիական օրենսգրքը, ուղղակիորեն չլուծելով սեփականության իրավունքի մասին հարաբերակցությունը և, եթե այդպես կարելի է արտահայտվել, սուբյեկտից՝ իրի *կախվածությունը*, այնուամենայնիվ, անուղղակիորեն արտահայտվել է դրա վերաբերյալ: Այն է՝ սուբյեկտի անձնական տիրապետության ոլորտում իրի գտնվելու փաստը, այն տիրապետելու հնարավորության փաստը (ըստ էության կախվածությունը) կանխորոշում են սեփականության իրավունքի առկայության փաստը: Այդ մասին, մասնավորապես, վկայում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդ. 172-ը «Ձեռքբերելու» հանգամանքը, ըստ որի իրին *de facto* տիրապետելը վերջին հաշվով կանխորոշում է այն *de jure* սուբյեկտի նկատմամբ ամրապնդելը<sup>16</sup>: Ամրապնդվածության ճանաչումը կրում է ածանցյալ բնույթ՝ իրի ճակատագիրը կանխորոշելու նախկինում գոյություն ունեցած հնարավորությունից:

Դրանում նախատեսված է տրամադրել սեփականատիրոջը սեփականության պաշտպանության իրավունքը՝ անկախ նրանից, թե արդյոք տվյալ անձը իրի սեփականատերն է, թե ոչ:

Եթե փորձենք կիրառել տվյալ եզրակացությունները «սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի նկատմամբ, կստացվի հետևյալը՝ սուբյեկտիվ իրավունքի պատկանելիության առանձնացումը սուբյեկտին քիչ բան է տալիս որպես առանձնացնող հատկանիշ: Ոչ թե սուբյեկտին՝ իրավունքի պատկանելիությունը ծնում է սուբյեկտիվ իրավունք, ավելի շուտ հենց սուբյեկտիվ իրավունքի ձևավորված փաստը թույլ է տալիս սուբյեկտին դրա պատկանելու մասին: Բացի այդ, եթե սուբյեկտին պատկանելիությունը ճանաչվում է իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշ, տրամաբանորեն ճիշտ կլիներ տալ հետևյալ հարցերը՝ ինչ է սուբյեկտին պատկանելիությունը և ինչո՞ւմ է այն դրսևորվում: Հա-

<sup>13</sup> Տե՛ս **Коркунов Н. М.** Лекции по общей теории права. СПб.: Юридический центр Пресс, 2004: ст. 155.  
<sup>14</sup> Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: ст. 23.  
<sup>15</sup> Տե՛ս **Хохлова Е М.** Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дисс... канд. юрид. наук, Саратов, 2008.  
<sup>16</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ № 17 (50) 10 օգոստոսի 1998:

վանաբար, այդ «սեփականին» ինչ-որ կերպ տիրապետելու, դրա վրա ազդելու հնարավորության մեջ: Որևէ երևույթի վրա ազդելու բուն փաստն արդեն մատնանշում է այն, որ այդ երևույթը գտնվում է համապատասխան սուբյեկտի տիրապետության ոլորտում: Այդ առումով արդարացիորեն նշում էր Վ. Ն. Դուրդենեվսկին՝ «Իրավունքի սուբյեկտի և սուբյեկտիվ իրավունքի հասկացությունները կարծես թե երկու միմյանց մեջ անխզելիորեն ներծուլված օղակներ են, և թեպետ ընդհանուր իրավական տեսության դասագրքերում առաջին հասկացությունը սովորաբար համարվում է նախարավական, որը նախորդում է երկրորդին, կարելի է մտածել, որ հակառակ ազդեցությունը ոչ պակաս ուժեղ է և հասկացությունների օղակների հակառակ դիրքը ոչ պակաս թույլատրելի է»<sup>17</sup>: Հենց այդ պատճառով Ն. Ի. Մատուզովի կողմից *առանձնացվող սուբյեկտիվ իրավունքի չափանիշները* (սուբյեկտին պատկանելը կամ չպատկանելը, նրանից կախված լինելը կամ չլինելը) նպատակահարմար չէ դիտարկել իբրև միմյանց հավասարազոր, քանի որ դրանցից մեկը (պատկանելիություն) բխում է մյուսից (կախվածություն), իսկ, ավելի ճիշտ, մեկն ուղեկցում է մյուսին:

Վ. Ն. Պրոտասովը տվյալ կապակցությամբ նկատում է, որ եթե չլինի կոնկրետ սուբյեկտ, ապա չի կարելի խոսք լինել սուբյեկտիվ իրավունքի մասին, քանի որ այդպիսի «իրավահարաբերությունն ըստ բովանդակության ոչնչով չի տարբերվելու իրավունքների ու պարտականությունների վերացական կապից, որը նախատեսված է իրավական նորմերով»<sup>18</sup>, ուստի և չի լինելու իրավունք սուբյեկտիվ իմաստով: Մեկ այլ աշխատության մեջ հեղինակը գրում է. «...սուբյեկտիվ իրավունքն այստեղ կոչվում է «սուբյեկտիվ» մի պարզ պատճառով՝ այն մի բան է, որը պատկանում է *սուբյեկտին*»<sup>19</sup>: Սակայն այդ ամենից բացարձակապես չի հետևում, որ իրավունքներով ու պարտականություններով օժտված՝ սուբյեկտի կերպարի միայն առկայությունը բավարար է սուբյեկտիվ իրավունքի առաջացման մասին խոսք տանելու համար: Ավելի շուտ կարևոր է հենց սուբյեկտի երկակիությունը, իր կողմից իր սուբյեկտիվ իրավունքի իրական օգտագործումը, այլ ոչ թե իրավահարաբերության մեջ իբրև ստատիստ կամ «փայտյա կուռք» առկայությունը: Հենց իրավահարաբերության դինամիկան, դրա կենսունակությունը թույլ են տալիս ասել, որ գոյություն ունի սուբյեկտ՝ իր սուբյեկտիվ իրավունքով: Դա բացարձակապես չի բացառում այնպիսի դեպքեր, երբ սուբյեկտն իրականում չի իրագործում իրեն պատկանող իրավունքը: Կարևորը դա չէ, նա պետք է իրական հնարավորություն ունենա «տիրապետել» իր իրավունքին, որոշել, թե որ հունի մեջ ուղղի իր մոտ առկա հնարավորությունները: Ուստի հարկավոր է ևս մեկ անգամ նշել, նպատակահարմար չէ դիտարկել սուբյեկտիվ իրավունքի պատկանելիությունը սուբյեկտին՝ իբրև հետաքրքրող կատեգորիայի առանձնացման ինքնուրույն չափանիշ:

Անհրաժեշտ է դիտարկել սուբյեկտիվ իրավունքի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է սուբյեկտից կախված լինելը: Ինչ են հասկանում դրա տակ: Վ. Ն. Խորոպանյուկը նշում է. «Սուբյեկտին պատկանող իրավունքը կոչվում է սուբյեկտիվ իրավունք այն պատճառով, որ սուբյեկտի կամքից է կախված, ինչպես կառավարել այն»<sup>20</sup>: Առաջին հայացքից այդ սահմանումը հիշեցնում է Բ. Վինդշեյդի կամային տեսությունը: Սակայն դա այնքան էլ այդպես չէ: Ժամանակակից իրավունքի տեսությունը դիտարկում է կամքն արդեն ոչ թե իբրև էություն, ոչ թե սուբյեկտիվ իրավունքի լրացում, այլ միայն իբրև գործիքային բաղադրամաս: Եթե նախկինում կամքը պետք էր սուբյեկտիվ իրավունքի՝ որպես այդպիսի առաջացման հնարավորության համար, ապա այժմ այն դիտարկվում է գործիքային դիրքերից՝ կամքը պետք է սուբյեկտին նրա համար, որպեսզի գիտակցված կամային որոշմամբ ընտրի վարքագծի տարբերակը: Կամքն այստեղ ոչ թե դիտարկվում է իբրև սուբյեկտիվ իրավունքի էական լրացում, այն ան-

<sup>17</sup> Տե՛ս **Дурденевский В. Н.** Субъективное право и его основное разделение // Правоведение. 1994. № 3: ст. 78-95.

<sup>18</sup> Տե՛ս **Протасов В. Н.** Правоотношение как система. М.: Юридическая литература, 1991: ст. 113.

<sup>19</sup> Տե՛ս **Протасов В. Н.** Что и как регулирует право: учеб. пособие. М.: Юристъ., 1995: ст. 5.

<sup>20</sup> Տե՛ս **Хропанюк В. Н.** Теория государства и права: учебник для вузов. М.: Отечество, 1993. ст. 221.

<sup>21</sup> Տե՛ս **Матузов Н. И.** К делению права на объективное и субъективное // Правоведение. 1971. № 2: ст. 103-111.

հրաժեշտ է միայն սուբյեկտիվ իրավունքի իրականացման համար: Այդ կապակցությամբ Ն.Ի. Մատուզովը նկատում էր. ««Օբյեկտիվ իրավունք» եզրույթը, հետևաբար, նույնպես պատահական չէ, այն արտացոլում է իրավունքի օբյեկտիվությունը, այսինքն դրա անկախությունն առանձին անհատի կամարտահայտությունից»<sup>21</sup>: Տվյալ դիրքին են միանում նաև այլ գիտնականները, օրինակ, Ե.Մ. Խոխլովան գրում է, որ տվյալ տեսակետի ճշմարտությունը «ամեն օր հաստատում է փորձը, իրական կյանքը»<sup>22</sup>: «Օգտագործել թե՛ չօգտագործել սեփական անձնական իրավունքը,- գրում էր Վ.Ն. Կուդրյավցևը,- բուն սուբյեկտի գործն է»<sup>23</sup>:

Սակայն պնդումն այն մասին, որ սուբյեկտիվ իրավունքի տարբերությունը (դրա սուբյեկտիվությունը) օբյեկտիվից առաջինի կամային օգտագործման մեջ է, մեթոդաբանորեն վիճելի է: Երկուսը նրանում չէ, որ օբյեկտիվ իրավունքը չի կարելի «օգտագործել», այլ նրանում է, որ ենթադրվող իմաստով դա սկզբունքորեն չի կարելի անել: Տվյալ դեպքում սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի տարանջատման համար առաջարկվող չափանիշերը (կախվածությունը կամ անկախությունը կամարտահայտությունից, օգտագործման հնարավորությունը), չեն արտացոլում այդ հասկացությունների փոխգործության դիալեկտիկան: Այդպիսի մոտեցման պարագայում սկզբից սահմանվում է այն հատկանիշը, որի հիման վրա անցկացվելու է եզրույթների բաժանում, և հետո միայն դրա կիրառման տիրույթը՝ սուբյեկտիվ ու օբյեկտիվ իրավունքը: Իսկ այն, որ տվյալ չափանիշը իմանենտ կերպով հատուկ չէ այդպիսի տիրույթին, ինչպիսին է օբյեկտիվ իրավունքը, արդեն ի նկատի չի առնվում: Դա ասես թե ասված լինի, որ երկաթը տարբերվում է փայտից նրանով, որ այն փայտյա չէ: Երկաթի բնութագրի համար (ոչ-) փայտայնության հատկանիշը ներմուծելը նշանակում է անտեսել բուն երկաթի սեփական էական բնութագրերը և, գլխավորը, փորձել բնութագրել երկույթը դրան իմանենտ կերպով ոչ հատուկ եզրաբանության

օգնությամբ, ինչը համարժեք է շաշկաների լեզվով շախմատի հանդիպումը նկարագրելու փորձին՝ հիմնավորելով տվյալ արարքը նրանով, որ երկու դեպքերում էլ հարկ է լինում գործունենալ խաղի հետ: Այսպիսով՝ սուբյեկտիվ իրավունքի սուբյեկտիվության դուրս բերումն օբյեկտիվի հետ համադրելու միջոցով՝ կամային օգտագործման չափանիշի հիման վրա, վիճելի է թվում:

Վերոնշյալ հեղինակները, բացահայտելով սուբյեկտի կամքից սուբյեկտիվ իրավունքի կախվածությունը՝ այդպիսի կախվածության տակ հասկանում են նաև հետևյալը՝ սուբյեկտի չկապվածությունը վարքագծի հստակ ձևերով իր իրավունքի իրագործման ժամանակ: Ն. Պ. Պրոտասովը հետևյալ կերպ էր զարգացնում այս միտքը. «Իրավունքի (*սուբյեկտիվ իրավունքի*)՝ կախված է լիազորվածի կամքից, իսկ պարտավոր անձի կամքն այդ առումով խիստ դետերմինացված է»<sup>24</sup>: Այսինքն՝ այդպիսի կարծիքի համաձայն՝ պարտավոր սուբյեկտը խիստ շրջանակների մեջ է դրված, ինչը չի կարելի ասել սուբյեկտիվ իրավունքի մասին՝ Վ. Ն. Պրոտասովի արտահայտությունից բխում է, որ իրավունքի սուբյեկտի վարքագիծը խստորեն չի կարգավորվում և կախված է նրա կամքից:

Սուբյեկտիվ իրավունքի՝ իբրև սուբյեկտի կամքից կախվածի բնութագիրը թույլ է տալիս բազմաթիվ հեղինակներին բնութագրել այդ իրավունքն իբրև դիսպոզիտիվ:

Ավանդաբար սուբյեկտիվ իրավունքի կառուցվածքում առանձնացնում են երեք իրավասություններ<sup>25</sup>.

**1. Սեփական դրական գործողությունների իրավունք:** Այն ենթադրում է սուբյեկտիվ իրավունքի բուն կրողի ակտիվությունը: Ի տարբերություն պահանջի իրավունքից՝ տվյալ իրավասությունը ենթադրում է «սեփական», այլ ոչ թե «ուրիշի» գործողությունների իրավունք,

**2. Պահանջի իրավունք (հակառակ կողմից իր վրա դրված իրավաբանական պարտականության կախարման կամ պահպան-**

<sup>22</sup> Տե՛ս **Хохлова Е. М.** Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дис...канд. юрид. наук. Саратов, 2008: № 61:

<sup>23</sup> Տե՛ս **Кудрявцев В. Н.** Право и поведение. М., 1987: ст. 41.

<sup>24</sup> Տե՛ս **Протасов В. Н.** Что и как регулирует право: учеб, пособие. М.: Юристы, 1995: ст. 5.

<sup>25</sup> Տե՛ս **Алексеев С. С.** Проблемы теории права. В 2 т. Т. 1. Свердловск, 1972. ст. 308.

**ման իրավունք):** Հետաքրքիր է տվյալ տեսական հասկացության էվոլյուցիան, «պահանջը» տվյալ դեպքում նյութական իրավունքի հասկացությունն է: Իսկ հռոմեական իրավունքում, որտեղից փոխառվել է տվյալ կառույցը, պահանջը, ընդհակառակը, պատկերացվում էր ոչ թե նյութական համատեքստում, այլ առաջին հերթին ընթացակարգային՝ հայցային ձևերի լույսի ներքո: Եթե գոյություն չունեն հայցի համապատասխան ձևը (action), խոսք չկար նաև պահանջների մասին<sup>26</sup>:

**3. Պեղության կողմից պաշտպանության իրավունք (հավակնություն):** Այն ենթադրում է սուբյեկտի մոտ մշտապես առկա հնարավորություն դիմելու պետությանը խախտված սուբյեկտիվ իրավունքը պաշտպանելու համար: Պետությունը հանդես է գալիս իբրև սուբյեկտիվ իրավունքի ապահովվածության երաշխավոր՝ պետական հարկադրանքի ուժով: Ընդ որում, այդ ուժի կիրառման անհրաժեշտությունը կարող է նաև չառաջանալ՝ այստեղ կարևոր է ինքնին պաշտպանվածության որակը:



<sup>26</sup> «Դա Բ. Վինդշեյդի ծառայությունն է, որ պահանջի ժամանակակից ըմբռնումը հաղթահարել է հին «հայցային» սահմանները», - գրում էր Բ. Ռեյնհարդը. Reinhard B. Allgemeiner Teil des Bürgerlichen Gesctzbuchs. Hamburg. 2006. Էջ 120:

**ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ**

Արդարադատության պետական խորհրդական,  
ՀՀ վաստակավոր իրավաբան,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

**ՄԱՐԻԱՄ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**

ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԴՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՀԱՏՎԱՆԻՇ**

Աշխատանքում անդրադարձ է կատարվել հիմնահարցի առնչությամբ հայտնի իրավագետների կարծիքներին, ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի իրավակարգավորումներին, ՄԻԵԴ-ի դիրքորոշմանը, ՀՀ և ՌԴ դատական բարձրագույն ատյանների որոշումներին, ՀՀ, ՌԴ և այլ երկրների քրեական օրենսգրքերով տրված իրավակարգավորումներին՝ նպատակ ունենալով վերհանել առանձին դաժանությամբ կատարված սպանության որակման առանձնահատկություններին առնչվող հիմնախնդիրները:

Մասնավորապես, հեղինակները քննարկման առարկա են դարձրել ինչպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայում ամրագրված «խոշտանգում» հասկացության առարկայական, իմաստային բովանդակությունը, այնպես էլ ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերում դրանց ամրագրումները, այդ թվում՝ «խոշտանգում» և «ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» վերտառությամբ հոդվածներում ամրագրված հանցագործությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները և այդպիսիք քննարկել որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի հատկանիշներ, անելով օրենսդրության կատարելագործմանն ուղղված գիտական նորույթ պարունակող մի շարք արժեքավոր առաջարկություններ, հետևություններ և եզրակացություններ, մասնավորապես, նկատելով, որ խոշտանգումն ընկալվել և ընկալվում է շատ ավելի լայն և խորն իմաստով, քան հատուկ սուբյեկտի կողմից այն թույլ տալու կոնվենցիոն և քրեական օրենսգրքում ամրագրված սահմանափակ դեպքերը, հեղինակները եզրահանգել են, որ **խոշտանգման հասկացության մեջ առաջնայինը ոչ թե հանցագործության սուբյեկտն է կամ նպատակը, այլ՝ արարքը, նրա բնույթը, հանգամանքները, կատարման եղանակը:** Հետևաբար, **ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը կոնկրետ եղանակով և կոնկրետ իրավիճակում օբյեկտիվ կողմից իր մեջ կրում է խոշտանգման հատկանիշ, անկախ հոդվածի վերտառությունից, այն քրեական օրենսգրքի այս կամ այն գլխում կամ հոդվածում ամրագրված լինելուց և կոնկրետ դեպքում իր մեջ կրում է առանձին դաժանության դրսևորում և որի պայմաններում կատարված սպանությունը ենթակա է որակման որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն:**

**Բանալի բառեր.** սպանություն, առանձին դաժանություն, խոշտանգում, անարգանք, տանջանք, տառապանք, ծաղրոծանակ, սադիզմ, դիակի ոչնչացում, մասնատում:

**АРАМ ТАМАЗЯН**

Государственный советник юстиции,  
Заслуженный юрист РА,  
Доктор юридических наук

**МАРИАМ БАГДАСАРЯН**

Соискатель кафедры уголовного права и  
уголовно-процессуального права Института права и политики РАУ

**ПЫТКА - КАК ПРИЗНАК ОБЪЕКТИВНОЙ СТОРОНЫ УБИЙСТВА, СОВЕРШЕННОГО С ОСОБОЙ ЖЕСТОКОСТЬЮ**

В работе обращались к мнениям известных юристов по поводу проблемы, правовым регулированием “Конвенции против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания” ООН, позиции ЕСПЧ, постановлением высших судебных инстанций РА, РФ и других стран, правовым регулированием, представленным уголовными кодексами РА, РФ и других стран в целях выявления проблем, касающихся особенностей квалификации убийства, совершенного с особой жестокостью.

В частности, авторы сделали предметом рассмотрения как предметное, смысловое содержание понятия “пытка”, закрепленного в “Конвенции против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания” ООН, так и их закрепления в уголовных кодексах РА и РФ, в том числе объективные и субъективные признаки преступлений, закрепленных в статьях под заголовками “пытка” и “причинение сильной физической боли или сильного душевного страдания”, и рассмотрели таковые как признаки объективной стороны убийства, совершенного с особой жестокостью, сделав ряд направленных на совершенствование законодательства ценных предложений, выводов и заключений, содержащих научную новизну, в частности, отметив, что пытка воспринималась и воспринимается в намного более широком и глубоком смысле, чем ограниченные случаи его допущения особым субъектом, закрепленные в конвенциях и уголовных кодексах, авторы пришли к выводу, что **в понятии пытка главным является не субъект или цель, а деяние, его характер, обстоятельства, способ совершения.** Следовательно, **причинение сильной физической боли или сильного душевного страдания конкретным способом и в конкретной ситуации с объективной стороны включает в себя признак пытки, вне зависимости от заголовка статьи, его закрепления в той или иной главе или статье уголовного кодекса и в конкретном случае несет в себе проявление особой жестокости, и убийство, совершенное в условиях такового, подлежит квалификации как убийство, совершенное с особой жестокостью.**

**Ключевые слова:** убийство, особая жестокость, пытка, надругательство, мучение, страдание, издевательство, садизм, уничтожение, расчленение трупа.

**ARAM TAMAZIAN**

State Councillor of Justice.  
Honored Lawyer of the Republic of Armenia,  
Doctor of Law

**MARIAM BAGHDASARYAN**

Applicant for the Department of Criminal Law and  
Criminal Procedure Law of the Institute of Law and Politics of RAU

**REGARDING THE ARTICLE TITLED “TORTURE AS A SIGN OF THE OBJECTIVE SIDE OF A MURDER COMMITTED WITH PARTICULAR CRUELTY”**

In the work, the opinions of well-known lawyers on the problem, the legal regulations of the “Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment and Punishment” of the UN, the position of the ECHR, the decisions of the highest courts of the RA, the Russian Federation and other countries, the legal regulations presented by the criminal codes of the RA, the Russian Federation and other countries in order to identify the problems concerning the characteristics of the qualification of a murder committed with particular cruelty.

In particular, the authors considered both the substantive, semantic content of the concept of “torture”, enshrined in the UN Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, and their consolidation in the criminal codes of the Republic of Armenia and the Russian Federation, including objective and subjective signs of crimes enshrined in the articles under the headings “torture” and “infliction of severe physical pain or severe mental suffering”, and considered these as signs of the objective side of the murder committed with extreme cruelty, having made a number of valuable proposals aimed at improving legislation, conclusions and conclusions containing scientific novelty, in particular, noting that torture was perceived and is perceived in a much broader and deeper sense than the limited cases of its admission by a special subject enshrined in conventions and criminal codes, the authors concluded that in the concept of torture, the main is not a subject or a goal, but an act, its nature, circumstances, and method of commission. Consequently, the infliction of severe physical pain or severe mental suffering in a specific way and in a specific situation from the objective side includes a sign of torture, regardless of the title of the article, its consolidation in a particular chapter or article of the criminal Code and in a particular case carries a manifestation of particular cruelty, and murder committed under such conditions, is subject to qualification as a murder committed with particular cruelty.

**Keywords:** murder, particular cruelty, torture, abuse, torment, suffering, mockery, sadism, destruction, dismemberment of a corpse.

\* \* \*

**ԱՐՄԵՆ ԴՈՒԿԱՍՅԱԼ**

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԷՔՏՐԵՄԻՉՄԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածում հեղինակն անդրադառնում է էքստրեմիզմի (ծայրահեղականության) հասկացությանը՝ այն բնորոշելով որպես համընդհանուր ճանաչում գտած ստանդարտներից կամ նորմաներից զգալիորեն շեղվող գործունեություն: Այդ «նորմաները» կամ «ստանդարտները» ամրագրվել են միջազգային մի շարք իրավական փաստաթղթերում (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և այլն), բնականաբար, ներառվել նաև ՀՀ Սահմանադրությունում:

Անդրադառնալով էքստրեմիզմի համար իրավաբանական պատասխանատվության խնդրին՝ հեղինակը գտնում է, որ ՀՀ օրենսդիրը, ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, չի օգտագործել վարչաիրավական ներգործության հնարավորությունը, ապավինելով միայն քրեաիրավական գործիքակազմին, ինչը թույլ չի տվել լիարժեք և համակարգված օգտագործել ծայրահեղականության դեմ պայքարում իրավական պրեվենցիայի ողջ պոտենցիալը: ՀՀ քրեական գործող օրենսգրքում ծայրահեղականության հանցավոր դրսևորումները ամրագրվել են երեք ձևով՝

ա/ նախատեսվել են առանձին 7 հանցակազմերի դիսպոզիցիաներում, որոնցում ուղղակիորեն մատնանշվում են ծայրահեղական դրսևորումները,

բ/ նախատեսվել են ՀՀ քրեական օրենսգրքի 63 հոդվածում որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ՝ հանցանքի կատարումը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության և այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով,

գ/ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթները ևս 6 հանցակազմերում նախատեսվել են որպես որակյալ հատկանիշներ:

Հաշվի առնելով ծայրահեղականության ներկայիս կազմակերպվածությունը, համակարգվածությունը՝ հեղինակն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսել առանձին հոդված՝ ծայրահեղական գործունեության առավել վտանգավոր տեսակների կազմակերպման և ղեկավարման համար: Բացի այդ, հեղինակը

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 129 2022

գտնում է, որ վաղուց է հասունացել «Ծայրահեղականության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչի բացակայությունը ներկայումս լուրջ խոչընդոտ է այս բացասական երևույթի քրեաբանական կանխարգելման աշխատանքները Հայաստանում պատշաճ կերպով կազմակերպելու համար: Նշված օրենսդրությունը, թերևս, կսահմաններ ոչ միայն ծայրահեղական գործունեության բնորոշումը, նախականիսիչ միջոցառումների շրջանակը, այլև դրանք իրականացնող և վերահսկող սուբյեկտների գործառույթները, ծայրահեղական ուղղվածություն ունեցող այս կամ այն կազմակերպության գործունեության կասեցման ընթացակարգը և այլ իրավակարգավորումներ:

**Բանալի բառեր.** էքստրեմիզմ, խտրականություն, նացիոնալիզմ, նացիզմ, ֆաշիզմ, քսենոֆոբիա, էթնոֆոբիա, սեպարատիզմ, ռադիկալիզմ, ֆունդամենտալիզմ, ահաբեկչություն, ցեղասպանություն:

**АРМЕН ГУКАСЯН**

Доцент Кафедры уголовного права и уголовного процесса Института Права и политики Российско-Армянского (Славянского) университета, кандидат юридических наук, доцент

**ПОНЯТИЕ ЭКСТРЕМИЗМА И ПРАВОВЫЕ МЕХАНИЗМЫ БОРЬБЫ С НИМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В статье автор обращается к понятию экстремизм, характеризуя его как деятельность, существенно отклоняющаяся от общепризнанных стандартов или норм. Эти «нормы» или «стандарты» закреплены в ряде международно-правовых документов (Всеобщая декларация прав человека, Международный пакт о гражданских и политических правах и др., разумеется, включены также в Конституцию РА.

Касаясь проблемы юридической ответственности за экстремизм, автор полагает, что законодатель РА, в отличие от ряда стран СНГ, не использовал возможность административно-правового воздействия, опираясь только на инструментарий уголовного права, что, в свою очередь, не позволил полноценно и системно использовать весь потенциал правовой превенции в борьбе с экстремизмом. В Уголовном кодексе РА уголовные проявления экстремизма закреплены в трех формах:

- а) предусмотрены в диспозициях 7 составов преступлений, в которых прямо описаны экстремистские проявления;
- б) предусмотрены в статье 63 Уголовного кодекса РА как отягчающие ответственность и наказание обстоятельства: совершение преступления по мотивам национальной, расовой или религиозной ненависти, религиозного фанатизма, из мести за правомерные действия других лиц;
- в) мотивы национальной, расовой или религиозной ненависти, религиозного фанатизма рассмотрены как квалифицирующие признаки в еще 6 составах преступлений.

Учитывая организованность и системность проявления современного экстремизма, автор предлагает предусмотреть в особенной части Уголовного кодекса РА отдельную статью, касающуюся организации и ведения наиболее опасных видов экстремистской деятельности. Кроме того, по мнению автора, давно назрела необходимость принятия Закона РА «О противодействии экстремизму» и соответствующих подзаконных актов, отсутствие которых в настоящее время является серьезным препятствием для должной организации криминологической профилактики этого негативного явления в Армении. Данное законодательство, пожалуй, определяло бы не только понятие экстремистской деятельности, рамки превентивных мер, но и функции субъектов, осуществляющих и контролирующих эту деятельность, порядок приостановления деятельности той или иной организации экстремистской направленности, и другие правовые регламентации.

**Ключевые слова:** Экстремизм, дискриминация, национализм, нацизм, фашизм, ксенофобия, этнофобия, сепаратизм, радикализм, фундаментализм, терроризм, геноцид

**ARMEN GHUKASYAN**

Associate professor, PhD in Law at the Chair of Criminal Law and Criminal Procedure of the institution of Law and Political Sciences of Russian-Armenian (Slavonic) university

**THE CONCEPT OF EXTREMISM AND LEGAL MECHANISMS TO COMBAT IT IN THE REPUBLIC OF ARMENIA**

In the article, the author refers to the concept of extremism, defining it as an activity that deviates significantly from universally recognized standards or norms. These “norms” or “standards” are enshrined in several international legal documents (the Universal Declaration of Human Rights, the International Convention on Civil Law and Political Rights, etc.) and, of course, they are included in the Constitution of RA.

Referring to the legal liability of extremism, the author considers that the legislator of RA, unlike several CIS countries, has not used opportunity of administrative-legal influence, relying on the criminal-legal tools, which did not allow to use the whole potential of countering extremism. Moreover, the criminal manifestations of extremism are fixed in the acting Criminal Code of RA in three ways:

- a. It has been foreseen in 7 crime dispositions where extremist manifestations are pointed out,
- b. It has been foreseen liability and aggravating circumstances in the article 63 of Criminal Code of RA: crime is committed with a motivation of revenge for national, racial or religious hatred, religious fanaticism and lawful actions of other persons.
- c. The motives of national, racial or religious hatred, religious fanaticism are envisaged as qualitative feature in the mentioned above 6 crime dispositions.



